



Հ.Ա.Ը.Ս. 1918-2018

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՆԵՏԻԼԵՆ ՅԱԴՈՒՄԱՆ ԱՄԻՈՒՆ

100

HOMENETMEN

2018

ՍՈՒՐԻՎ

Օգոստոս 08

Սեպտեմբեր 09

Հոկտեմբեր 10

Նոյեմբեր 11

Դեկտեմբեր 12

Յունիս 07

Մարտ 03

Մայիս 05

Յունիս 01

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Գ. ԼԻԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչությունը իր քառամեայ նստաշրջանի (2015-2019) Գ. լիագումարի նիստերը գումարեց 2-4 Դեկտեմբեր 2017-ին, Երևանի մեջ:

Լիագումարը կեդրոնացաւ միութեան 100-ամեակի կեդրոնական ձեռնարկներու մանրամասնութիւններուն վրայ, որոնք տեղի պիտի ունենան 19-29 Յուլիս 2018-ին, Երևանի մեջ, Հայաստան: Ուրախութեամբ անդրադարձաւ, որ միութեան 100-ամեակի տօնակատարութեան կեդրոնական ձեռնարկին նախագահութիւնը ստանձնած է Հայաստանի Հանրապետութեան նախագահ Տիար Սերժ Սարգսեան, իսկ հովանաւորութիւնը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: Սոյն ձեռնարկներուն համար արդէն իսկ յառաջացած են անհրաժեշտ յանձնախումբեր, որոնցմէ իւրաքանչիւրը իր ծիրին մեջ արդէն իսկ աշխատանքի լծուած է եւ ծրագիրներ կազմած՝ օժանդակելու 100-ամեակի աշխատանքներու կազմակերպման եւ գործադրութեան:

Միութեան 100-ամեակի ծրագիրներն են.-

● Երեք յիշարժան վայրերէ փոխադրուած ջահերով ջահավառում Ծիծեռնակաբերդի մեջ, ապա՝ ծառատընկում:

● Դրօշակի բացման արարողութիւն Ծիծեռնակաբերդի մեջ:

● Միութեան 100-ամեակին նուիրուած՝ համա-Հ.Մ.-



Ը.Մ.ական 11-րդ բանակում:

● Եռաբլուր այցելութիւն եւ նընջեցեալ Հ.Մ.Ը.Մ.ականներու հոգեհանգիստ:

● Միութեան հիմնադիրներու քանդակներու բացում:

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումի մասնակիցներուն կողմէ պաշտօնական տողանցք «Հանրապետութեան» հրապարակը:

● Գիտաժողով:

● Յուրանահանդէս:

● «Վահան Չերագ»ի արձանի բացում Կիւմրիի մեջ:

● Նախկին խմբապետներու համախմբում:

● Պաշտօնական հանդիսութիւն Օփերայի մեջ:

● Միութեան թանգարանի յուշամատենանի հրատարակութիւն:

● Յաղթանակի ճաշկերոյթ:

Միութեան 100-ամեակի զանազան բնոյթով տօնակատարութիւններ պիտի կատարուին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Երջանային եւ Մեկուսի շրջաններուն մեջ, 2018 տարւան ընթացքին, իսկ գլխաւոր ձեռնարկները՝ Նոյեմբեր 2018-ին: Որոշ շրջաններ արդէն իսկ սկսած են այս ուղութեամբ ծրագիրներ մշակել:

Երևան, 9 Դեկտեմբեր 2017

Հ.Մ.Ը.Մ.Ի

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեսնել Գ. կողք

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Շաբաթ, 11 Նոյեմբեր 2017-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատւիրակութիւն մը, գլխաւորութեամբ ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի, այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին:

Կեդրոնական Վարչութիւնը շնորհակալութիւն յայտնեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին ցուցաբերած երկարամեայ աջակցութեան եւ վստահութեան համար: Այցելութիւնը առիթ մը եղաւ նաեւ զեկուցելու Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին առնչուած ծրագիրներուն մասին՝ խնդրելով Արամ



Ա. Կաթողիկոսին օրհնութիւնն ու հովանաւորութիւնը:

Արամ Ա. Կաթողիկոս բարձր գնահատեց աւելի քան մէկ դարեայ գործունէութիւն ծաւալած միութեան երթը՝ շեշտելով, որ Հ.Մ.Ը.Մ.ը ո՛չ միայն մարմնակրթական միութիւն մըն է, այլեւ՝ սփիւռքեան իրականութեան մէջ Հայկական ինքնութիւնը ամրապնդող տարածք մըն է:

Աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատւիրակութիւնը Արամ Ա. Կաթողիկոսին յանձնեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն յուշանուէրը:



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
Մէկ վայրկեան յոտնկա՛յս	<b>2-3</b>
ՊԱՏԳԱՍ	<b>4-8</b>
ՀԱՐՅԱԶՐՈՅՑ	<b>9-11</b>
ԱՆԴՐԱԴԱՐՁ	<b>12-14</b>
ՄԱՍՆԱԾԻԴԷ ՄԱՍՆԱԾԻԴ	<b>15-70</b>
ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ	<b>71-72</b>
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	<b>72</b>



**«ՄԱՐԶԻԿ»Ի  
ՅԱԶՈՐԳ ԹԻՒՈՎ**

- ◆ Հ.Մ.Ը.Մ.ի նոր միատար Վանքավերի մէջ
- ◆ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիղի անդամական 92-րդ ընդհանուր ժողովը
- ◆ Հ.Մ.Ը.Մ.ի Փասատինայի մասնաճիղի հիմնադրութեան 40-ամեակի տօնակատարութիւն
- ◆ Եղբ. Յակոբ Համանեանի յիշատակին



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

**Խմբագիր:** Վիգէն Աւագեան ([vicken.avakian@homenetmen.org](mailto:vicken.avakian@homenetmen.org))

**Խմբագրական կազմ:** Գրիգորիս Պողարեան, Մարո Բէշիշեան, Սեւան Նազարեան, Տիրան Ծահինեան:

**Վարչական կազմ:** Պարթիկ Կիլպէնկեան, Արօ Մոսիկեան, Սիրվա Սադրեան, Յարութ Ալանմանեան, Նազօ Հապիպեան, Ռիթա Օդուլեան, Արլին Ծամնասեան:

**Էջադրում եւ ընդհանուր ձեւադրում:** Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյանեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէբեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

**Քաժանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու քաժանորդներու: Տարեկան քաժանորդագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 20 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 70 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հարավամասի սակն է 5000 Լ.Ո.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է սրանալ նաեւ «Համազգային»ի գրախանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը սրացուի «Liban post»ի միջոցով:

# ՄԷԿ ՎԱՅՐԿԵԱՆ ՅՈՏՆԿԱՅՍ

**Յ**արգանքը հազար ձեռ ունի: Չեւերէն մէկն ալ յետ-մահու յարգանքն է անոնց, որոնք կեանք մը ամբողջ նուիրաբերած են իրենց միութեան եւ ժողովուրդին: Տքնած են, վազվզած են, միտք ու հոգի մաշեցուցած են, ատողջութիւն սպառած են՝ իրենց կենդանութեան մնալով շուքի եւ լուսանցքի մէջ:



Խօսքը խոնարհներուն մասին է, որոնք պատմութեան էջերուն հազիւ յիշատակութեան մը արժանացած են: Տարիներով լուռ ու մունջ ծառայած են՝ առանց սակայն օրին մէկը բեմերու մարդ ըլլալու: Յանձնախմբային թէ վարչական հազարամէկ աշխատանք կատարած են՝ առանց անպայման ծափ ու զնահատանք ստանալու, միակ վարձատրութիւն ունենալով բարոյական գոհունակութիւնը, տալու՝ ուրիշին օգտակար դառնալու մարդկային վսեմ զգացումը:

Շատ են նմանները մեր կեանքին մէջ: Ծանօթ-անծանօթներ են անոնք: Իրենց կենդանութեան շրջապատը յաճախ չէ նկատած, որ ինչպիսի՜ արժանիքներու տէր են անոնք, որովհետեւ անոնց գործը ստուերի մէջ ձգած է անձը: Անոնց անդարձ մեկնումէն ետք միայն՝ մարդիկ անդրադարձած են, թէ ինչպիսի՜ վաստակ կերտած են անոնք եւ ինչքա՛ն հետք ու դրոշմ ձգած են իրենց շրջապատին մէջ:

Դժուար է թուել նմաններու նկարագրային բոլոր բարեմասնութիւնները՝ համեստութենէն մինչեւ կարգապահութիւն, խոնարհութենէն մինչեւ անշահախնդրութիւն, եւ դեռ ատելին: Անոնց կեանքը իբրեւ դասագիրք կրնայ ծառայել յետնորդներու, մինչ իրենք գոհաբերութեան մէկական ուսուցիչներ կրնան ըլլալ տարբեր սերունդներու:

Նմաններով հարուստ է Հ.Մ.Ը.Մ.ը, որ զիտէ յարգել զանոնք, մանաւանդ հանդիսատար ժողովներէ եւ ձեռնարկներէ առաջ, երբ մէկ վայրկեան յոտնկայս լուծեան կը հրաւիրէ ներկաները՝ յիշելու եւ պատուելու իր վաստակատրները, որոնք անցեալին մեզի հետ էին, բայց այսօր չկան:

Վայրկեան մը յոտնկայս լուծեանք Հ.Մ.Ը.Մ. կը հաստատէ, որ ինք ներկայի մէջ գործող կազմակերպութիւն մը չէ միայն: Ներկան ծնած է անցեալէն, ուր անթիւ նուիրեալներ գործած են «հսկայ նուիրման» կամքով, Եռագոյն դրօշը բախտատու օր մը «հայրենի լերանց հեռագոյն» կոթողելու տեսիլքով:

Առանց այդ կամքին ու տեսիլքին Հ.Մ.Ը.Մ. գոյութիւն պիտի չունենար այսօր: Կամքի ու տեսիլքի մարդիկն էին, համոզումի եւ գաղափարի Հ.Մ.Ը.Մ.ական խենթերն էին, որոնք այս միութեան 100-ամեայ փառքը կերտեցին: Անոնք արժանի են միշտ յիշուելու, որպէսզի նորերը արդար հպարտութիւնը ապրին անոնց հարազատ ժառանգորդները ըլլալու: Անոնց սկսած գործը շարունակելու:

Վայրկեան մը յոտնկայս լուծիւնը թելադրանք է միաժամանակ, ազգային-միութենական մեր կեանքի կարեւոր առիթներուն, որեւէ աշխատանքի ձեռնարկելէ առաջ, մտքով ու հոգուով պահ մը ըլլալու անոնց հետ, որոնք իրենց սեփական օրինակով ուղեցոյց կը հանդիսանան մեզի: Ուժ եւ կորով կը ներշնչեն ընկրկումի եւ փորձութեան մեր պահերուն: Վայրկեան մը լուծիւնը, այս պարագային, կրնայ բաւարար չըլլալ յիշելու միութեան բոլոր երախտատրները, անոնք՝ որոնց հետ գործակցելու բախտն ու պատիւը ունեցած ենք եւ անոնք՝ որոնց մասին լսած կամ կարդացած ենք պարզապէս:

Վաստակատր մը յետ-մահու յարգել կը նշանակէ հեղինակութիւն մը մեծարել ու արժեւորել: Կը նշանակէ՝ մեծութիւն մը յարգելով նախ ինքզինք յարգել: Յարգանքի այս արտայայտութիւնը արդիւնք է Հ.Մ.Ը.Մ.ական դաստիարակութեան, վարուելակերպի եւ կեցուածքի: Հետեւաբար, արժէք է ան: Հ.Մ.Ը.Մ. 100 տարի բարձրացած է յարգանքով եւ անով արժեւորած է ինքզինք: Ի՞նչպէս կարելի է բարձրանալ-բարձրացընել առանց յարգանքի:

Վաստակատրներու յարգանքը, անկասկած, յար-



գանք է նաեւ միութեան պատմութեան: Ուխտ եւ յանձնառութիւն է այդ պատմութեան տէր կանգնելու եւ անոր թաւալքին մասնակցելու, այնքան ատեն որ այդ պատմութիւնը կանգ չէ առած: Վկայ՝ նոյն այդ պատմութիւնը. Պոլիսէն մինչեւ Պուրկաս, Պէյրութն մինչեւ Պըրպէնք եւ Պուէնոս Այրէս, Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը անխափան կը շարունակուի՝ այնքան ատեն, որ աշխարհի վրայ մէկ հատիկ հայ կայ:

Հ.Մ.Ը.Մ. կը շարունակէ գործել «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ» նշանաբանով, 100-ամեայ փորձառութեամբ եւ այն խոր համոզումով, որ վայրկեան մը յոտնկայս լռութիւնը ապրուած կեանքի մը բազմամիլիոն վայրկեաններէն տարբեր վայրկեան մըն է, որովհետեւ ան իր մէջ կը խտացնէ միութեան բիր-բիրատր խոնարհներուն աղամանդեայ արժէքով քրտինքը: Ու նաեւ՝

Կը խտացնէ գաղափարաբանութր ծառայութիւնը Շաւարշ Քրիսեաններու, Յովհաննէս Հինդեաններու եւ Գրիգոր Յակոբեաններու:

Կը ներկայացնէ անսահման նուիրաբերումը Նշան Թիւսիզեաններու, Յովհաննէս Շահինեաններու եւ Լուսեր Մասպանաճեաններու:

Կը մարմնատրէ բոլորաբանութր զոհաբերութիւնը Վարդգէս Տէր Կարապետեաններու, Բիւզանդ Թորիկեաններու եւ Միհրան Շիմշիրեաններու:

Կը խորհրդանշէ անճնորաց հայրենապաշտութիւնը Վահան Չերազներու, Վարդան Բախշեաններու եւ Վիգէն Չաքարեաններու:

Մէկ վայրկեանը ամբողջ մէկ դար կ'ամփոփէ իր մէջ, յարգանքով ապրուած դար մը, յարգանքի՝ դար մը, արժանի անպայման յոտնկայս յարգուելու:

### Հ.Մ.Ը.Մ.Ի 24 ՇՐՋԱՆՆԵՐ, 110 ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐ ԵՒ ՄԻԱՒՈՐՆԵՐ

**Հայաստան:** Երեւան, Մալաթիա, Ջէյթուն, Կոմիտաս, Էրեբունի, Արուիեան, Չարենցաւան, Հրազդան, Արմաիր, Էջմիածին, Մարտունի/Չորաքար, Մարտունի/Ծովինար, Կիւմրի, Վեյրի. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիփոլի, Պուրմ Համուր, Այնճար, Ծիւնի, Անթիլիաս, Ժրպէյրէ, Պաուլիէ, Ռաուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաքաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղպատ, Մուսուլ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գորինիա, Մելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդա:** Ալմելո, Ալքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեստերոս, Սուրերթելիա. **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովրիվ, Վառնա, Շումէն, Պուրկաս, Տոպրիչ. **Գանատի:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթո, Քէնպրի, Սէնթ Գաբրիէլ, Լաւալ. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքո, Ֆրեզնո, Մոնթեպելլո, Փասաթինա, Կլէնլէյլ, Օրէնս Բաունթի, Սան Ֆեռնանտո, Սան Տիէկո, Ինլընդ Էմիլայր, Սանթա Գլարա, Քրեսէնթա Հովիլ, Պըրպէնք, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլնաթ Քրիք, Նորթ Հոլիուուր, Սաքրամենթո, Սանթա Բարբարա. **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Դըրքի, Շիքախօ, Ֆիլադելֆիա, Տիքոնոյ, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալպընի, Շարլոթ, Մերիլենթ Հովիլ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորրոպա, Մոնթեվիդէո. **Աւստրալիա:** Սիդնի («Անդրանիկ»), Սիդնի («Արաք»), Սիդնի («Կամք»), Սիդնի («Արարար»), Մելբուռն.

# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԸԼԼԱՈՒԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ. ԾԱՌԱՅԵԼ ԳԱՂՈՒԹԻՆ, ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՈՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ

## (Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝ ՊՈՒՋԵՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ 90-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

**Հ**անդիսաւոր այս պահուն, Հ.Մ.Ը.Մ.ական համախմբուածի այս գեղեցիկ միջնորդարին մէջ, մեծ ուրախութեամբ եւ հպարտութեամբ կը նշենք Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին հիմնադրութեան 90-ամեակը:

90-ամեակ կ'ըսենք, ու բառը կը հնչուի շատ դիւրին, շատ կարճ ժամանակի մէջ: Մեզի կը թուի, թէ մասնաճիւղին կեանքն ալ եղած է այդպէս կարճ, դիւրին 90-ամեակ մը:

90-ամեակ կ'ըսենք, ու չեն երեւիր տարիներու յոգնութիւնը, թափուած ճիւղը, աշխատանքը եւ նուիրումը բոլոր անոնց, որոնք հիմնադիրները եղան, կամ անոնց հետ, ու անոնցմէ ետք՝ շարունակողները եղան մասնաճիւղին հիմնադրութեան նպատակներուն եւ ձգտումներուն:

90-ամեակ կ'ըսենք, ու մեզի այնպէս կը թուի թէ երէկ էր, որ փոքրաթիւ անդամներով կը հիմնուէր այս մասնաճիւղը: Դեռ երէկ էր, որ մասնաճիւղը մարզական եւ սկստական իր առաջին քայլերը կ'առնէր, արժանանալով բոլորին գնահատանքին ու քաջալերանքին:

Դիւրին չէ Պուէնոս Այրէսի եւ ընդհանրապէս Հարաւային Ամերիկայի այս ափերուն միութենական գործ տանիլը: Դիւրին չէ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալն ու մնալը: Պատիւ Պուէնոս Այրէսի մեր նուիրեալ տղոց, որոնք ամէն տեսակի դժուարութիւն յաղթահարելով կը մնան պատնէշի վրայ, կը գործեն անդուլ եւ անսասան, միշտ խանդավառ ու կենսունակ:

Յարգանքի եւ երախտիքի խօսք մանաւանդ ա'յն տղոց, որոնք անցնող ինը տասնամեակներուն ոտքի պահեցին այս մասնաճիւղը եւ յաջողութենէ յաջողութիւն առաջնորդեցին գայն, ի գին մեծամեծ գոհողութիւններու, որոնց վերջինը մասնաճիւղին մեծաթիւ եւ օրինակելի մասնակցութիւնն էր համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն, Հայաստան:

Այսօր, Հ.Մ.Ը.Մ. Պուէնոս Այրէս 90 տարեկան է: Ան հասուն մասնաճիւղ է տարիներու իր թիւով, բայց նաեւ՝ միշտ երիտասարդ իր աշխոյժ գործունէութեամբ, բազմահարիւր անդամներով, միշտ լաւին ու կատարեալին իր ձգտումով:

Զկա՞ն Հ.Մ.Ը.Մ. Պուէնոս Այրէսի նման մասնաճիւղեր: Կան, նոյնիսկ աւելի հին ու բազմանդամ: Սակայն, անոնք ծնունդը ըլլալով այլ գաղութներու, իրենց դերը կը կատարեն այլ միջավայրերու մէջ: Հ.Մ.Ը.Մ. Պուէնոս Այրէս հարազատ ծնունդը եւ զաւակը ըլլալով շրջանի հայութեան, վստահ ենք, որ իր 90-ամեակին, Պուէնոս Այրէսի հայութիւնը եւ, ինչու չէ, ամբողջ Հարաւային Ամերիկայի հայութիւնը հպարտ է իրմով:

Իսկ այս հպարտութիւնը պարտաւորեցնող է: Ան յաւելեալ պարտաւորութեան տակ կը դնէ մասնաճիւղի քոյրերն ու եղբայրները միշտ տալու իրենց լաւագոյնը եւ առաւելագոյնը՝ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն իրականացման համար:

Հետեւաբար, մեր մաղթանքն է, որ Հ.Մ.Ը.Մ.ականի առողջ ոգին անպակաս ըլլայ մասնաճիւղի բոլոր անդամներուն մօտ, որպէսզի անոնք շարունակեն իրենց սիրելի միութեան ճամբով ծառայել գաղութին, հայրենիքին ու հայրութեան, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու նախապայմանն է այդ:

Յարգելիներ,

Կարելի չէ տօնակատարութեան մը խօսքի սահմաններուն մէջ ընդհանուր արժեւորումը կատարել միութենական այն



արժեքներուն եւ սկզբունքներուն, որոնք յատուկ եղած են Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին եւ անոր հարազատ մէկ անդամին՝ Պուէնոս Այրէսի մասնաճիւղին:

Հ.Մ.Ը.Մ-ը ծնաւ հայ ժողովուրդի ծոցէն, հայ ժողովուրդին եւ Հայաստանին ծառայելու անվերջ ուխտով:

Արդարեւ, շնորհիւ խումբ մը գաղափարապաշտ անձերու ճիգին, 16 Նոյեմբեր 1918-ին, Պոլսոյ մէջ, հիմնուեցաւ հրաշագործ այս միութիւնը, որ կոչուեցաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն, կրճատուածը չորս տառերով՝ Հ.Մ.Ը.Մ.:

Հ.Մ.Ը.Մ., խորհրդաւոր այս չորս տառերուն մէջ խտացուեցաւ հայ ժողովուրդի վերջին մնացորդացին հայապահպանման անչափելի պատմութիւնը: Ահա թէ ինչու, իր յաջողութիւններով եւ ընկրկումներով Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը այսօր մաս կը կազմէ հայոց պատմութեան վերջին մէկ դարու պատմութեան:

Հ.Մ.Ը.Մ., իր սկզբնական շրջանին, զբաղեցաւ առաւելաբար որբախնամ գործունէութեամբ, քան մարզական եւ սկստական աշխատանքներով:

Հո՛ս է արդէն Հ.Մ.Ը.Մ-ի մեծութիւնը: Հո՛ս, այս երեւոյթին մէջ կը կայանայ Հ.Մ.Ը.Մ-ի յարատեւման գաղտնիքը, նպատակը, որուն հաւատարիմ մնաց Հ.Մ.Ը.Մ. իր հիմնադրութենէն մինչեւ մեր օրերը:

Կարդարով Հ.Մ.Ը.Մ-ի պատմութիւնը, մենք մեզի յաճախ հարց տուած ենք, թէ՛

Ի՞նչ պիտի ըլլար ապագան ջարդէն հրաշքով փրկուած հագարաւոր այն պատանիներուն, որոնք սկսած էին կեդրոնանալ Պոլիս, եթէ Հ.Մ.Ը.Մ. չհաւաքէր զանոնք որբանոցներու մէջ եւ չզբաղէր անոնց հոգեկան եւ ֆիզիքական կրթութեամբ:

Ի՞նչ պիտի ըլլար ճակատագիրը Ալեքսանդրապոլի աւելի քան 20.000 հայ որբերուն, եթէ Հ.Մ.Ը.Մ. օգնութեան ձեռք չ'երկարեր նորաստեղծ Հայաստանին, առաքելով երեք նուիրեալ եղբայրներ՝ Վահան Չերազ, Տիգրան Խոյեան եւ Օննիկ Շաղմաճեան:

Վերջապէս, ի՞նչ պիտի ըլլար դիմագիծը Միջին Արեւելքի, Եւրոպայի, Ամերիկաներու եւ Աւստրալիոյ մէջ հասակ նետած հայ երիտասարդութեան, եթէ Հ.Մ.Ը.Մ. Սփիւռքի տարածքին չհիմնէր Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղեր:

Արդարեւ, հայ կեանքը այսօր բոլորովին տարբեր պիտի ըլլար, եթէ Ցեղասպանութեան ցաւէն ու տառապանքէն ծնած չըլլար Հ.Մ.Ը.Մ-ը, որուն պարտականութիւնը պիտի ըլլար նորահաս սերունդներու մարմնակրթութիւնը, ազգային դաստիարակութիւնը, մարդկային արժեքներու փոխանցումը եւ բարոյական չափանիշներու շեշտումը:

Հ.Մ.Ը.Մ-ի ընտանեկան հարազատ միջնորդութիւն մէջ, 100 տարի շարունակ հայ մանուկին եւ երիտասարդին համար բիւրեղացաւ հայ սկստութիւն պայծառ դիմագիծը, վերականգնեցաւ բարձր ճակատով արժանապատիւ հայը, որ գիտակից



յանձնառութեամբ դիմագրուեց հայ կեանքի այլասերիչ բոլոր հոսանքները:

100 տարի շարունակ, Հ.Մ.Ը.Մ-ականը եղաւ այն մարզիկը, որ ազնիւ ոգիով մրցեցաւ իր ազգակիցներուն թէ օտարներուն դէմ, աշխատելով յաղթել, այո՛, բայց ոչ միայն պարզ մրցակցութեան իմաստով, այլեւ՝ ինքզինք իբրեւ մարդ գերազանցելու վճռակամութեամբ:

Հ.Մ.Ը.Մ-ականին համար յաղթանակի նուաճումը երբեք նպատակ չեղաւ, որովհետեւ ան սովորական իմաստով մարզիկ չեղաւ, այլ՝ եղաւ հայ կամաւոր, ազգի՛ գինուոր: Հ.Մ.Ը.Մ-ականը արժէք եղաւ, երբ միութենական ընդհանրական շահուն եւ բարոյական ըմբռնումներուն հետ վարուեցաւ լրիւ գիտակցութեամբ:

Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր»ը իր մէջ խտացուց հայ մարդուն կեանքին իմաստը- բարձրանալ դէպի մարդկային եւ ազգային վեհ արժեքներ, ապա ծուլ վար, ձեռք երկարել օգնութեան կարօտ եղբոր կամ քրոջ եւ զայն եւս բարձրացնել գաղափարի եւ բարոյականի գագաթները:

Թէ՛ իբրեւ տիպար սկստուտ եւ թէ՛ իբրեւ փայլուն մարզիկ, Հ.Մ.Ը.Մ-ականը շահեցաւ անձնական փառք ու պատիւ, սակայն անոր փառքը պատկանեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին բոլոր անդամներուն, իսկ պատիւը՝ համայն հայութեան:

Հայութիւնը ուրախացաւ, երբ Հ.Մ.Ը.Մ-ը արձանագրեց սկստական եւ մարզական յաջողութիւններ: Իսկ այդ ուրախութիւնը գերագոյն հրճուանքի վերածուեցաւ, երբ ան նչեց Հ.Մ.Ը.Մ-ական ոգիին յաղթանակը:

Համակիրներուն համար ընդունելի եղաւ մարզախաղի մը ընթացքին արձանագրուած ձախողութիւն մը, երբ Հ.Մ.Ը.Մ-ականը տուաւ իր առաւելագոյնը, թէ՛ իբրեւ անհասխնդիր մարդ եւ թէ՛ իբրեւ անբասիր հայ:

Մինչեւ իսկ ընդունելի եղաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի միաւորները տողանցեն համեմատաբար քիչ թիւով, պայմանով որ անոնք քալեն կազմակերպ եւ համաչափ, ու պայմանով որ անոնք արտայայտեն Հ.Մ.Ը.Մ-ի կազմակերպական ուժը եւ բարոյական պայծառութիւնը:



Ծանր եղաւ Հ.Մ.Ը.Մ.ականին բեռը, որովհետեւ ծանր եղաւ գիտակից հայուն բեռը ընդհանրապէս: Հ.Մ.Ը.Մ. անբաժան մէկ մասնիկը եղաւ հայութեան ազգային պայքարին, հետեւաբար Հ.Մ.Ը.Մ.ականէն տեւաբար պահանջուեցաւ անսահման ճիգ եւ զոհողութիւն, ի խնդիր Միութեան յառաջդիմութեան:

Դիւրին չեղաւ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալը, շատ աւելի դժուար եղաւ Հ.Մ.Ը.Մ.ական մնալը: Շատեր եկան ու անցան Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն: Ուրիշներ դեռ պիտի գան ու անցնին:

Այս բոլորէն ետք, կ'արժէ հարց տալ, թէ ի՞նչով Հ.Մ.Ը.Մ.ի ներկան տարբեր է իր անցեալէն:

Ազատ ու անկախ հանրապետութիւն է այսօր մեր Հայրենիքը: Եւ հոն Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը գործօն ներկայութիւն է սկստուտական իր միաւորներով:

Անկախ հայրենիքի մը գոյութիւնը այսօր ուժ եւ կենսունակութիւն կու տայ Հ.Մ.Ը.Մ.ին:

Հայրենիքին ու ազգին ծառայութիւնն է, որ կը պահէ եւ կը յուսադրէ Հ.Մ.Ը.Մ.ը, ապագային, իր վախճանական նպատակին ճամբուն վրայ գայն դարձնելով ստեղծագործ:

Հոգեկան հայրենիքի հոգեվիճակը յաղթահարուած է այլեւս: Կայ ապրող ու զարգացող իրական հայրենիքը, ուր Հ.Մ.Ը.Մ. կը գործէ 28 տարիէ ի վեր, սկստուտական աշխոյժ գործունէութեամբ: Պէտք է գուրգուրալ հայրենի սկստուտական շարքերուն վրայ, որովհետեւ եթէ անոնք զօրանան, ամբողջ կազմակերպութիւնը կը զօրանայ, հայրենիքը կը զօրանայ:

Հայոց աշխարհի թանկագին մասնիկներ են նաեւ Արցախն ու Զաւախքը, որոնք այսօր, աւելի քան երբեք, կարօտ են Հ.Մ.Ը.Մ.ական ուշադրութեան, սիրոյ, հաւատքի եւ կազմակերպութեան: Զոյգ շրջաններուն մէջ ալ Հ.Մ.Ը.Մ. գործունէութեան լայն դաշտեր ունի իր դիմաց, նորահաս սերունդներու դաստիարակութեան ճամբով ծառայելու ազգային խոչալններու կենսագործման:

Կայ նաեւ Սուրիոյ եւ Իրաքի տագնապներէն խոյս տուած

բազմահազար սուրիահայերու եւ իրաքահայերու հասնելու եւ կազմակերպելու հրամայականը: Այսօր, Գանատայի, բայց մանաւանդ՝ Եւրոպայի տարբեր քաղաքներուն մէջ կան հազարաւոր հայորդիներ, որոնք կարիքը ունին ազգային երդիքի եւ Հ.Մ.Ը.Մ.ի խանդավառող ներկայութեան: Հ.Մ.Ը.Մ. պարտաւոր է ընդառաջել բոլորին, կազմակերպել նորաստեղծ այդ համայնքները եւ երիտասարդութիւնը իր շուրջը համախմբել՝ ազգային առողջ մթնոլորտի մէջ:

Կարիքները շատ են, բայց կարելիութիւնները՝ չափաւոր: Բայց եւ այնպէս կայ ու կը մնայ մեր հաւատքը: Մենք կը հաւատանք, որ առանց ուժեղ կազմակերպութեան, անկարելի է որեւէ ծառայութիւն յաջողութեամբ պսակել:

Հետեւաբար, մենք քաջ կը գիտակցինք, որ միութեան մնացեալ 108 մասնաճիւղերուն նման, Պուէնոս Այրէսի մասնաճիւղին ուժը, յարատեւ ծառայութեան, ներքին առողջութեան, կենսունակութեան, գիտակից գոհողութեան եւ յառաջդիմութեան մէջ է: Իր երկրորդ 100-ամեակի սեմին, Հ.Մ.Ը.Մ.ը հարկ է աւելի զօրանայ, տարածուի եւ կազմակերպուի հոն ուր ներկայ է արդէն, իսկ ներկայ ըլլայ հոն ուր բացակայ է այժմ, որովհետեւ 100-ամեայ իր առաքելութեան հաւատարիմ՝ ան կոչուած է ազգային դիմագիծի, նկարագիրի, ինքնութեան եւ արժէքներու պահպանող ըլլալու հայ մատղաջ սերունդին համար:

Անշուշտ, իրատեսութիւնը կը պահանջէ ընդունիլ, որ ճիշդ է, տասնամեակներ շարունակ Հ.Մ.Ը.Մ.ը գործեց եւ կը շարունակէ գործել կամաւոր եւ պատրաստակամ պատասխանատուներով: Սակայն մեր այսօրու վարչականը, մարզիչը կամ սկստուտ խմբապետը, Պուէնոս Այրէսի մէջ թէ Գորտոպայի, Լոս Անճելլասի թէ Պէյրութի, կը դիմագրաւէ տարբեր տեսակի դժուարութիւններ: Երբեմն հաւաքավայրակումբի պակաս, առօրեայ գործի հեւք, այլասերումի եւ անտարբերութեան երեւոյթներ, մարզական կեանքի ծայրայեղ նիւթականացում. մէկ իօսքով՝ այսօրու կեանքի պայմանները տարբեր են:

Կը հաւատանք, որ այսօրու կազմակերպութեան ներկաները մեծամասնութեամբ, շատ բան ստացան Հ.Մ.Ը.Մ.էն, միութենական եւ ազգային պատկանելութեան հասկացողութեամբ: Անքակտելի բարեկամութիւններ հաստատեցին: Գայլիկին կանչը՝ «Ընել մեր լաւագոյնը» ի մտի ունենալով բարձրացան մեր անհատական կեանքին մէջ: Շատեր իրենց մտքին ու աչքին լոյսը մաշեցուցին միութեան մէջ: Պարտականութիւն է մեզմէ իւրաքանչիւրին համար, մեր հերթին, փոխադարձել, տալ Հ.Մ.Ը.Մ.ին, տալ նորահաս սերունդին, բարձրացնել գայն:

Մեր ժամանակներու նոր պայմանները, շրջապատէն ազդուած այսպէս կոչուած նոր արժէքները, արդի արհեստագիտութիւնը իրականութիւններ են եւ անպայման իրենց ազդեցութիւնը ունին մեր երիտասարդ սերունդին վրայ: Կան նա-



եւ համաշխարհայինացումի ահագին երեւոյթները, որոնք ժխտական անդրադարձներ ունին միութենական եւ ազգային հաւաքական մեր կեանքին վրայ: Արդարեւ, երբ կը պակսի պատկանելիութեան գիտակցութիւնը, կը պակսի միութենական կապուածութիւնը, կը պակսի ներկայութիւնը համայնքային կեանքէն ներս:

Տակաւին, մեր յաջողութեան գաղտնիքներէն է Հ.Մ.Ը.Մ-ի բարոյական դրամագլուխը, տարիներու վարկը, անունը, որոնց տոկոսներն են որ կու գան խտացնելու մեր շարքերը: Այլ խօսքով, անոնք որոնք անցան միութեան շարքերէն, իրենց գաւակները կը զրկեն համոզուած, որ անոնք եւս զարգացնեն այդ պատկանելիութիւնը: Փաստօրէն, Հ.Մ.Ը.Մ. միակ հայ կազմակերպութիւնն է, ուր գայլիկ թռուիկը, հայրը եւ մեծ հայրը միաժամանակ կ'անդամակցին միութեան: Երեք սերունդ «եղբայր» են Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ:

Համակիրներ չեն ծածկեր իրենց խոր համոզումը, որ Հ.Մ.Ը.Մ. սոսկ մարզական կամ սկաուտական շարժում մը եղած չէ ու պիտի չըլլայ: Հանրային իմաստով յանձնառութիւն զարգացնող, ազգային առումով ինքնաճանաչում սերմանող եւ գաղափարական խորքով նուիրում ջամբող ընտանիք է Հ.Մ.Ը.Մ., որ տարիներու իր հարուստ փորձառութեամբ արժանացած է իր ժողովուրդին հոգածութեան եւ վստահութեան:

Կան զարգացող ուրիշ իրականութիւններ եւս: Մարմնամարզը, սփորը արդիականացած եւ մասնագիտացած հսկայ ճարտարարուեստի վերածուած է այսօր: Սկաուտութիւնը միջազգային տարողութեամբ, իսկ հայ սկաուտութիւնը իր հարուստ պատմութեամբ, այսօր տեղաբայի մէջ է: Նման երեւոյթներ նոր դժուարութիւններ են այսօրուան մեր վարիչ պատասխանատուներուն համար:



Յաճախ ըսած ենք ու դարձեալ կը կրկնենք. Մեր օրերուն սերունդէ սերունդ փոխանցումը հաւանաբար աւելի դժուար է: Փորձենք այդ փոխանցումը հեզասահ համադրել:

Վա՛յ մեզի, որ վաղը միութիւն ըլլալու փոխարէն դանանք միայն ակումբ՝ «Քլապ»:

Վա՛յ մեզի, որ վաղը խմբապետ նշանակելու համար ստիպւինք ամիսներով մարզ փնտռել:

Յարգելիներ,

Յաւաջիկայ տարի, Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 100-ամեակն է: 100-ամեակն է նաեւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան: Հ.Մ.Ը.Մ. կրողն ու պաշտպանը եղած է Առաջին Հանրապետութեան արժէքներուն՝ Եռագոյնին, անկախութեան գաղափարին եւ Միացեալ Հայաստան կերտելու տեսլականին: 100-ամեակի առիթով, «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ» նշանաբանով, միութիւնը նախաձեռնած է շարք մը ձեռնարկներու, որոնք 19-28 Յուլիս 2018, տեղի կ'ունենան Հայաստանի մէջ, ներկայութեամբ հայ պետական եւ եկեղեցական աւագանիին: Ծրագրի վրայ են Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում, գիտաժողով, ցուցահանդէս, Վահան Չերազի կիսանդրի բացում, 100-ամեակի հանդիսաւոր տօնակատարութիւն, պաշտօնական ընթրիք եւ այլ ձեռնարկներ: Այս բոլորը յաջողցնելու համար կազմուած են համապատասխան յանձնախումբեր, որոնք գործի անցած են արդէն: Նախատեսուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ անոնց հարգատներու հաւաք՝ Հայաստանի մէջ, ներկայ գտնուելու համար Հ.Մ.Ը.Մ-ի շաբթուան ընթացքին տեղի ունենալիք նախաձեռնութիւններուն:

Մեր ականակալութիւնն է, որ Պուէնոս Այ-



րէսի մեր սիրելի մասնաճիւղը անմասն չմնայ 100-ամեակի տօնակատարութիւններէն եւ շրջանին մէջ իր կազմակերպելիք հանդիսութիւններէն անկախ՝ սկսուածներով, ծնողներով ու բարեկամներով առաւելագոյն ներկայութիւն ըլլայ Հայաստանի մէջ՝ վայելելու համար 100-ամեակի եզակի այս առիթը:

Առիթը օգտագործելով, նոյն կոչը կ'ուղղենք նաեւ Գորտոպայի եւ Մոնթէվիտէոյի մեր քոյր-եղբայրներուն, յուսալով որ 2018-ի Յուլիսին, բոլորին կը հանդիպինք Հայաստանի մէջ:

100-ամեակը առիթ է Հ.Մ.Ը.Մ.ը ծանօթացնելու աշխարհին եւ անգամ մը եւս հաստատելու, որ «Առողջ միտքը առողջ մարմինի մէջ» նշանաբանէն մեկնելով՝ Հ.Մ.Ը.Մ. իր անդամներուն կը պատգամէ հաւատարիմ ըլլալ հայ ժողովուրդին, ծառայել ազգին եւ հայրենիքին: Աւելի գեղեցիկ պատգամ դժուար է երեւակայել:

100-ամեակի սեմին պէտք է շեշտել նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ.ականը է՛ եւ կը մնայ գաղափարական մարդ, երբ յանձն կ'առնէ քալել Եռագոյն դրօշին ետեւէն, իբրեւ ներկայացուցիչը հաւատաւոր հայ երիտասարդութեան:

Հ.Մ.Ը.Մ.ականը է՛ եւ կը մնայ առաքինի մարդ, երբ Միութեան եւ ժողովուրդին շահերը կը դասէ իր անձնական հաշիւներէն եւ նախասիրութիւններէն վեր, իբրեւ օրինակ նուիրումի եւ անշահախնդիր գործի:

Հ.Մ.Ը.Մ.ականը է՛ եւ կը մնայ կարգապահ մարզիկ, խո-

նարհ սկսուած եւ նուիրեալ աշխատող, երբ իր արժէքը կը տեսնէ Հ.Մ.Ը.Մ.ի յաւելեալ հզօրացման եւ հայ ժողովուրդի յառաջդիմութեան մէջ, ի խնդիր՝ հաւաքական մեր ուժին ամրապնդման եւ վախճանական մեր նպատակներուն իրականացման:


100-ամեակի այս նշանակալից հանգրուանին, արդար հպարտութեամբ մը այսօր կը հաստատենք, որ Հ.Մ.Ը.Մ. դարձած է ողջ հայութեան երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնը աշխարհասփիւռ իր 109 մասնաճիւղերով ու միաւորներով, տարածուած աշխարհի հինգ ցամաքամասերու վրայ: Ու մենք հաստատ համոզուած ենք, որ սփիւռքահայ կեանքին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպ ու գործօն յարատեւութեամբ, մենք հաւաքաբար կրնանք աւելի սատարել մեր ազատ ու անկախ հայրենիքին վերականգնումին, որովհետեւ այդ վերականգնումը, իր անմիջականութեամբ հանդերձ, երկար ուղի մըն է: Մենք չէ՛ միայն, այլ յաջորդաբար հասնող սերունդը, սերունդները պիտի ըլլան այդ յանձնառութեան դերակատար պատասխանատուները:

- Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը:
- Կեցցէ՛ Պուէնոս Այրէսի մասնաճիւղը:
- Կեցցէ՛ զայն ծնող մեր ժողովուրդը:
- Եւ կեցցեն՝ յաւերժական հայութիւնն ու Հայաստանը:

**Ի ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՎԱԷ ՍԵԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ - ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ**  
**HAMAZKAYIN VAHE SETHIAN PRINTING AND PUBLISHING HOUSE**

**ԳԻՐՔԸ ՄԱՐԴՈՒ ԼԱԽԱԳՈՅՆ ԲԱՐԵԿԱՄՆ Է**  
**BOOKS ARE A MAN'S BEST FRIEND**

«Շաղկոյեան» կեդրոն, Պոլսի Համուտ | Հեռ՝ +961 1 241262/3/4  
 Ֆաքս՝ +961 1 260329 | Ե-նամակ՝ print@hamazkayin.com  
 Կայքէջ՝ www.hamazkayin-bookstore.com  
 Դիմատետր՝ Գանձարան - Hamazkayin Publishing, Bookstore



ՀԱԼԷՊԻ «ԳԱՆՁԱՍԱՐ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻՆ  
ՀԵՏ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԻՆ ՄԷՉ՝

# Հ.Մ.Ը.Մ.Ը ՍՈՒՐԻՈՅ ՄԷՉ ՉԸՆԿՃՈՒԵՑԱԲ, ԱՅԼ՝ ՆՈՐ ՈՒԺԵՐՈՎ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԵՑԱԲ

Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՄԱՆՈՒԿ ՔԷՕՇԿԷՐԵԱՆ

Հարցազոյցը վարեց  
Մարինա Չիլ Աբոշեան-Պողիկեան  
ՀԱԼԷՊ

**Ե՛րբ, ո՛րք եւ ի՛նչ պայմաններու մէջ ծնունդ առաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը:**

- 1900-ական թուականներուն սկիզբը Հ.Մ.Ը.Մ.Ի գաղափարախօս Շաւարշ Քրիսեան Եւրոպա կը գտնուէր, իբրեւ մարմնակրթութեան ուսանող: Պոլիս վերադառնալով, ան տեղւոյն մարզական խումբերը համախմբեց՝ հիմնելով «Մարմնամարզ» պարբերաթերթը, որուն միջոցով սկսաւ ներգրաւել երիտասարդութիւնը: «Մարմնամարզ»ի յօդուածները մեծ հետաքրքրութիւն եւ քաջալերանք ստեղծեցին երիտասարդութեան մօտ: Գաղափարը սկսաւ կամաց-կամաց զարգանալ: Նոյն տարիներուն, 1908-ին, Եւրոպայի մէջ ծնունդ առած էր սկաուտութիւնը: Հայերը անտարբեր չմնալով գործի անցան եւ շուտով Պոլսոյ Հայ Դպրոցի տնօրէն Յովհաննէս Հիւրդեան 1912-ին հիմը դրաւ հայ սկաուտութեան, կրկին օգտուելով «Մարմնամարզ»ի էջերէն:

Այսպէս, Շաւարշ Քրիսեանի եւ Յովհաննէս Հիւրդեանի ջանքերով սկսան համախմբուել մարզական խումբերը, սակայն շուտով Հայոց Յեղասպանութեան պատճառով բոլոր ծրագիրները ընդհատուեցան: Յեղասպանութենէն մազապուրծ ճողոպրած այդ խլեակները, որոնք փողոցները մնացած էին, դժուարութեան դիմաց կը գտնուէին: Այս կացութեան մէջ, 1918-ին, խումբ մը եղբայրներ քով-քովի գալով Պոլսոյ մէջ հիմը դրին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, որուն հիմնական նպատակն էր նոր սերունդի ֆիզիքական եւ բարոյական դաստիարակութիւնը, «Առողջ միտք՝ առողջ մարմինի մէջ» նշանաբանով:

Միութեան հիմնադիր ժողովը 15 վայրկեան տեւեց, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.՝ առաքելութիւն մը ունէր կատարելիք եւ անհրաժեշտ էր անմիջապէս գործի ձեռնարկել: Շուտով բոլոր Հ.Մ.Ը.Մ. ականները ձեռնարկեցին որբահաւաքի, որովհետեւ այդ օրերուն հրամայականը մարզականէն աւելի բարեսիրական աշխատանքն էր: Յառաջացուցին շարժուն հիւան-



դանոցներ, շարժուն դեղարաններ եւ շարժուն գրադարաններ, իրենց մասնակցութիւնը բերին բերքահաւաքի եւ ամէն ձեւով օգտակար դարձան մեր տառապեալ ժողովուրդին՝ փորձելով մեղմացնել անոր ցաւերը: Յիշատակելի է, որ այդ օրերուն մօտաւորապէս 1500 հիւանդներ բժշկուեցան այդ շարժուն հիւանդանոցներուն միջոցով: Այդ օրէն Հ.Մ.Ը.Մ.ը իր առաքելութիւնը սկսաւ Պոլսոյ բոլոր շրջաններուն մէջ եւ ընդհանրապէս Թուրքիոյ տարածքին:

Նոյն թուականներուն Հայաստան անկախացաւ. հոն եւս որբեր կային, հոն եւս դպրոցականներ կարիք ունէին մարզական եւ սկաուտական շարժումի: Օրուան կրթական նախարար Նիկոլ Աղբալեանի հրաւերով հիմնադիր կարգ մը եղբայրներ 1920-ին հրաւէր ստանալով մեկնեցան Հայաստան, որպէսզի հոն եւս Հ.Մ.Ը.Մ.ը իր առաքելութիւնը շարունակէ որբանոցներու եւ դպրոցներու մէջ՝ մարմնակրթանքի միջոցով, մարզական խաղերով: Նոյն թուականին էր, 1919-ին, երբ Հ.Մ.Ը.Մ. որդեգրեց «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը եւ ահա, հարիւր տարիէ ի վեր ան այդ նշանաբանով կ'առաջնորդէ իրերայաջորդ սերունդներ:

**Հ.Մ.Ը.Մ-ը Սուրբիոյ մէջ ե՛րբ եւ ի՛նչպէս հիմնուեցաւ:**

- Բոլորիս յայտնի է, որ Հայոց Յեղասպանութեան մագապուրծ փրկուած գաղթականները առաջին ապաստան ունեցան Սուրիան, անցան Տէր Զօրի ճանապարհէն, հասան Հալէպ, իբրեւ մայր գաղութ եւ հոնկէ ուղղուեցան դէպի Եւրոպա: Կրնանք ըսել, որ Սուրբիոյ շրջանը Միջին Արեւելքի առաջին շրջաններէն կը նկատուի: Ինչպէս Պոլսոյ մէջ կային խումբեր, նոյնպէս ալ Այնթապէն, Քիլիսէն, Մարաշէն եւ այլ գաղթականներէն եկած երիտասարդները այստեղ կազմած էին կարգ մը խումբեր, ինչպէս՝ «Տորք», «Համազասպ», «Արծիւ», որոնք կը գործէին անջատաբար: Հ.Մ.Ը.Մ-ը եկաւ այդ խումբերը միացնելու, մէկ դրօշի տակ համախմբելու եւ այդպէսով հիմը դրուեցաւ նախ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղին, 1925-ին, ապա՝ Հալէպի մասնաճիւղին նոյն թուականին, այնուհետեւ՝ Լաթաքիոյ, Գամիշլիի եւ Քեսապի մասնաճիւղերուն: Այս հինգ մասնաճիւղերը մինչեւ օրս աշխուժօրէն կը գործեն ի նպաստ նոր սերունդի ֆիզիքական եւ բարոյական դաստիարակութեան: Անցեալին ունեցած ենք մօտաւորապէս 24 մասնաճիւղեր, որոնք գործած են Սուրբիոյ գանազան շրջաններուն մէջ եւ ունեցած են եռուն գործունէութիւն: Այդ մասնաճիւղերէն կ'ուզեմ յիշել Դամասկոսը, Հալէպը, Լաթաքիան, Հոմսը, Քրքիսանը, Ալեքսանտրէթը, Անտիօքը, Գամիշլին, Ռաս իւլ Այնը, Ճարապուտսը, Արաբունարը, Ազգը, Տերպեսիէն, Թէլ Ապիատը, Տէր Զօրը, Այն Տիուարը, Տէրիքը, Հասիչէն, Պանիասը, Այն Արուսը, Քեսապը, Ռաքքան, Թէլ Պարաքը եւ Ամուտան:

Այսօր, Սուրբիոյ հինգ մասնաճիւղերը իրենց սկստական եւ մարզական գործունէութեամբ նոր սերունդին մէջ կը սերմանեն հայրենասիրութիւն, ազգասիրութիւն, եկեղեցասիրութիւն, իրարու օգնելու կամեցողութիւն, եղբայրասիրութիւն, հնազանդութիւն, ծնողաց հանդէպ սէր ու յարգանք: Այսօր բոլոր մասնաճիւղերը մեծ եռանդով կը պատրաստուին մեր պանծալի միութեան 100-ամեակը տօնախմբելու, իրենց հետ ունենալով «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ» նշանաբանը:

**Ներկայիս ի՛նչ դժուարութիւններ կը դիմադրուէ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ շրջանը եւ ի՛նչ մարտահրաշխաններու դէմ յանդիման կը գտնուի:**

- Հետաքրքրական հարցում է: Սուրբիոյ շրջանը վերջին եօթը տարիներուն տազնապալից օրեր ապրեցաւ, բոլորին ծանօթ քաղաքական եւ պատերազմական պայմաններու բերումով: Մեր թիւը զգալի նուազում կրեց արտագաղթի պատճառով, բայց միութենական աննկուն կամքով եւ Հ.Մ.Ը.Մ-ականի բարձր գիտակցութեամբ մենք վերաշխուժացողներ մեր շարքերը եւ առանց ընդմիջումի գրեթէ ամէն շաբաթ մեր աշխատանքները կատարեցինք: Մեր մարզական խումբերը, կարելիութեան սահմաններու մէջ, իրենց մրցումները շարունակեցին Հալէպի եւ բոլոր մասնաճիւղերու մէջ: Յատուկ կերպով յիշեմ, որ Գամիշլիի մասնաճիւղը մարզական եւ սկստական աշխույժ կեանք ունի: Քեսապի, Լաթաքիոյ, Դամասկոսի եւ Հալէպի մասնաճիւղերը եւս պատերազմի շրջանին գրեթէ չզաղրեցան գործելէ:



Փակագիծ մը բանալով կ'ուզեմ ըսել, որ այն եղբայրները եւ քոյրերը, որոնք Սուրբիոյն արտագաղթեցին, իրենց նոր հաստատուած երկիրներուն մէջ մաս կազմեցին միութեան նորաստեղծ մասնաճիւղերուն եւ յաճախ պատասխանատու դիրքերու վրայ գտնուեցան: Մենք յաճախ ըսած ենք, որ Հալէպի Հ.Մ.Ը.Մ-ը մարդակերտման եւ հայակերտման դարբնոց է եւ պիտի շարունակէ մնալ հայ սերունդներ պատրաստող օրրան:

Այսուհանդերձ, Հ.Մ.Ը.Մ-ը Սուրբիոյ մէջ չընկճուեցաւ, այլ՝ նոր ուժերով վերակազմուեցաւ, փաստօրէն անցեալ եւ այս տարիներու տարեկան բանակումները կը վկայեն այս բոլորին մասին:

Հ.Մ.Ը.Մ-ի պարտէզը տազնապալի օրերուն իր դռները բաց պահեց, որպէսզի մեր համակիրները նուազագոյնը կարենան այցելել Հ.Մ.Ը.Մ-ի ընտանեկան պարտէզ: Երբ պարտէզի մասին կը խօսինք չենք կրնար չանդրադառնալ այն մեծ հարուածին, զոր ստացաւ Հ.Մ.Ը.Մ-ի մարզադաշտը, երբ գրեթէ ամբողջութեամբ հրկիզուեցաւ: Նորոգութիւնը բաւական դժուար էր եւ ծախսալից: Ամբողջ դաշտը աւերակի վերածուած էր, բայց շնորհիւ Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի երիտասարդ եւ ժրջան վարչութեան, այսօր վերստին կը վերակառուցուի եւ յոյսով ենք, որ մօտիկ ապագային, բոլորին ներկայութեամբ, մեր մարզիկներուն դիմաց կը վերաբանանք մարզադաշտին դռները, որովհետեւ օտար դաշտերու մէջ մեր մարզիկները իրենց փորձերը կատարելու մեծ դժուարութեան առջեւ են: Յուսանք մօտիկ ապագային, վարչութեան ջանքերով, կը յաջողինք վերստին օգտագործել մեր անցեալի դաշտերը եւ աւելի լաւ ձեւով ներկայանալ մեր հասարակութեան:

**Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին առիթով Կեդրոնական Վարչութիւնը ի՛նչ ծրագիրներ նախատեսած է:**

- Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ծրագիրները արդէն իսկ կեանքի կոչուած են: 2017 Յուլիս ամսուն, հայրենիքի մէջ սկիզբ առին համա-Հ.Մ.Ը.Մ-ական խաղերը, մօտաւորապէս 9 մարզախաղերով եւ 1000 մարզիկներով: 100-ամեակի առիթով Կեդրոնական Վարչութիւնը պատրաստած է յատուկ քայլերդ եւ պէճեր, ինչպէս նաեւ նշանաբան մը՝ «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ»: Հարիւրամեակը աղամանդեայ տարեդարձ է Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին համար: Հարիւր տարուան պատուաբեր աշխատանք կայ եւ այդ աշխատանքին արձագանգը պիտի ըլլայ ապագայ մեր յաղթարշաւը: Կեդրոնական Վարչութիւնը ուսումնասիրուած ծրագիր-

ներ մշակած է եւ յատուկ յանձնախումբեր յառաջացուցած է 100-ամեակին առիթով եւ այդ յանձնախումբերը գործի լծուած են արդէն: Ինչպէս ըսի, մարզախաղերով 100-ամեակի մեկնարկը կատարուեցաւ, այնուհետեւ ձեռնարկները պիտի երկարին մինչեւ Դեկտեմբեր 2018: Հայաստանի մէջ տեղի պիտի ունենան յատուկ ձեռնարկներ: Հիմնական տօնակատարութիւնը պիտի ըլլայ Օփերայի դահլիճին մէջ: Նախատեսուած է նաեւ ցուցահանդէս մը՝ Միծեռնակաբերդի թանգարանին մէջ, Վահան Չերազի արձանի գետեղում Կիւմրիի մէջ, միութեան հիմնադիրներու կիսանդրիներու բացում Երեւանի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի կեդրոնին առջեւ, 100-ամեակի սկաւտական բանակում Բիւրականի մէջ, 100-ամեակի տողանցք «Հանրապետութեան» հրապարակին վրայ՝ վեթերան խմբապետներու մասնակցութեամբ, գիտաժողով, հոգեհանգիստ, պաշտօնական ընթրիք, յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէս եւ այլն: Միաժամանակ, միութեան բոլոր շրջաններուն մէջ պիտի կատարին 100-ամեակի առանձին ձեռնարկներ:

**Իսկ ի՞նչ ծրագիրներ նախատեսած է Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը միութեան 100-ամեակին առիթով:**  
 - Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ շրջանը միութեան առաջին շրջաններէն կը նկատուի եւ շատ բնական է, որ անտարբեր պիտի չմնայ միութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն հանդէպ: Կարգ մը ծրագիրներ մշակուած են արդէն, յանձ-

նախումբեր յառաջացած են, որպէսզի Սուրբոյ տարածքին արժանավայել ձեւով յիշատակենք միութեան 100-ամեակը, ինչպէս՝ 100-ամեակի մեկնարկի ձեռնարկ, յաղթանակի տողանցքներ, միջ-մասնաճիւղային բանակում, միջ-միութեանական փառատօն, մարզական մրցաշարքեր, բարեսիրական աշխատանք, յաղթանակի պարահանդէս եւ շատ մը ուրիշ ծրագիրներ:

**Նոր 100-ամեակ մուտք գործելով Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը ի՞նչ ռազմավարութիւն կը մշակէ:**

- 2018-ին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը կը բոլորէ իր 100-ամեակը, որ հանրային քննութեան ներկայացման առիթ մըն է: Հարկ է գնահատումը կատարել 100-ամեակի երթին եւ հաշուետուութեամբ ներկայանալ ամէնուրեք:

Անհրաժեշտ է լուսարձակի տակ առնել միութեան պատուաբեր անցեալը, պարզելու համար դէպի յաղթական ապագայ առաջնորդող նոր ուղին:

Ինչ կը վերաբերի յաջորդ 100-ամեակի ռազմավարութեան, արդէն կը գործէ յատուկ յանձնախումբ մը, որ մօտաւորապէս տասը տարիէ ի վեր կը մշակէ գալիք տասնամեակներու ռազմավարական ծրագիր մը, որուն մէջ լայն տեղ տրուած է Հ.Մ.Ը.Մ-ի դերակատարութեան՝ ազգային-միութեանական մեր կեանքին առողջացման եւ կազմակերպական կառույցի երիտասարդականացման եւ արդիականացման աշխատանքներուն մէջ:

- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar

**Europe Hotel**

*Feel at home, away from home...*

**Reservations Yerevan**  
 32-38, Hanrabedoutian Street,  
 Yerevan 375010, Armenia  
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
 sales@europehotel.am

**www.europehotel.am**



# ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ՏԵՍԼԱԿԱՆԸ՝ «ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ»ԻՆ ՏԵՍԱՆԿԻՒՆԷՆ

Զրոյցը համադրեց՝ Վ. Բ.  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

**Մ**եր գրոյցը Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նա-  
հանգներու Շրջանային Վարչութեան կողմէ  
«Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» տիտղոսին արժա-  
նացած եղբ. Շահէ Ենիգոմշեանին հետն է:  
Մէկը, որ փոքր տարիքէն ամբողջական նուիր-  
ումով գործած է այս միութեան մէջ, սկսելով սկառուտական  
շարքերէն, հասնելով մինչեւ Շրջանային թէ Կեդրոնական  
յանձնախումբեր եւ Պատգամաւորական ժողով: Ան սերտօ-  
րէն առնչուած է Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագիրի աշ-  
խատանքներուն հետ, եւ աչքի առջեւ ունենալով իր ներդրու-  
մը, մեր գրոյցը սկսանք այն հարցադրումներով, թէ ինչպէ՞ս  
կարելի է բնութագրել Հ.Մ.Ը.Մ.ականի կերպարը, ան  
սկառուտն է, մարզի՞կը, վարչական գործ ընո՞ղը թէ այս երե-  
քը համադրո՞ղը:

Եղբ. Շահէ Ենիգոմշեանի պատասխանը անվրէպ էր.  
«Իրականութիւնը այն է, որ Հ.Մ.Ը.Մ.ականի երկու կերպար  
կայ: Առաջին եւ հիմնական կերպարը պատանեկան տարիներու  
սկառուտական եւ մարզական կեանք ունեցած այն պատա-  
նի-երիտասարդներն են, որոնք այդ ապրումը գնահատած եւ  
Հ.Մ.Ը.Մ.ական աւանդը իւրացուցած են: Անոնք կեանքի յա-  
ջորդող հանգրուաններուն թերեւս չեն ծառայած Հ.Մ.-  
Ը.Մ.ին, բայց Հ.Մ.Ը.Մ.ական իմորը հիմնական պատճառնե-  
րէն մէկը եղած է, որ կապուած մնան հայկական առօրեային:  
Եթէ դիտէք Սփիւռքի մեր վերջին 60-70 տարիներու ղեկավար-  
ներուն ցանկը, թերեւս պիտի գարմանաք, որ անուններուն

ջախջախիչ մեծամասնութիւնը իրենց պատանեկան օրերուն  
թրծուած են իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական:

Երկրորդ կերպարը այն է, որ Հ.Մ.Ը.Մ.ական իր կեանքը  
շարունակած է իբրեւ սկառուտ ղեկավար, մարզիչ, յանձնա-  
խումբի անդամ, վարչական կամ խորհրդատու եւ դաստիարակ:  
Այս կերպարը Հ.Մ.Ը.Մ.ի ողնայարն է, անոր «կամաւոր  
բանակն» է»:

## ՊԱՏԳԱՄԸ, ԹԷ ՄԻՋՈՑԸ

Իսկ ի՞նչ տուած է Հ.Մ.Ը.Մ.ը իրեն, անձնապէս. իսկ ինչ որ  
ցարդ տուած է, պէ՞տք է փոփոխութեան ենթարկուի, թէ  
պատգամը փոխանցելու միջոցն է, որ պէտք է բարելաւուի:

Հոս եւս եղբ. Շահէին պատասխանը վճռական էր. «Հ.Մ.-  
Ը.Մ.ը ինձի եւ նմաններուս սորվեցուցած է լաւ մարդու եւ  
լաւ քաղաքացիի արժանիքները: Ան ցանած է յանձնառու հա-  
յու սերմը: Անկեղծ ըլլալու համար, ես Հ.Մ.Ը.Մ.էն սորված եմ  
մարդու հետ վարուելու, հաղորդակցելու, միջին եզր գտնելու  
եւ ընդհանրապէս ղեկավարումի գանազան ծալքերն ու ար-  
ժանիքները. օրինակ՝ այն տարիներուն, երբ գործիս բերու-  
մով 600 բօիչկ-անձ կը ղեկավարէի՝ ամէնօրեայ տաղտուկնե-  
րով, Հ.Մ.Ը.Մ.ական տարիներու փորձառութիւնս հսկայա-  
կան օգուտ էր: Իսկ ազգային հարցերու մասնակցութիւնս  
հիմնականօրէն կը պարտիմ Հ.Մ.Ը.Մ.ին:

Ես բախտաւոր եմ, որովհետեւ կը պատկանիմ այն սերուն-  
դին, որ առիթը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի լաւագոյն մշակներու  
չունչով դաստիարակուելու: Իսկ այսօրուան հայկական իրա-  
կանութիւնը տարբեր է: Մարտահրաւէրները աւելի ճնշիչ են:  
Ներկայիս, պատանիներն ու երիտասարդները չունին այն  
պատեհութիւնն ու բախտը, զոր ես ունեցայ:

Մեր այն հարցադրումին, թե՛ Հ.Մ.Լ.Մ.ը իր գաղափարական թարմացներով, թե՛ այդ պատգամը փոխանցելու միջոցները արդիականացներով խնդիր ունի՝ եղբ. Շահն էր պատասխանէ. «Գաղափարական թարմացները հարց չկայ եւ բարեփոխուելու համար պէտք չունինք փոխելու համահայկական մեր ռազմավարութիւնը, նպատակն ու կանոնադիրը: Միակ փոփոխութիւնը գործընթացին մէջն է, ռազմավարական ուղեգիծը եւ այսօրուան որդեգրուած աշխատեղածելը որոշ վերաքննութեան ենթարկելն է, ի նպաստ աւելի ճկուն գործունէութեան:

Գալով պատգամը փոխանցելու միջոցներուն, զանոնք եւս պէտք է արդիականացնել: Որոշ անձեր կը կարծեն, թե՛ սկստուութիւնը ժամանակավրէյ է: Թերեւս համաշխարհային սկստուութիւնը՝ մասամբ, բայց ո՛չ Հ.Մ.Լ.Մ.ի սկստուութիւնը, որովհետեւ ան տարբեր է, հիմնականօրէն ազգային ոգիի դաստիարակութեան ծրագիր է: Հարցը սկստական հաւաքովիները աւելի դրաւիչ դարձնելն է, սենեակէն դուրս գալով եւ բնութեան հետ աւելի հաղորդակցելով: Աւելի կարեւորը, պատրաստելն է ատակ խմբապետներ, որոնք կարենան արդիականացնել թե՛ սկստական նիւթերը եւ թե՛ ծրագիրները փոխանցելու ձեւը: Վերջապէս, Հ.Մ.Լ.Մ.ը պէտք է յաղթահարէ կարգ մը երկիրներու (կամ մասնաճիւղերու) մարզական խումբերուն վերաբերող իր ներքին բանավէճը: Յաղթանակի եւ ազգային փառքի կարիքներուն զուգահեռ, մարզիկներու դաստիարակութիւնը պէտք է առաջնահերթ դարձնել»:

### ԱԶԳԸ ԵՒ Հ.Մ.Լ.Մ.Ը

Երբ եղբ. Ենիգոմշեանին դիտել տուինք, որ իր յօդուածներէն մէկուն մէջ կը հաստատէր՝ «Հ.Մ.Լ.Մ.ը հայրենադարձ է, հայրենատէր է եւ կը հաւատայ ազգի մէկութեան», հետեւաբար, ինչպէ՞ս կարելի է այս գաղափարը գործօն ազդակի վերածել համահայկական առումով: Հոս եւս իր պատասխանը շատ յստակ էր. «Այո՛, իբրեւ կազմակերպութիւն, Հ.Մ.Լ.Մ.ը համահայկական ռազմավարութիւն կը կիրարկէ, որովհետեւ իբրեւ ազգ, մենք ունինք կարգ մը բանավէճեր, որոնցմէ մէկը կ'առնչուի Սփիւռք-Հայաստան կապին, այսինքն՝ Սփիւռքը հզօրացնել, թե՛ Հայաստանը: Անհատներ եւ կազմակերպութիւններ կը խօսին Հայաստանի օգտակար ըլլալու անհրաժեշտութեան մասին, սակայն սահմանափակուած են հայրենիք այցելելով եւ նիւթական ներդրումներ կատարելով, բայց ըստ էութեան, հայաստանաբնակ չեն: Այս իմաստով Հ.Մ.Լ.Մ.ը Սփիւռք-Հայաստան բանավէճի ծիրէն ներս չ'իյնար:

Հ.Մ.Լ.Մ.ը նաեւ դուրս է Սփիւռք-Հայաստան միւս վէճէն, թե՛ «Սփիւռքը ժամանակաւոր է», եւ թե՛ «կարեւորը հայրենատէր ըլլալը չէ, այլ՝ հայրենադարձ եւ հայրենատէր»: Յստակ է, որ Հ.Մ.Լ.Մ.ը մինչեւ 1989 գործած է միայն Սփիւռքի մէջ: Սակայն այդ



թուականէն սկսեալ, ան գործնապէս արդէն հայրենադարձ է, հայրենատէր է, Հայաստանի մէջ պետականօրէն ճանչցուած կառույց է, իբրեւ Հ.Ա.Ս.Կ. (Հայաստանի Ազգային Սկստական Կազմակերպութիւն, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.): Հ.Մ.Լ.Մ.ը իբրեւ կառույց, 28 տարի է ի վեր արդէն ներկայ է Հայաստանի կեանքին մէջ, ուր ունի Հայաստանի քաղաքացի երիտասարդ անդամներ: Մինչեւ այսօր, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի շարքերուն մէջ թրծուած են հազարաւոր պատանի-երիտասարդներ, որոնք դաստիարակուած են Հ.Մ.Լ.Մ.ի նշանաբանով ու շունչով, եւ այս ձեւով ալ՝ Հ.Մ.Լ.Մ.ը Հայաստանի մէջ պատրաստած է եւ տակաւին կը պատրաստէ հայաստանաբնակ սերունդ մը, որ մաքուր է իր նկարագիրով, ինքնավստահ եւ գործօն քաղաքացի է, կը հաւատայ ընկերային արդարութեան եւ իր հետ ուրիշներ եւս բարձրացնելու սկզբունքին»:

Սակայն, դարձեալ իր յօդուածներէն մէկուն մէջ, եղբ. Շահն կ'ընդգծէր կարեւորութիւնը այլ կազմակերպութիւններու հետ համադրուած գործակցութեան (ՀՕՄ, Համազգային, երիտասարդական միութիւններ եւ այլն): Արդեօք ինք ինչպէ՞ս կը պատկերացնէ նման համադրում մը՝ վարչակա՞ն, գաղափարակա՞ն, գործունէութեան դաշտերո՞ւ:

Յստակ է այս մասին իր մօտեցումը եւս. «Գաղափարական իմաստով, հարց չկայ. բուն խնդիրը կազմակերպչական եւ ռազմավարական է: Այդ կազմակերպութիւնները բոլորն ալ գաղափարական նոյն նպատակները ունին եւ մեծ գաղութներու մէջ գիրար կ'ամբողջացնեն: Երկու ձեւի համադրում կը տեսնեմ:

Առաջինը, ներկայ իրավիճակը բարեփոխելու կը միտի: Մենք ունինք ուղեկից կազմակերպութիւններ, որոնք իրարու հետ ծրագրումի իմաստով հաղորդակցութիւն չունին: Այս օրերուս անկարելի է առանց համադրումի արդիւնաւոր աշխատանք տանիլ:

Երկրորդը, օրուան պահանջներու հիման վրայ ռազմավարական առաջարկ է: Ժամանակին, մեծ կամ փոքր գաղութները եւ գաղութի կազմակերպչական պահանջները նմանօրինակ էին: Լաւ կամ գէշ, բոլոր գաղութները, իրենց կազմակերպութիւնները, յարմար ղեկավարներ ունէին: Այսօր ունինք գաղութներ, մասնաճիւղեր, որոնք տակաւին ունին նոյն կարողութիւնը, օրինակ՝ Լոս Անձելըս: Բայց եթէ կարկինը լայնցնենք ու հասնինք, օրինակ՝ Սան Տիէկօ, Ուոլինգթոն Գրիք, թերեւս Ֆինիքս ու ապագային ալ Սիէթլը (դեռ չենք խօսիր Եւրոպայի զանազան երկիրներուն մասին), պիտի տեսնենք, որ կացութիւնը շատ տարբեր է. թե՛ գաղութը փոքր է եւ թե՛ ղեկավար մարդուժը բաւարար չէ առանձին-առանձին եկեղեցի եւ 3-5 տարբեր կազմակերպութիւններ ղեկավարելու համար:

Հետեւաբար, աւելի արդիւնաւէտ է համախմբուելը, ուժերը կեդրոնացնելով աւելի գործնական արդիւնքի հասնիլը: Այսինքն, աւելի ճկուն ըլլալով, նմանօրինակ առաքելութեան կոչուած այլ կառույցներու հետ մի-



ասնաբար, պէտք է մոռնալ մեր ներկայ կառուցային սահմանափակումները եւ գաղութ առ գաղութ ուսումնասիրել հաւաքական ուժերով (եկեղեցի, Հ.Մ.Ը.Մ., ՀՕՄ, Համագգային եւ այլ կառույցներ) գործելու ճկուն տարբերակ մը:

Բայց ինչպէ՞ս ընել, որ երիտասարդներու հայեցի դաստիարակութիւնը քանակապէս եւ որակապէս բարելաւուի, առանց որ մեր միւս կազմակերպութիւնները տուժեն իրենց առաքելութեան մէջ: Ի՞նչ ապահովութիւն կարելի է ներշնչել անոնց, որպէսզի կարելի ըլլայ ապահովել բոլոր ուժերուն գործակցութիւնը: Հո՞ս է հարցը, որ կարծիքովս աւելի զգացական է եւ ոչ թէ առարկայական, որովհետեւ այս առաջարկս միայն փոքր գաղութներուն կը վերաբերի, ուր կա՛մ զանազան կազմակերպութիւններ չկան կամ այդ կազմակերպութիւնները կը կաղան»:

**Հ.Մ.Ը.Մ.Ը ԻԲՐԵՒ ԴՊՐՈՑ**

Ահաւասիկ կը ծագի այլ հարցադրում մը: Հ.Մ.Ը.Մ.ը երբ կը ձգտի 6-18 տարեկան հայ անհատը դաստիարակել իբրեւ յանձնառու հայ, հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է տեսնել իբրեւ արտադարոցական իւրայատուկ... «դպրոց»:

Եղբ. Շահէ կը բացատրէ, թէ այո՛, «աւելի քան որեւէ այլ կազմակերպութիւն, Հ.Մ.Ը.Մ.ը արտադարոցական հայեցի դաստիարակութեան օրրան է: Իր կառույցին քաջողականութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ին կ'անդամակցին թէ՛ հայկական եւ թէ՛ օտար դպրոց յաճախող պատանիներ: Ներկայիս, 25 տարեկանէն վար իր անդամներուն 60-65 տոկոսը օտար դպրոց կը յաճախէ: Այսինքն, շուրջ 8 հազար պատանի-երիտասարդներ միայն Հ.Մ.Ը.Մ.ի երդիքին տակ է, որ կը ստանան հայկական սնունդ, նոյնիսկ եթէ անկատար է ատիկա:

«Այո՛, Հ.Մ.Ը.Մ.ը դպրոցներէն դուրս գործող իւրայատուկ... դպրոց է: Այս ռազմավարութեան նպատակը պիտի ըլլայ մէջտեղ բերել 21-րդ դարու «սփիւռքցիին» եւ տուեալ երկրի քաղաքացիին նախատիպ մը, որ հպարտ է իր ապրած երկիրով, բայց աւելի՛ հպարտ եւ մանաւանդ՝ յանձնառու իր հայ-

կական պատկանելիութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ի երդիքին տակ յղուած 6-18 տարեկանները յանձնառու հայ դարձնելու առաքելութիւնը կը շարունակուի եւ այս ձեւով, Հ.Մ.Ը.Մ.ը ենթահողը կը պատրաստէ 20 տարեկանէն վեր «Հ.Մ.Ը.Մ.աւարտ» ոչ կրաւորական երիտասարդներու պատրաստութեան, ինչու չէ նաեւ՝ քաղաքական գիտակցութեամբ օժտուած դաստիարակութեամբ: Այս իմաստով, Նաւասարդեան մարզախաղերը արտադարոցական դասաւանդութեան մէկ մասնիկն են: Ամէն տարի, իւրաքանչիւր Նաւասարդեանին, քանի մը շաբթուան վրայ երկարող մարզախաղերուն կը մասնակցին աւելի քան 3000 մարզիկներ, որոնցմէ շատեր կ'իւրացնեն Հ.Մ.Ը.Մ.ական ապրումը եւ աւանդը»:

Տակաւին կայ այն խնդիրը, որ արտադարոցական դաստիարակութիւն անպայմանօրէն հայ լեզուի ուսուցում չի նշանակեր: Հայ լեզուի իւրացումը, նոյնիսկ անոնց համար, որոնք հայկական վարժարան կը յաճախեն, չի կրնար սահմանափակուիլ դպրոցով: Թէեւ «տակաւին կան նուիրեալ ծնողներ, որոնք կարողացած են հայերէնը սիրելի դարձնել իրենց զաւակներուն եւ տան մէջ հայերէնը գործածել իբրեւ առաջին լեզու, սակայն հայեցի դաստիարակութիւնն ու հայաստութեան ուսուցումը կ'իյնան դպրոցներու եւ այլ կառույցներու ուսերուն»: Հետեւաբար, կը շարունակէ ան, «օտար դպրոց յաճախող հայ երեխաներու (որոնք մեծամասնութիւն են) հայեցի դաստիարակութեան պատասխանատուութիւնը ինկած է արտադարոցական կառույցներու ուսին: Այս չի նշանակեր, որ Հ.Մ.Ը.Մ.ը հայ լեզու պիտի դասաւանդէ, բայց անպայմանօրէն պիտի օժանդակէ եւ հո՛ս է, որ Հ.Մ.Ը.Մ.ի եւ ամէնօրեայ դպրոցներու այս աշխատանքը մէկ վայրի մէջ կեդրոնացնելը իր դրական արդիւնքը կ'ունենայ»:

Այս բոլորէն անկախ, Հ.Մ.Ը.Մ.ի մէջ իր «կենսագրութեանէն» մեկնած, անկիւնադարձային ի՞նչ հանգրուանի ակնաստես դարձած է եղբ. Շահէ:

Յուզիչ է իր պատասխանը, որովհետեւ ան կը թուէ անունները վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու, որոնք այսօր չկան այլեւս: Ան կ'ըսէ. «Անկիւնադարձային, ամէնէն տպաւորիչ հանգրուանը, որ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքիս մէջ բախտաւորութիւնը ունեցած եմ ապրելու, Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կազմակերպութիւն դառնալն էր: 1973-1975 տարիները ինձի առիթը տուին սորվելու եւ միաժամանակ գործակցելու Հ.Մ.Ը.Մ.ական լաւագոյն մշակներուն հետ: Ըլլայ ատիկա եղբ. Նշան Թիւսիւրգեանն ու Անդրանիկ Ուրֆալեանը (որոնք զիս քաջալերեցին սկառտական համագաղութային Մրազիր-կանոնագիրը խմբագրելու), ըլլայ՝ եղբայրներ Վարդգէս Տէր կարապետեանը, Երուանդ Տէմիրճեանը, Յ. Գեղարզը, Սուրէն եւ Վարուժան Մուրատեանները եւ ուրիշ շատեր, որոնք ամբողջացուցին դաստիարակութիւնս: Այդ օրերու խանդավառութիւնն ու փորձառութիւնը կեանքի անմոռանալի յիշատակներ են»:





# Հ.Ա.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Հ.Ա.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի շրջանի վերջին փաստաւեան կարեւորագոյն իրադարձութիւններէն մէկը հանդիսացաւ Հ.Ա.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան արեւնապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի փաստօրէյ այցելութիւնը Արժանթին եւ Ուրուուէյ: Յիշատակելի այցելութիւն մը, որուն ընթացքին եղբ. Մկրտիչեան խօսքով եւ իրախոսանքով շրջանի միութեանակաւններուն փոխանցեց իր մեծ գնահատանքը զանոնք մղելով յաւելեալ աշխատանքի եւ նորանոր յաջողութիւններու:



## ՊՈՒՆԵՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԷՋ

Եղբ. Մկրտիչեան Պուէնոս Այրէս քաղաքէն 28 Օգոստոս 2017-ին: Զինք դիմաւորեցին Հ.Ա.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտո Թորգոմեան, Հ.Ա.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տանիէլ Ճիւպէլեան եւ Հ.Ա.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Օրասիօ Թերզեան:

Նոյն օրը, երեկոյեան, եղբ. Մկրտիչեան հանդիպում մը ունեցաւ Հ.Ա.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Երջանային Վարչութեան հետ: Հանդիպումին արծարծուեցան հետեւեալ նիւթերը.- Հ.Ա.Ը.Մ.ը Հայաստանի, Սփիւռքի եւ յատկապէս Հարաւային Ամերիկայի շրջաններուն մէջ, համա-Հ.Ա.Ը.Մ.ական վերջին մարզախաղերը, համա-Հ.Ա.Ը.Մ.ական յառաջիկայ բանակումը, ինչպէս նաեւ՝ Հ.Ա.Ը.Մ.ի հիմնադրութեան հարիւրամեակի տօնակատարութիւնները:

Յաջորդ օր, Կեդրոնական Վարչու-

թեան ատենապետը տեսակցեցաւ Հ.Ա.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Արթուրօ Յովհաննէսեանի եւ Գարլոս Սէֆէրեանի հետ: Ապա, Երջանային Վարչութեան անդամ եղբայրներու հետ ան մասնակցեցաւ Հ.Ա.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան ժողովին:

Ժողովին եղբ. Մկրտիչեան խօսեցաւ 2018-ին Հայաստանի մէջ տեղի ունենալիք միութեան 100-ամեակի ձեռնարկներուն եւ համա-Հ.Ա.Ը.Մ.ական բանակումին մասին: Ժողովին աւարտին տեղի ունեցաւ եղբայրական ընթրիք, որուն ընթացքին խօսուեցաւ միութեան եւ Սփիւռքի առնչուող հարցերու մասին:

2 Սեպտեմբերին, Հ.Ա.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտո Թորգոմեանի, Հարաւային Ամերիկայի Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տանիէլ Ճիւպէլեանի, Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Օրասիօ Թերզեանի եւ Հ.Յ.Դ. Հարաւային Ամերիկայի

Կեդրոնական Կոմիտէի անդամ Էտուարտօ Կոստանեանի հետ, եղբ. Մկրտիչեան հանդիպում մը ունեցաւ Արժանթինի մօտ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան տիկ. Եսթեր Մկրտումեանի եւ հիւպատոս տիկ. Էլէն Արզումանեանի հետ:

5 Սեպտեմբերին, եղբ. Մկրտիչեան հանդիպում մը ունեցաւ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Պուէնոս Այրէսի ատենապետ Ռուբէն Կէտիլեանի եւ այլ վարչականներու հետ:

6 Սեպտեմբերին, Արժանթինի ըսկառուներու զաղուծային բաժինի հրաւերին ընդառաջելով, եղբ. Մկրտիչեան այցելեց «Բուրու» ռատիոկայանը, ուր հարցազրոյց մը ունեցաւ:

Հարցազրոյցէն ետք, եղբ. Մկրտիչեան հանդիպում մը ունեցաւ Արժանթինի ազգային սկառուտական խմբապետ եղբ. Սեուարտօ Մաթէի հետ: Հանդիպումին արծարծուեցան Հ.Ա.Ը.Մ.ի, Հարաւային Ամերիկայի շրջանի եւ Արժանթինի սկառուտական կազմակեր-



պուլթեան հետ համագործակցութեան վերաբերող հարցեր:

Այս առիթով, եղբ. Մկրտիչեան Հ.Մ.-Ը.Մ.-ի անունով Խեռարտօ Մաթէին յանձնեց խաչքար մը, իսկ Մաթէ եղբ. Մկրտիչեանին փոխանցեց արժանթիւնեան յուշանուէր մը:

Հարցազրոյցին եւ անոր յաջորդած հանդիպումին ներկայ գտնուեցան Հ.Մ.-Ը.Մ.-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տանիէլ Ճիւպէլեան, Հ.Մ.-Ը.Մ.-ի սկաուտական Շրջանային Խմբապետ եղբ. Ակոսթին Անալեան, Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Գարլոս Սէֆէրեան եւ Արժանթինի սկաուտներու գաղութային բաժնին Հ.Մ.-Ը.Մ.-ի ներկայացուցիչ քոյր Պէթի Սէֆէրեան:

9 Սեպտեմբերին, եղբ. Մկրտիչեան ներկայ գտնուեցաւ Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական, Շրջանային եւ Պուէնոս Այրէսի

վարչական անդամներու հետ ճաշկերոյցի մը, որմէ ետք ան մասնակցեցաւ «Արարատ» սկաուտական խումբի դրօշակի արարողութեան: Այնուհետեւ, ան հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական, Շրջանային եւ Պուէնոս Այրէսի վարչականներու, սկաուտներու եւ երիտասարդներու հետ, որոնք հարցումներ ուղղեցին հետեւեալ նիւթերու շուրջ:- 2018-ի համա-Հ.Մ.-Ը.Մ.-ական բանակում, Հ.Մ.-Ը.Մ.-ի համաշխարհային կառույց, Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան աշխատանքներ, ինչպէս նաեւ՝ Հայ Դատի վերաբերեալ հարցումներ: Հարկ է նշել, որ արարողութեան եւ հանդիպումին սկաուտները ներկայ եղան պաշտօնական լրիւ համազգեստով:

Նոյն օրը, երեկոյեան, եղբ. Մկրտիչեան մասնակցեցաւ Հ.Մ.-Ը.Մ.-ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի 90-ամեակի ընթրիքին, որուն ընթացքին եղբայրը փոխան-

ցեց Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան պատգամը (տեսնել էջ 4-8), շնորհաւորելով մասնաճիւղը բեղուն աշխատանքին եւ Հ.Մ.-Ը.Մ.-ական ամուր ոգիին համար: Եղբայրը խօսեցաւ նաեւ Հ.Մ.-Ը.Մ.-ի 100-ամեակի տօնակատարութիւններուն մասին:

**ԳՈՐՏՈՊԱՅԻ Մէջ**

30 Օգոստոսի կէսօրին, Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտօ Թորգոմեանի ընկերակցութեամբ, եղբ. Մկրտիչեան այցելեց Գորտոպա: Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամները դիմաւորեցին Հ.Մ.-Ը.Մ.-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Սամի Մերտինեան, Գորտոպայի մասնաճիւղի ատենապետ եղբ. Արթին Մերտինեան, Հ.Յ.Դ. տեղւոյն կոմիտէի անդամ Ռոպերթօ Թերզեան, ՀՕՄ-ի Գորտոպայի «Սօսէ» մասնաճիւղի ատենապետուհի Կիւլու Թաւքայեան, ՀՕՄ-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան անդամ Քրիտիանա Մարսօ-Տօնիկեան, Հ.Մ.-Ը.Մ.-ի Գորտոպայի մասնաճիւղի անդամներ եւ «Արագած» սկաուտական խումբի խմբապետ եղբ. Մարիանօ Տօնիկեան:

Գորտոպայի մէջ, եղբ. Մկրտիչեան այցելեց «Անդրանիկ» ակումբ, ուր իրեն կը սպասէր Հ.Մ.-Ը.Մ.-ի «Արագած» սկաուտական խումբը:

Եղբայրը իր առաջին հանդիպումը կատարեց սկաուտական խումբի խմբապետներուն հետ: Ընկերական մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ միտքերու փոխանակում եւ հարց-պատասխան:



Յաջորդեց եղբայր Մկրտիչեանի գրոյցը՝ «Անդրանիկ» ակումբին մէջ գործող կազմակերպութիւններու անդամներուն հետ:

80 հոգիէ աւելի լեցուն սրահին մէջ եղբ. Մկրտիչեան յստակօրէն ներկայացուց միութեան ներկայ եւ ապագայ պատկերը, պարզ ու հասկնալի պատասխաններ տալով իւրաքանչիւր հարցումի:

Զրոյցի աւարտին, ներկաները ծաղկեպսակով մը յարգանքի իրենց տուրքը ընծայեցին ազգային հերոս Արամ Երկանեանի շիրիմին, որ կը գտնուի ակումբին մէջ: Ապա, գաղութի հոգեւոր հովիւ Յարութիւն Քհնյ. Ստեփանեանի հետ, անոնք աղօթեցին «Տէրունական աղօթք»ը:

Աւարտին, մասնաճիւղին վարչութիւնը հիւրասիրութեամբ մը պատուեց ներկաները:

Հինգշաբթի, 31 Օգոստոսի առաւօտեան, եղբ. Մկրտիչեան պաշտօնապէս այցելեց «Մարիո Քեմփէս» մարզադաշտ, ուր հանդիպում մը ունեցաւ Գորտոպայի մարզախաղերու կեդրոնի ատենապետ Մետարտօ Լիկորիայի հետ:

Հանդիպումին ընթացքին տեղի ունեցաւ գաղափարներու փոխանակում, կազմակերպութեան եւ աշխատելակերպի գանազան ձեւերու մասին:

Կէսօրին, ճաշերոյց մը տեղի ունեցաւ Գորտոպայի հայ գաղութի ղեկավարներուն հետ, որմէ ետք եղբ. Մկրտիչեան գաղութի ատենապետ եղբ. Էտուարտօ Թովթուճեանի հետ այցելեց հայկական Սահակ-Մեսրոպ դպրոցը: Ապա, Յարութիւն Քհնյ. Ստեփանեանի գինք դիմաւորեց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ, ուր տեղեկութիւններ տուաւ 1926-ին հիմնուած Հարաւային Ամերիկայի այս առաջին եկեղեցւոյ մասին:

Եկեղեցւոյ այցելութենէն ետք, Ազգային Առաջնորդարանին դահլիճին մէջ տեղի ունեցաւ մտերմիկ հանդիպում մը, ուր եղբայրներ Մկրտիչեան եւ Թովթուճեան խօսքեր արտասանեցին եւ այս եզակի հանդիպումը դրուատեցին:

Երեկոյեան, եղբ. Մկրտիչեան հանդիպում մը ունեցաւ



Հ.Մ.Ը.Մ-ի Գորտոպայի մասնաճիւղի վարչութեան հետ: Հանդիպումին ընթացքին տեղի ունեցաւ գաղափարներու փոխանակում, հարց ու պատասխաններ կարգ մը մտահոգութիւններու, Սփիւռքի եւ Հ.Մ.Ը.Մ-ի ապագային մասին:

Հանդիպումին յաջորդեց խորովածի ընկերային երեկոյ մը՝ ի պատիւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետին:

**ՄՈՆԹԷՎԻՏԷՆՈՅ ՄԷՋ**

2 եւ 3 Սեպտեմբերին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան այցելեց Հ.Մ.Ը.Մ-ի Մոնթէվիտէոյի մասնաճիւղ, ընկերակցութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտօ Թորգոմեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տանիէլ Ճիւպէլեանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերի-

կայի Երջանային Վարչութեան անդամ քոյր Թամարա Պլոյս Հոճաճանեանի:

Հիւրերը դիմաւորեցին Հ.Մ.Ը.Մ-ի Մոնթէվիտէոյի մասնաճիւղի ատենապետուհի քոյր Ալէքսիա Պարպարեան, մասնաճիւղի վարչութեան անդամներ, Հ.Մ.Ը.Մ-ի Երջանային Վարչութեան անդամ քոյր Անգինէ Աթթարեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի Սկառտական Խորհուրդի անդամ եղբ. Արամ Պարաբեան: Ներկայ էին նաեւ «Կամք» սկառտական խումբի անդամները եւ Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը:

Ժամանումէն եւ ճաշէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակութիւնը այցելեց «Կոմիտաս» ռատրոթամ եւ մասնակցեցաւ հարցազրոյցի մը: Այս մէկը առիթ մը եղաւ ունկնդիրներուն ծանօթանալու Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետին այցելութեան պատճառներուն եւ լսելու եղբայրներ Գառնիկ Մկրտիչեանի, Արմանտօ Թորգոմեանի, Տանիէլ Ճիւպէլեանի եւ քոյր Ալէքսիա Պարպարեանի խօսքերը՝ ուղղուած բոլորին:

Ապա, պատուիրակութիւնը այցելեց «Վռամեան» ակումբ, ուր կը սպասէր սկառտական խումբը: Ակումբին մուտքին, հայկական տարագներ հագած երկու քոյրեր աւանդական բարի գալուստի արարողութիւնը կատարեցին աղ ու հացով:

Ակումբին զանազան սրահներ





րը չընկել էտք, պատուիրակութիւնը հանդիպում մը ունեցաւ Հ.Յ.Դ. «Վռամեան» կոմիտէին հետ: Հանդիպումին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան եւ Սկստական Խորհուրդի անդամներ:

Պատիւ մը եղաւ մասնաճիւղին, յատկապէս «Կամք» սկստական խումբին համար, եղբ. Մկրտիչեանի ներկայութիւնը դրօշակի արարողութեան: Այս առիթով եղբայրը իր խօսքը ուղղեց ներկաներուն եւ իբրեւ յիշատակ ստացաւ «Կամք» խումբին փողկապը եւ շապիկը:

«Կամք»ի խմբապետութիւնը եւ մարզիկները մասնակցեցան եղբ. Մկրտիչեանի հետ բաց հանդիպումի մը, որուն ներկայ եղան եղբայրներ Արմանտո Թորգոմեան, Տանիէլ Ճիւլիանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան անդամներ: Հանդիպումին ընթացքին, եղբոր խօսքերէն ետք, ներկաները առիթը ունեցան հարցումներ ուղղելու ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ.ի եւ մասնաւորապէս միութեան ապագայ ծրագիրներուն մասին:

Գիշերը տեղի ունեցաւ եղբ. Մկրտիչեանի եւ իրեն ընկերակցող պատասխանատուներուն ի պատիւ բարի գալուստի ընթրիք՝ «Վռամեան» ակումբին մէջ: Մասնակցեցան շուրջ 70 հոգի, եղբայրական միջնորդութիւն մը մէջ: Ընթրիքը սկսաւ Յակոբ Արք. Գրչընճեանի «Տէրունական աղօթք»ով եւ խօսքով: Ապա, խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթէվիտէոյի մասնաճիւղի ատենապետուհի քոյր Ալէքսիա Պարպարեան, Հ.Յ.Դ. Մոնթէվիտէոյի կոմիտէի անդամ Զապէլ Գուլումեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տանիէլ Ճիւլիանի:

Ընթրիքէն ետք, ներկաներուն իր պատգամը փոխանցելէ ետք, եղբ. Մկրտիչեան Գառնիկը մեծարուեցաւ յուշատախտակով մը:

Կիրակի, 3 Սեպտեմբերին, եղբ. Մկրտիչեան, իրեն ընկերակցող պատուիրակութեան հետ, ներկայ գտնուեցաւ Ս. Ներսէս Շնորհալի եկեղեցւոյ մէջ մատուցուած Պատարագին:

Յետմիջօրէին, եղբ. Մկրտիչեան ներկայ գտնուեցաւ Ֆութպոլի մրցումի:

Աւելի ուշ, Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղի վարչութեան հետ գումարուեցաւ ժողով մը, որուն մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան անդամներ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտո Թորգոմեան: Ժողովին ընթացքին տեղի ունեցաւ գաղափարներու փոխանակում: Ներկաները առիթը ունեցան հարցումներ հարցընելու:

Ժողովին փակումէն ետք տեղի ունեցաւ հրաժեշտի ընթրիք, որուն ընթացքին ներկաները իրենց սրտի խօսքերը յայտնեցին այս կարեւոր այցելութեան մասին:

Եղբ. Մկրտիչեանի շրջան այցելութիւնը, անկասկած, նոր ուժ ներարկեց եւ խրախուսեց մասնաճիւղին մեծ ընտանիքը՝ աշխատանքը շարունակելու վերանորոգ յանձնառութեամբ, միշտ բարձր պահելով Հ.Մ.Ը.Մ.ի եւ հայութեան անունը:



*Elegance Plus*

Shoes, Bags,  
Fashion Accessories  
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.  
Beirut - Lebanon  
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556  
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812  
E-mail: hratch@goldenmountains.com  
hratchboy@hotmail.com

**H. N. BOYADJIAN & CO.**

# Հ.Մ.Ը.Մ. ՄՈՆԹԵՎԻՏԵՕ ՖՈՒԹՍԱԼԻ ԱԽՈՅԵԱՆ

## Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեվիտեոյի Մասնաճիւղի Վարչութիւնի ՄՈՆԹԵՎԻՏՕ

**Ո**ւրուկուէյի մէջ, ֆուլթպոլը միշտ ալ ունեցած է լայն ժողովրդականութիւն: Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեվիտեոյի մասնաճիւղը (հիմնուած՝ 1987-ին), իր պատմութեան 30 տարիներուն, մասնակցած է ֆուլթպոլի զանազան ձեւի մրցումներու եւ մրցաշարքերու՝ մեծ դաշտի սովորական ֆուլթպոլէն մինչեւ փակ դաշտերու մէջ կիրարկուող ֆուլթսալ: Մասնաճիւղը արձանագրած է պատուաբեր բազմաթիւ արդիւնքներ, միշտ ի մտի ունենալով որ ֆուլթպոլը միջոց է եւ երբեք՝ նպատակ: Ֆուլթպոլի ճամբով միութեան շուրջ կը համախմբուի երիտասարդութիւն մը, որ հայեցի պարուսմներով կը մեծնայ եւ քաղաքացիական առողջ դաստիարակութիւն կը ստանայ:

Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեվիտեոյի մասնաճիւղի ֆուլթսալի խումբը կը մասնակցի երկրի ախոյեանութեան մրցումներուն: Անցեալ տարի, խումբը ամէնէն նուազ թիւով կոլեր ստացող խումբը ըլլալով հանդիսացաւ երկրի փոխ ախոյեան:

Այս տարի, խումբը օժտուեցաւ երիտասարդ նոր տարրերով եւ շարք մը յաղթանակներէ ետք յաջողեցաւ հասնիլ ախոյեանութեան արծաթեայ բաժակի հանգրուանին: Աւարտականին, ան իր դէմ ունեցաւ Խուվէնզուա Ունիտա հզօր խումբը եւ բաւական սուր մրցակցութենէ ետք, Միքայէլ Տէմիրճեանի եւ Միսաք Փանոսեանի կողբուն շնորհիւ կարողացաւ 2-0 արդիւնքով պարտութեան մատնել զայն եւ տիրանալ



Ախոյեան կազմը. ոսքի, ձախէն աջ՝ Միսաք Տրտրեան, Ալէսօ Սոզեան, Խեռարսո Փօլատեան, Ժաննի Թրիփոսի, Քիան Գապէգաս, Գարլոս Պիանչի (մարզիչ):

Նստած, ձախէն աջ՝ Միքայէլ Տէմիրճեան, Տիէկօ Գոյուսմճեան, Միսաք Փանոսեան, Արամ Վարժապետեան, Անդրանիկ Փանոսեան եւ Կապրիէլ Պարսամեան:

Նկարէն կը բացակային Բաֆֆի Տէմիրճեան եւ Գարլոս Մարգարեան:

Երկրի ախոյեանութեան տիտղոսին:

Ուրախութիւն է աւելցնել, որ ախոյեանական բաժակի տուչութեան օրը Հ.Մ.Ը.Մ. արժանացաւ նաեւ «Արդար խաղ»ի («Fair play») բաժակին, ինչ որ գոհունակութեան եւ հպարտութեան առիթ մը եղաւ մասնաճիւղի մարզիկներուն, անդամներուն եւ համակիր լայն շրջանակին համար:



Այս առիթը կը հրաւիրենք մասնաճիւղին լուրերուն հետեւելու՝ Like ընելով դիմատետրի ՀՄԸՄ-Homenetmen Montevideo էջը:



# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒՒՐՈՒԱԾ ՀԵԾԵԼԱՐՇԱԽ՝ ԱԹԷՆՔԻ ՄԷՋ

## Թղթակից ԱԹԷՆՔ

**Հ**ՄԸՄ-ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՂԱՆԱՅԻՆ Վարչու-թիւնը Հայոց Ցեղասպանութեան նուիրուած իր հինգերորդ հեծելարշաւը կազմակերպեց 15 Հոկտեմբեր 2017-ին, Նէա Չմիրունիի Հայոց Ցեղասպանութեան յուշարձանի հրապարակին առջեւ: Հեծելարշաւը կազմակերպուեցաւ Նէա Չմիրունիի փոխ քաղաքապետուհի տիկ. Քարիտֆիլիի մարզական եւ մշակութային կազմի գրասենեակին հետ գործակցաբար, հովանաւորութեամբ՝ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ հեծելարշաւի ֆետերասիոնին:

Ճիշդ է, որ հեծելարշաւին թուականը հեռու էր Ապրիլին, բայց շատ յուզիչ էր, որովհետեւ այս կարեւոր ձեռնարկին իրագործման օժանդակեցին բոլորը:

Մեթրոփոլիթան հիւանդանոցի փոխադրակառքը, Կարմիր Նաչի կամաւոր Սամարիդէսը, երթեւեկի Քայլիթէյի քաղաքապետութեան աշխատակողները, բոլորը իրենց հանգիստի օրը՝ Կիրակին զոհեցին քանի մը ժամուան համար եւ ներկայ գտնուե-

ցան հեծելարշաւին՝ սրտանց օժանդակելու եւ իրենց յարգանքը յայտնելու մեր մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակին:

Յուզիչ վարկեաններ պարեցանք, երբ տեսանք մօտեցող յոյն փոքրիկներ, որոնք իրենց ծնողներուն արտօնութիւնը կը խնդրէին, որպէսզի ամբողջացնեն մրցումին մասնակցութեան թուղթը: Մեր աչքերուն նայելով անոնք անհամբեր կը սպասէին մրցումին մասնակցութեան մեր դրական պատասխանին:

Մեծ էր թիւը մասնակցողներուն, որոնք գիտակցաբար եկան յարգելու ձեռնարկին նպատակը:

Տարուան սովորական օր մը յոյներ եւ հայեր լեցուցին այդ վայրն ու ճամ-

բաները՝ եռագոյններով, հեծիկի գանգերով: Կանգ առին հանրակառքերն ու ինքնաշարժները, որպէսզի մենք անցնինք:

Շատեր, որոնք հրապարակէն կ'անցնէին, հայկական երաժշտութիւն կը լսէին եւ հայ ազգային ու միութենական դրօշակներուն ծածանումը կը տեսնէին, կը հարցնէին օրուան նպատակը, իսկ մեր կամաւոր քոյրերն ու եղբայրներն ալ կը բացատրէին ձեռնարկին իմաստը, ըսելով՝ «1918-ին մանուկ մը ծնաւ հայոց ցաւէն, տառապանքէն: Ջարդին արիւնով մկրտեցին այս մանուկը եւ զայն կոչեցին Հ.Մ.Ը.Մ.: Իսկ այդ մանուկին պարտականութիւն տուին ծառայել հայ ժողովուրդին»:

Այս առիթով, եղբ. Յակոբ Եթիմեան յունարէնով արտասանեց պատգամ մը: Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի կողմէ տիկ. Քարիտֆիլի կազմին յանձնուեցաւ երախտագիտութեան յուշատախտակ մը:

Ձի բաւեր միայն Ապրիլին մեր նահատակները յիշելը, կարեւոր է անոնց յիշատակը անդադար յարգելը: Ինչպէս կ'ըսեն՝ եթէ չյիշես, կը մոռցուին:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՈՒԷՏԻ ՄԿԱՌՈՒՏՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԿԱՌՈՒՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ

Թղթակից  
ԱԹԵՆՔ

Այս տարի, Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի սկաուտական տարեկան բանակումին իրենց մասնակցությունը բերին Հ.Մ.Ը.Մ.Ի Շուէտի շրջանէն 36 երէց սկաուտներ եւ աստիճանաւորական կազմի անդամներ:

Բանակումին ծրագիրն էր Ա. եւ Բ. կարգի դաստիարակություն:

Շուէտէն խմբապետուհի քոյր Կարինէ Սարգիսեան եւ Յունաստանէն մասնաճիւղի խմբապետ եղբ. Վիգէն Մինասեան պատասխանատուներն էին այս բանակումին, որուն աշխատանքներուն օժանդակեց եղբ. Եղիշէ Շահապեան:

Բանակումին Յունաստանի մասնաճիւղերէն մասնակցեցան 10 Առաջնորդներ, Փոխ Առաջնորդներ եւ երէցներ: Իրենց կողքին, անոնք ունեցան օժանդակ խոհարարուհիներ՝ քոյրեր Գոհար Ալեանաքեան, Ծովիկ Մինասեան, Վերժին Գէորգեան եւ Մակի Հալլաճեան:

Բանակումին ընթացքին սկաուտները փայտերով ու չուաններով պատրաստեցին իրենց բանակավայրը, լարեցին խմբակներուն վրանները եւ հետեւեցան գիտելիքներու դաստիարակութեան: Յետմիջօրէնները անոնք լողացին, իսկ երեկոները՝ խորոյկին շուրջ անմոռանալի պահեր անցուցին:

Հ.Մ.Ը.Մ.Ի Շուէտի եւ Յունաստանի սկաուտներուն սիրտերը միացան ու փոքր Հայաստան մը կազմեցին բանակավայրին մէջ՝ երգերով, կանչերով եւ պարերով:



Գաստիարակութեան նիւթերէն մէկն էր «Հայ եկեղեցւոյ հինգ տաղաւարները եւ Ս. Հաղորդութեան խորհուրդը», գոր ներկայացուց Գոքինիոյ հոգեւոր հովիւ Վահրիճ Վրդ. Ղարախանեան: Ներկայացուեցաւ նաեւ «Տիպար խմբապետը» նիւթը՝ քոյր Գոհար Ալեանաքեանի կողմէ:

Բանակումի աւարտին, բանակողները այցելեցին պատմական Փոսիտոնայի Տաճարը եւ Լաւրիօ շրջանը, ուր անոնք պտրտեցան եւ ճաշեցին: Ապա, բանակումի մասնակցողները ժամանեցին Ֆիքսի սկաուտներ, ուր հիւրերը մնացին երկու օր՝ մինչեւ Շուէտ իրենց վերադարձը:

Հարկ է նշել, որ իբրեւ շրջան, Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի ընտանիքը լիովին կատարեց իր պարտականութիւնը Շուէտի քոյր պատուիրակութեան հանդէպ՝ «միշտ պատրաստ» ոգիով: Իրենց օժանդակությունները չզլացան նաեւ Աթէնքի աստիճանաւորները, Հ.Մ.Ը.Մ.Ի տեղւոյն վարչությունը,

շրջանի կոմիտէությունը եւ սկաուտներու անձնակազմը:


Հիւրերը այցելություն մը տուին Ս. Կարապետ եկեղեցի եւ հանդիպում մը ունեցան հոգեւոր հովիւ Նարեկ Քհնյ. Շահինեանի հետ: Քահանայ Հայրը յաջորդ գիշեր ինք հանդիպեցաւ սկաուտներ եւ եկեղեցւոյ թաղական խորհուրդին կողմէ ընթրիքով մը պատուեց հիւրերը:

Կատարուեցան նաեւ շարք մը այլ այցելություններ՝ Աթէնքի կեդրոն, մայրաքաղաքի շուրջը եւ մօտիկ ծովափները: Բանակումին նպատակը եւ յայտագիրը իրենց աւարտին հասան՝ անմոռանալի տպաւորություններ ձգելով բոլորին մօտ:

**«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

● Եղբ. Գրիգորիս Պողարեան (Պէյրուք) 300 \$




 ոկ տեմբեր  
 2017-ը նշեց  
 ՀՄԸՄ-ա  
 կան պաս-  
 քեթպոլի  
 նոր նուաճումը, երբ 19 օր-  
 ւան տարբերութեամբ,  
 ՀՄԸՄ-ի Լիբանանի տը-  
 դոց ու աղջկանց խումբերը  
 յաջողեցան արաբական  
 ակումբներու խոսյեանու-  
 թեան տիրանալ, լաւագոյն  
 նուէրը հրամցնելով 100-  
 ամեակի տօնակատարու-  
 թիւններուն պատրաստը-  
 ւող իրենց միութեան եւ  
 համակիրներուն:

Առաջին բաժակը եկաւ Լիբանանի 2016-ի եւ 2017-ի





# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ՆՈՐ ՆՈՒԱՃՈՒՄԸ.

## Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՏՂՈՑ ՈՒ ԱՂՋԿԱՆՅ ԽՈՒՄԲԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆ

ախոյեան՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Անթիլիասի աղջկանց խումբէն, որ յաջողեցաւ փայլուն իրագործում մը կատարել, իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով տիրանալով ախոյեանութեան բաժակին: Անցեալ տարի, խումբը տիրացած էր ախոյեանութեան երրորդ գիրքին: Երկու տասնամեակ առաջ, նմանօրինակ յաջողութեան մը հասած էր Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուսի աղջկանց խումբը, երբ յաջողաբար երկու տարի՝ 1996-ին եւ 1997-ին յաջողած էր արաբական ակումբներու ախոյեանութեան երրորդ հանդիսանալ:

Հ.Մ.Ը.Մ.Ի աղջկանց խումբի յաղթանակին հիմնական կերտիչները հանդիսացան Ճէսիքա Պրելընտ, Քամիլ Լիթլը,

Լաթիա Ուիլլիամզ, Ռեպեքա Աքըլ, Նաթալի Սվաճեան, Մեղրի Թորոսեան եւ խմբակիցներ: Իրենց սպաւորիչ խաղարկութեամբ անոնք յաջողեցան ախոյեանութեան բոլոր մրցումները աւարտել առանց պարտութեան եւ 14 Հոկտեմբերին տիրանալ տիտղոսին եւ բաժակին:

Ստորեւ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի աղջկանց խումբին արձանագրած արդիւնքները.-

**Ա. Հանգրուանի մրցումներ**

Հ.Մ.Ը.Մ.-Օլիմպիք (Եգիպտոս) 96-66

Հ.Մ.Ը.Մ.-Սաֆաքս (Թունիզ) 65-44

Հ.Մ.Ը.Մ.-Ֆուհէյս (Յորդանան) 96-71



Հ.Մ.Ը.Մ.-Հիւսէյն Տայ (Արճերիա) 75-52

**Կիսաւարտական**

Հ.Մ.Ը.Մ.-Օլիմպիք (Եգիպտոս) 96-67

**Աւարտական**

Հ.Մ.Ը.Մ.-Սաֆաքս (Թունիզ) 61-50

**ՆԱԽԱԳԱՀ ԱՈՒՆԻ ՄՕՏ**

Ախոյեանութեան տիրողոսին տիրացումէն 10 օր ետք, 24 Նոյեմբերին, Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մէկ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրայր Խաչատուրեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Դրօ Մանտալեանի, Լիբանանի պապեթիպոլի ֆետերասիոնի անդամ եղբ. Ժորժ Սապունճեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի աղջկանց պապեթիպոլի յանձնախումբի ատենապետ քոյր Թայլին Խաչատուրեանի, այցելեց Լիբանանի նախագահ գոր. Միշէլ Աունի, Պապատայի նախագահական պալատին մէջ:



Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակութիւնը նախագահ Աունին յանձնեց արաբական ակումբներու ախոյեանութեան առաջնութեան բաժակը:

«Մեր տուած խոստումը իրականացուցած՝ հպարտօրէն այս բաժակը կը նուիրենք ձեզի», ըսաւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետը:

Հանդիպումին ընթացքին նախագահ գոր. Աուն շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ-ի պատասխանատուները, մարզիկներն ու մարզիչները, աւելցնելով, որ անոնք իրենց արձանագրած յաջողութեամբ բարձր կը պահեն Լիբանանի եւ հայրենիքի անունը: Ան յոյս յայտնեց, որ յառաջիկային եւս կը կրկնուին նման իրադրոժումներ:

**ՏՂՈՑ ԽՈՒՄԲԻՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ**

Հ.Մ.Ը.Մ-ի աղջկանց խումբին յաջողութենէն 19 օր ետք, 2 Նոյեմբերին, պապեթիպոլի տղոց ներկայացուցչական խումբը, իր կարգին, մարզական մեծ իրադրոժում մը կատարեց, երբ Մարոքի մէջ տիրացաւ արաբական ակումբներու ախոյեանութեան տիրողոսին:

Տեղին է նշել, որ տղոց մրցումները եղան աւելի դժուար եւ հետաքրքրական: Հ.Մ.Ը.Մ., Մարոքի թագաւորական բանակին, Քաթարի Ղարաֆա խումբին եւ Օմանի Նազուային հետ





Հ.Մ.Ը.Մ.- Ղարաֆան (Քաթար) 80-68

Հ.Մ.Ը.Մ.-Նազրուա (Օման) 92-74

**Քառորդ աւարտական**

Հ.Մ.Ը.Մ.-Մուհարրաբ (Պահարէյն) 94-70

**Կիսաւարտական**

Հ.Մ.Ը.Մ.-Մուժամաա Փեթրոյի (Ալճերիա) 99-78

**Աւարտական**

Հ.Մ.Ը.Մ.-Սալա (Մարոք) 99-98

**ՇՆՈՐ ՀԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Հ.Մ.Ը.Մ.-ի տղոց խումբին իրագործումը արժանացաւ լիբանանեան լայն շրջանակներու շնորհաւորութիւններուն: Առաջին շնորհաւորողը եղաւ վարչապետ Սաատ Հարիրի, որ «Թուրքեր»-ի վրայ կատարեց հետեւեալ գրառումը. «Կը շնորհաւորեմ Հ.Մ.Ը.Մ.-ը: Յաւելեալ յաջողութիւններու եւ յաղթանակներու մաղթանքներով՝ արժանի էք աւելիին»:

Հ.Մ.Ը.Մ.-ը շնորհաւորեցին նաեւ քաղաքական գործիչներ,

մաս կազմեց ախոյեանութեան Բ. խմբակին:

Իր առաջին երեք ճակատումներուն յաղթելէ ետք, Հ.Մ.Ը.Մ.-ը արեւեց իր խմբակին առաջնութիւնը եւ դիւրութեամբ անցաւ քառորդ աւարտականի հանգրուան, ուր դէմ յանդիման եկաւ Պահարէյնի Մուհարրաբ խումբին: Ձայն եւս պարտութեան մատնելէ ետք, դէպի աւարտական երթը դժուար չեղաւ: Ալճերիոյ Մուժամաա Փեթրոյիին դէմ յաղթանակը խումբը առաջնորդեց պատմական աւարտական, ուր մարզիչ Ճօ Մուժահհաի տղաքը սուր ճակատումէ մը ետք, յետ երկար ճակատամարտի, պարտութեան մատնեցին դաշտին տէրը՝ Մարոքի Սալա խումբը եւ արժանացան այնքան սպասուած տիտղոսին եւ բաժակին:

Այս ախոյեանութեան Հ.Մ.Ը.Մ.-էն ամէնէն աւելի փայլեցան Հայկ Կէօքճեան, Սամուէլ Եանկ, Մաքրամ Պըն Ռամատան, Ուոլթըր Հոճ, Էլի Շամուն, Իսմայիլ Ահմէտ, Քարամ Մըշքէֆ, Սեւակ Քէթէնճեան եւ Փաուր Պետրիկեան: Հայկ Կէօքճեան եղաւ առաջին հայը, որ ախոյեանութեան ոսկեմատեանին մէջ անունը արձանագրեց, իբրեւ մրցաշարի լաւագոյն մարզիկ:

Ստորեւ՝ Հ.Մ.Ը.Մ.-ի տղոց խումբին արձանագրած արդիւնքները.-

**Ա. հանգրուանի մրցումներ**

Հ.Մ.Ը.Մ.-Թագաւորական բանակ (Մարոք) 93-78





մարզական պատասխանատուներ եւ միութիւններու ներկայացուցիչներ:

Այս առիթով, իր գնահատանքի եւ շնորհաւորանքի խօսքը ուղղեց Լիբանանի նախագահ գործ. Միշէլ Աուն, որ նշեց, թէ Հ.Մ.Ը.Մ. եկաւ բարձր պահելու Լիբանանի անունը՝ արաբական պատեթիպովի աշխարհին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը շնորհաւորեցին նաեւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրըրի, նախկին վարչապետ Ֆուատ Սինիորա, Ռիատի ակումբի նախագահ Հիշամ Ժարուտի, Լիբանանի պատեթիպովի ֆետերասիոնը, Հովիս ակումբի նախագահ Ժասեմ Քանսո, Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի նախագահ Ժան Համմամ եւ ուրիշներ:

Հայկական իմաստով, Հ.Մ.Ը.Մ.ին շնորհաւորական նա-



մակ մը յղեց Հ.Բ.Ը.Մ.- Հ.Ե.Ը.՝ նշելով, որ Լիբանանի եւ աշխարհի տարածքին մեծ անուն ունեցող ակումբը՝ Հ.Մ.Ը.Մ.ը այս նուաճումով եկաւ բարձր պահելու Լիբանանի անունը եւ փաստելու, որ լիբանանահայերը կրնան մեծապէս նպաստել իրենց երկիրին մարզական իրագործումներուն եւ արձանագրուած յաղթանակներուն:

**ՄԱՐՈՔԷՆ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ՝  
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՋԵՐՄ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ**

Արաբական ակումբներու ախոյեան Հ.Մ.Ը.Մ.ի տղոց խումբը Պէյրուսթ վերադարձաւ Շաբաթ, 4 Նոյեմբերին, արժանանալով ժողովրդային ջերմ ընդունելութեան:

Պէյրուսթի միջազգային օդակայանին պատուոյ սրահին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի խումբը դիմաւորեցին Լիբանանի պատեթիպովի ֆետերասիոնի նախագահ Փիէր Քախիա, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրայր Խաչատուրեան եւ Շրջանային Վարչութեան անդամներ, պատեթիպովի յանձնախումբի անդամներ, մարզական լրագրողներ եւ հարազատներ:

Օդակայանին պատուոյ սրահը իր արտասանած խօսքին մէջ, Փիէր Քախիա շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ը՝ կատարած մեծ իրագործումին համար, աւելցնելով, որ այսպէսով Հ.Մ.Ը.Մ.



եկաւ իր անունը արձանագրելու արաբական պասքեթպոլի պատմութեան մէջ:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրայր Խաչատուրեան բարի գալուստ եւ նորանոր յաջողութիւններ մաղթեց խումբին:

Պէյրութի օդակայանէն խումբը իրեն տրամադրուած յատուկ փոխադրակառքով (որուն վրայ փակցուած էին հայկական Եռագոյնը եւ խումբին նկարը), ուղղուեցաւ Պուրճ Համուտի քաղաքապետարանի հրապարակ, ուր մարզիկներուն անհամբեր կը սպասէին հարիւրաւոր համակիրներ:

Խումբը հրապարակ հասնելով ծափահարութիւններու տարափով մը բարձրացաւ փոտիում:

Արաբական ախումբներու ախոյեան խումբը դիմաւորելու եկած էին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեան, Կեդրոնական Կոմիտէի անդամ Կարօ Յարութիւնեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեան եւ քաղաքապետական խորհուրդի անդամներ, Լիբանանի պասքեթպոլի ֆետերասի-

ոնի նախագահ Փիէր Քախիա, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրայր Խաչատուրեան, ինչպէս նաեւ Շրջանային Վարչութեան անդամներ, մարզական լրագրողներ եւ մեծաթիւ համակիրներ:

Հ.Մ.Ը.Մ-ի պասքեթպոլի տղոց յանձնախումբի ատենապետ եղբ. Կի Մանուկեան խօսք առնելով ըսաւ. «Ասկէ հինգ տարի առաջ, երբ Բ. դասակարգ էինք, խոստացանք, որ Հ.Մ.Ը.Մ-ը պիտի հասցնենք մեծ յաջողութեան, որուն այժմ ահանատեսը կ'ըլլաք դուք: Թէեւ Մարտի մէջ Լիբանանը ներկայացուցինք, բայց ամբողջ աշխարհի Հ.Մ.Ը.Մ-ին բերինք փառք ու պատիւ՝ միեւնոյն ժամանակ սարսափեցնելով բոլորը: Այս յաղթանակը կերտեցինք ձեզի հետ միասին եւ զայն կը նուիրենք ձեզի՝ սիրելի համակիրներ:

«Թէեւ մենք լիբանանեան առաջին խումբը չենք, որ արաբական ախոյեանութիւնը կը շահինք, սակայն Հ.Մ.Ը.Մ. հանդիսացաւ Լիբանանի պատմութեան մէջ առաջին խումբը, որ նոյն տարուան մէջ տիրացաւ թէ՛ տղոց եւ թէ՛ աղջկանց արա-



բական ակումբներու ախոյեանութեան: Չեմ կարծեր, որ բաւական երկար տարիներ որեւէ խումբ Հ.Մ.Ը.Մ-ի իրագործումը կարենայ կատարել»:

Խօսք առաւ նաեւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, որ ըսաւ. «Սիրելիներ, նախ՝ Հ.Մ.Ը.Մ-ին կենացը, համակիրներուն կենացը, առանց որոնց այս յաղթանակը պիտի չիրականանար: Վարձքը կատար բոլորին, անխտիր: Այս յաղթանակը կը նուիրենք Լիբանանի եւ անոր իշխանութեան երեք պետերուն՝ նախագահին, վարչապետին եւ խորհրդարանի նախագահին: Չայն կը նուիրենք ամբողջ հայութեան: Հ.Մ.Ը.Մ-ին միջոցով փաստեցինք, որ Լիբանանը դուրս պիտի գայ իր ամէնէն դժուար պայմաններէն»:



«Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 100-ամեակին առիթով, Հ.Մ.Ը.Մ. այսպէսով կատարեց մեծ իրագործում մը, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ը եւ Լիբանանը յաղթանակէ բացի ոչինչ կ' ուզեն»:

Ապա, յաջորդաբար խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ-ի պասքէթպոլի յանձնախումբի անդամները, Հ.Մ.Ը.Մ-ի տղոց խումբի մար-

Շրջանային Վարչութիւնը առաջնահերթ նպատակ ունի բոլոր մարզերուն մէջ ախոյեանութիւններ ապահովել Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին: Մեր տղաքը ստիկա իրագործեցին Մարտի մէջ: Նորանոր յաղթանակներ կը սպասենք տարբեր մարզախաղերու մէջ՝ Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր մարզիկներէն եւ խումբերէն»:

Խօսքերէն ետք, եղբ. Կի Մանուկեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի աղջկանց պասքէթպոլի յանձնախումբի ատենապետ քոյր Թալին Խաչատուրեան միասնաբար բարձրացուցին արաբական պասքէթպոլի ակումբներու ախոյեանութիւններու տղոց եւ աղջկանց բաժակները:

Քոյր Թալին Խաչատուրեան խօսք առնելով շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ-ը՝ նշելով, որ միշտ կ' ուզենք Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր խումբերը ախոյեան տեսնել:

Շնորհակալութեան յատուկ խօսք ուղղուեցաւ Պուրճ Համուտի քաղաքապետութեան, որ ոչ մէկ ճիգ ինայեց ժողովրդային ընդունելութիւնը յաջողցնելու համար:

Աւարտին, խումբը լուսանկարուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին հետ: Տեղի ունեցաւ հրավառութիւն:

### ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Շաբաթ մը ետք, 11 Նոյեմբերին, Հ.Մ.Ը.Մ-ի ախոյեան խումբը, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրայր Խաչատուրեանի գլխաւորութեամբ, այցելեց Լիբանանի նախագահ Միշել Աունի եւ անոր նուիրեց իր նուաճած ախոյեանութեան բաժակը:

Պատուիրակութեան մաս կազմեցին Հ.Մ.Ը.Մ-ի տղոց պասքէթպոլի յանձնախումբի ատենապետ եղբ. Կի Մանուկեան, Լիբանանի պասքէթպոլի Փետերասիոնին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ եղբ. Ճորճ Սապունճեան, յանձնախումբի ան-

դամները, մարզիչ Ջո Մուժահէս եւ խումբին մարզիկները:

Ախոյեանութեան բաժակին հետ, Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը նախագահ Առունին յանձնեց իր անունը կրող Հ.Մ.Ը.Մ.ի թիւ 1 մարզաշապիկը:

Նախագահ Առուն շնորհաւորելով Հ.Մ.Ը.Մ.ի կարեւոր իրագործումը, յայտնեց, որ Մարտի Սալա քաղաքին մէջ Հ.Մ.Ը.Մ. եկաւ բարձր պահելու Լիբանանի անունը, երբ տիտղոսակիր դարձաւ՝ ինքզինք պարտադրելով ախոյեանութեան մասնակից խումբերուն:

Նախագահ Առուն աւելցուց, որ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը շուրջ տարիէ մը ի վեր մեծ վերելք կ'արձանագրէ պասքեթպոլի մարզին մէջ եւ անոր շնորհիւ լիբանանեան մարզաշխարհը կ'ապրի զարգացում, ինչ որ կը նշանակէ, թէ Լիբանանի երիտասարդ սերունդը կը մնայ մարզաշխարհի մէջ, հեռու՝ մոլորեցուցիչ այլ ճամբաներէ, որոնք երիտասարդները կը տանին այլ վայրեր:

Այցելութեան աւարտին, նախագահ Առուն նորանոր յաջո-



ղութիւններ մաղթեց Հ.Մ.Ը.Մ.ի տղոց խումբին՝ յոյս յայտնելով, որ ապագային անոնք յաւելեալ տիտղոսներու կը տիրանան եւ բարձր կը պահեն Լիբանանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի անունը:

with the complements of

# Restaurant Al-Mayass



# Հ.Մ.Ը.Մ. ԿԸ ՄԱՄՆԱԿՑԻ ԼԻՐԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ

## Թղթակից ՊԵՅՄՈՒԹ

**Լ**իբանանի Սկաուտական ֆեստերասիոնի կազմակերպութեամբ, 7-10 Սեպտեմբերին, Հըրշ Պէյրուսթի մէջ տեղի ունեցաւ Լիբանանի ազգային առաջին բանակումը՝ արի եւ արեւոյճ ճիւղերու:

Հ.Մ.Ը.Մ. Լիբանան բանակումին մասնակցեցաւ 35 հոգինոց պատուիրակութեամբ մը, որուն մաս կազմեցին Պէյրուսթի, Պուրճ Համուտի, Անթիլիասի եւ ժրտէյտի մասնաճիւղերու 35 արի-արեւոյճներ: Բանակումին ներկայ էր նաեւ Շրջանային խմբապետութեան կազմէն քոյր Լուսին Պերքուպէյիուքեան, իբրեւ բանակումի օժանդակ մարմինի ընդհանուր պատասխանատու:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի պատուիրակութիւնը բանակավայր հասնելով կատարեց յարգարումի աշխատանքներ, պատրաստեց բանակավայրի մուտքի ձեռագիրը եւ խմբակային այլ ձեռագիրներ:

Երկրորդ օրը, նախաճաշէն ետք, բոլոր միութիւններու խումբերը մասնակցեցան խմբակային փուլային խաղերու օրուան, որուն ընթացքին անոնք պատրաստեցին զանազան ձեռագիրներ եւ խաղացին խաղեր: Երեկոյեան տեղի ու-

նեցաւ ընդհանուր խարուկահանդէս՝ մասնակցութեամբ բոլոր միութիւններուն:

Երրորդ օրը, առաւօտեան, տեղի ունեցաւ յատուկ յայտագիր՝ պատրաստուած բանակին եւ ներքին ապահովութեան ուժերուն կողմէ: Առաջին բաժինով խմբակները այցելեցին բանակին պատրաստած տաղաւարը եւ ծանօթացան ականներու տեսակներուն, իսկ երկրորդ բաժինով խմբակները այցելեցին ներքին ապահովութեան ուժերու տաղաւարը, ուր բացատրութիւններ լսեցին զգոյճ քշելու կարեւորութեան եւ օրէնքներուն մասին:

Բանակավայրին մէջ տեղի ունեցող յայտագիրին զուգահեռ, նոյն առաւօտ, տեղի ունեցաւ կլոր սեղան մը, որուն ընթացքին արծարծուեցան սկաուտութիւնը հետաքրքրող հարցեր: Աշխատանքին մասնակցեցան բանակումին մասնակից իւրաքանչիւր միութեան 3 առաջնորդներ, որոնք նախքան կլոր սեղանը՝ այցելեցին Լիբանանի ազգային խմբագրարան:

Երեկոյեան տեղի ունեցան յատուկ տողանցք եւ պաշտօնական արարողութիւն, որուն ներկայ եղան Լիբանանի վարչապետը, սկաուտական ֆեստերասիոնի անդամներ, միութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային խումբի ներկայացուցիչներ, միութիւններու եւ Հ.Մ.Ը.Մ.ի խմբապետներ, ըսկաուտներ եւ բարեկամներ: Հարկ է նշել, որ Լիբանանի սկաուտական ֆեստերասիոնի եւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնա-



կան վարչութեան անդամ եղբ. Վաչէ Նաճարեան մօտէն կը հետեւէր բանակումի աշխատանքներուն, չորս օրուան ընթացքին երեք անգամ բանակավայր այցելելով: Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութեան ներկայացուցիչը, Շրջանային Սկաուտական խորհուրդն ու խմբապետական կազմը եւս ճիգ չխնայեցին ապահովելու համար Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութեան հանգիստ կեցութիւնը: Բանակումի ընթացքին Շրջանային խմբապետութիւնը օրական այցելեց բանակավայր:

Պաշտօնական արարողութեան աւարտին, բանակումին մասնակցող միութիւններու սկաուտները փոխանակեցին յուշանուէրներ, իսկ երեկոյեան տեղի ունեցաւ բանակումին վերջին խարուկահանդէսը՝ մասնակցութեամբ տարբեր միութիւններու շեփորախումբերուն:

Բանակումին վերջին օրը, առաւօտեան, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները, հաւաքելէ ետք իրենց բանակավայրը եւ օժանդակելէ ետք ընդհանուր բանակավայրի մաքրութեան, վերադարձան իրենց տունները, ձեռք ձգած՝ նոր ու տարբեր փորձառութիւն մը, ծանօթացած՝ նոր բարեկամներու, ինչպէս նաեւ զարգացած՝ զանազան գիտելիքներով, կանչելով ու երգերով:







Photo by Markar©

## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՅՆՃԱՐԻ ՄԱՐԶԱՀԱՄԱԽԻՐԻ ԵՒ «ԿԱՅԾԱԿ ՈՒ ԾՈՎԻԿ ԶԷՅԹՈՒԷԱՆ» ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՀԱՆԴԻՍԱԲՈՐ ԲԱՅՈՒՄ

Թղթակից  
ԱՅՆՃԱՐ

**Բ**արձր հովանաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, նախագահութեամբ տէր եւ տիկին Կայծակ եւ Ծովիկ Զէյթլեաններու, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Այնճարի մասնաճիւղի վարչութեան, Շաբաթ, 9 Սեպտեմբերի երեկոյեան ժամը 6-ին, պաշտօնական հանդիսութեամբ մը բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Այնճարի մարզահամալիրին եւ «Կայծակ եւ Ծովիկ Զէյթլեան» մարզադաշտին, ներկայութեամբ Լիբանանի զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեանի, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի ներկայացուցիչ, Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանի, պետական, ազգային, կուսակցական ու միութենական կառույցներու ներկայացուցիչներու եւ հիւրերու:

Հ.Մ.Ը.Մ.Ի Այնճարի մասնաճիւղի շէփորախումբին կողմէ հնչած «Յառաջ



նահատակ» քայերզին կշռոյթով կատարուեցաւ դրօշակի արարողութիւն, որմէ ետք նուագուեցան Լիբանանի եւ Հայաստանի քայերզները:

**ԲԱՅՄԱՆ ԽՕՍԻԸ**

Բացման խօսքը արտասանեց քոյր Մարօ քոյր Թազեան, որ լուսարձակի

տակ առաւ համալիրին կառուցման ընթացքը՝ դիտել տալով, որ դիւրին չէր աշխատանքը, մանաւանդ որ երկիրը կ'ապրէր ահագին վերիվայրումներ: «Այնճարի խնկներն էին, որոնք հաւատարմով դիւրին ապագային, իրենց վսեմ երազներուն, մէկտեղելով իրենց ուժերը, հաւատքը, կիրքն ու եռանդը, ամէն



բանէ վեր դասելով զիւղին արժէքները, հասան իրենց նպատակին», հաստատեց ան:

Գժուարութիւններ յաղթահարելու Այնճարի ժողովուրդի կամքին անդրադառնալով, քոյր Մարօ Թագեան դիտել տուաւ, որ նման նախաձեռնութիւններու շնորհիւ է, որ ժողովուրդի մը ոգին կը բարձրանայ, փաստը կը տրուի անոր շինարար եռանդին եւ մարդ գոհունակութեամբ կը լեցուի՝ ի տես ժողովուրդին կամքը լարող, բոլորը իրարու միացնող, խթանող, խանդավառող, կազմակերպուած ուժ դարձնող եւ Այնճարի վճռական կամքը արտայայտող Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան: Ասիկա ներշնչումի եւ քաջալերանքի աղբիւր է մանուկին, պատանիին, երիտասարդին ու տարեցին, ներկայ եւ գալիք սերունդներուն կամք ու հայաշունչ մ'իջնորդատ փոխանցող կառույց է, բարոյական ու Ֆիզիքական կարգապահ ու կշռուած քայլերով դէպի պայծառ ապագայ առաջնորդող միութիւն:

Քոյր Մարօ Թագեան այս առիթով շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք Այնճարէն մինչեւ հեռաւոր Ամերիկաներ, Գանատա, Աւստրալիա, Եւրոպա, արաբական երկիրներ, իրենց նիւթական օժանդակութիւնը բերին այս համալիրին ամբողջացման աշխատանքին՝ յատուկ կերպով յիշելով գլխաւոր բարերար Կայծակ եւ Մովիկ Զէյթիեան ամուլը, որ իշխանական նուիրատուութեամբ իր սէրը արտայայտեց Այնճարին նկատմամբ: Ան յատուկ

շնորհակալութիւն յայտնեց Հ.Յ.Դ. «Կարմիր լեռ» կոմիտէին, առանց որուն նիւթական եւ բարոյական աջակցութեան կարելի պիտի չլլար կերտել համալիրը:

**ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԱՐԱԲԵՐԷՆ ԽՕՍԲԸ**

Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղին վարչութեան խօսքը արաբերէնով արտասանեց քոյր Թինա Ադամեան: Ան ուրախութիւն յայտնեց նման կարեւոր առիթի մը համար հաւաքուած ներկաներուն, որովհետեւ իւրաքանչիւր անհատ սատար կանգնեցաւ այս ծրագիրին յաջողութեան: Քոյրը նշեց, որ մարգահամալիրին բացման արարողութիւնը սկիզբն է ուղիի մը, որմէ քալելով պէտք է սիրով ու մղումով գործել՝ ի խնդիր անոր բարգաւաճման, գոյատեւման եւ զարգացման, որպէսզի համալիրը ատակ ըլլայ գոհացնելու կարիքներն ու ակնկալութիւնները նոր սերունդին, որպէսզի Ֆիզիքականի կողքին զանոնք կոփէ հոգիով ու մտքով:

Քոյր Թինա Ադամեան իր խօսքը եզրափակելով ըսաւ, որ այսօր իրականութիւն կը դառնայ սերունդներու երազը՝ շնորհիւ բոլորին կամքին, հետեւողական աշխատանքին եւ Այնճարի նկատմամբ հաւատքին. ան մաղթեց, որ համալիրը մղիչ ուժ կ'ըլլայ նորանոր յաջողութիւններու:

Ապա, Ազգային Յառաջ-Գ.Կիւլպէնիկեան վարժարանի պարախումբը ներկայացուց պար մը:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՋՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ**

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Աշոտ Թասլաքեան: Ան ըսաւ, որ հաւաքական, հետեւողական եւ երկարաշունչ աշխատանքի մը արգասիքը կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի այս մարգահամալիրը, որուն շինութեան նախաձեռնողները հաւատացին միութեան ու անոր ունեցած առաքելութեան՝ մեր ժողովուրդի գոյատեւման եւ հայրէն պահպանման երթին մէջ: Եղբ. Թասլաքեան նշեց, որ «Առողջ միտք՝ առողջ մարմին» կարգախօսին հաւատացողները յամառութեամբ եւ կամքով լծուեցան կառուցմանը համալիրի մը, որ բարենիչ եւ ուղեցոյց պիտի հանդիսանայ բոլոր մասնաճիւղերուն, մարգածեւերուն մէջ նոր դասաւորում պիտի բերէ, պիտի համախմբէ Այնճարի երիտասարդութիւնը, պիտի յաջողի նոր կացութիւն ստեղծել եւ յարգանք պարտադրել շրջապատին:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անունով եղբ. Աշոտ Թասլաքեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք ճիշտ չինայեցին այս վիթխարի գործը իրականութիւն դարձնելու՝ քաջ հաւատալով, որ համալիրը իր իւրայատուկ եւ կարեւոր դերակատարութիւնը պիտի ունենայ Այնճարի մէջ՝ մաղթելով յարատեւ սխրանք ու մնայուն աշխատանք, որպէսզի այս ամբողջ մնայ միշտ անաղարտ եւ դառնայ նոր սերունդի հայապահպանման ու



զարգացման մարզական բերդ մը՝ ծառայելու Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրացիր՝ բարձրացուր» նշանաբանին:

**ՏԵՍԵՐԻԶԻ ՅՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ**

Այնուհետև ցուցադրուեցաւ տեսերիդ մը, որուն մէջ լուսարձակի տակ առնուեցաւ Այնճարի պատմական ընդհանրապէս, մասնաճիւղին հիմնադրուածիւնը, անցած ուղին եւ նոր համալիրի ու մարզադաշտի կառուցման աշխատանքը:

**ԿՈՄԻՏԵԻՆ ԽՕՄԲԸ**

Այնճարի Հ.Յ.Դ. կոմիտէին խօսքը փոխանցեց Յարութ Լաքիսեան: Ան հաստատեց, որ նման մարզահամալիրով Այնճար հայաւանը անգամ մը եւս

կը փաստէ, որ լիբրաւ յաջորդն է Մուսա լեռան արի ժողովուրդին, տէր է յարատեւելու եւ նոր իրագործումներով իր ինքնութիւնը պահելու շինարար ու խիզախ կամքին: «Պարզ իրագործում մը չէ այսօր, այս մարզահամալիրին բացումը: Անիկա հաւատքի, կամքի եւ ազնիւ աշխատանքի արդիւնք է: Անիկա նոր սերունդներուն եւ այս գիւղին յարատեւութեան երաշխիքն է, վստահութիւնն ու տեսիլքն է: Տեսիլք մը, որուն հաւատացին այս գիւղին զաւակները, հակառակ Լիբանանի դիմագրաւած դժուարին մարտահրաւէրներուն», ըսաւ ան՝ աւելցնելով, որ համալիրը պիտի ծառայէ ժողովուրդին, յատկապէս մատղաշ տղոց-աղջիկներուն, որոնք այս յարկին տակ, Ֆիզիքականին կող-

քին, պիտի կերտեն ազգային վեհ նկարագիր եւ աննկուն կամք: Ըստ Յարութ Լաքիսեանի, նորակառոյց մարզահամալիրը կոչուած է դպրոցին, եկեղեցոյ եւ ակումբին կողքին ըլլալու հոգիները ազնուացնող եւ նոր սերունդին հայեցի դիմագիծը կերտող տուն ու դարբնոց:

Իր խօսքին մէջ, Յարութ Լաքիսեան երախտագիտութեան եւ գոհունակութեան արտայայտութիւն ունեցաւ հասցէին բոլոր անոնց, որոնք սատար կանգնեցան այս ծրագիրին իրականացման: Ան նաեւ հաստատեց, որ կոմիտէ-ութիւնը զօրակից է համալիրին եւ մաղթանքն է, որ կառույցը կը դառնայ եռացող բոյն:

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՏԵՍԵՐԻԶԸ**

Ապա, տեսերիդի մը ընդմէջէն վկայութիւններ փոխանցեցին Այնճարի պատասխանատու անձնաւորութիւններ եւ Հ.Մ.Ը.Մ-ականներ՝ շեշտելով կարեւորութիւնը նման համալիրի մը, որ պիտի գոհացնէ նոր սերունդին ակնկալութիւնները, սկստական շարքերուն համար յարմար պայմաններ պիտի ստեղծէ, հայկական շունչով օժտուած համախմբման ու հայօրէն դաստիարակութեան վայր պիտի ըլլայ իր պասքեթ-պոլի փակ դաշտով, մինի ֆութպոլի դաշտով, սկստական եւ վարչական սենեակներով, ԱՖՅԻԼ-ի մարզական կեդրոնով, փոքրիկ ճաշարանով: Յիշուեցաւ, որ համալիրին երկրաչափը Հրաչ Մարգարեանն է: Բոլորն ալ հաս-





տատեցին, որ երկար տարիներու եւ իրերայաջորդ պատասխանատու կազմերու սեւեռակէտն ու ուշադրութեան առարկան եղած է ծրագիրին իրականացումը, սակայն միայն այս տարի կարելի եղած է զայն իր լրումին հասցնել:

**ԿԱՅԾԱԿ ԶԷՅԹԼԵԱՆԻ ՄՐՏԻ ԽՕՄԲԸ**

Իր սրտի խօսքին մէջ, բարերար Կայծակ Զէյթլեան հպարտանալու առիթ նկատեց բացման հանդիսութիւնը շքեղ կառուցցին, որուն ի տես կարելի է երեւակայել, թէ որքան օգտակար պիտի ըլլայ եւ իր դրական անդրադարձը պիտի ունենայ ան նոր սերունդներուն եւ բոլոր այն ճարտարներուն համար: Զէյթլեան

ուրախութիւն եւ երախտագիտութիւն յայտնեց, որ իրեն ու իր ընտանիքին առիթ տրուած է նիւթական ներդրում ունենալ այս ծրագիրին յաջողութեան մէջ եւ մասնակից դառնալ նման նշանակալից նախաձեռնութեան մը իրագործման:

Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի սեմին, Կայծակ Զէյթլեան խորհրդանշական նկատեց Հ.Մ.Ը.Մ.ի այս համալիրին բացումը՝ հաւատք յայտնելով, որ ան պիտի ծառայէ կազմաւորելու սերունդներ, որոնք պիտի նուիրուին իրենց ազգին ու անոր երազներուն իրականացման: Զէյթլեան անդրադարձաւ նաեւ Մոսկա լերան հերոսամարտի 102-ամեակի ոգեկոչումներուն եւ ըսաւ, որ հնչող գուռնային եւ թմբուկին ձայնը պէտք է կոչ ըլլայ բոլորին՝ ըլլալու միասնակամ, առիթ պէտք է ըլլայ վերանորոգելու մեր ուխտը՝ տէրը ըլլալու Այնճարին, որովհետեւ միասնական ջանքերով եւ ուժերով կարելի է ընթանալ դէպի պայծառ ապագայ: Կայծակ Զէյթլեան աւելցուց, որ Մոսկա լերան հերոսամարտին յղթանակը պէտք է միշտ վառ մնայ բոլոր մոսկա լեռցիներուն մտքերուն մէջ՝ յուշելով, որ միշտ պէտք է պատրաստ ըլլալ նորանոր յղթանակներու կերտման համար միասնաբար պայքարելու, դիմադրելու ամէն տեսակի մարտահրաւէրի, շարունակելու հերոսներու ուղին եւ կերտելու հայատրոփ միջավայր եւ նուիրումի պատրաստ սերունդներ:

**ՅՈՒՇԱՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄ**  
Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղին կողմէ յուշանուէրներ յանձնուեցան Կայծակ եւ Ծովիկ Զէյթլեան ամուրին եւ Այնճարի «Կարմիր լեռ» կոմիտէին՝ առ ի երախտագիտութիւն անոնց նեցուկին:

**ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԽՕՄԲԸ**

Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան իր արտասանած խօսքին մէջ, եզակի առիթ նկատեց համալիրին բացման հանդիսութիւնը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին ողջոյնն ու գնահատանքը յայտնելով բոլոր ներդրում ունեցողներուն: Ան աւելցուց, որ այս հիանալի իրագործումը իսկապէս վայել է Հ.Մ.Ը.Մ.ին եւ պատիւ կը բերէ ոչ միայն այն ճարտարներուն, այլեւ՝ համայն հայութեան, որովհետեւ ան դրսեւորումն է հայութեան շինարար ոգիին, որ միշտ առկայ կը մնայ, հակառակ դժուար պայմաններուն եւ ամէն տեսակ արգելքներուն: Առաջնորդը դիտել տուաւ, որ նման համալիր մը ունենալը շուրջընկերուն չէ, այլ՝ անհրաժեշտութիւն է ներկայ օրերուն, իսկ իւրաքանչիւր սերունդ պէտք է իր լուծման գետեղէ այնտեղ, իր հաւատքը ամրապնդէ այդ յարկին տակ եւ ծաղկեցնէ զայն, որովհետեւ անիկա ցուցանիչ է Այնճարի ապրած վերելքին, որ կարելի կ'ըլլայ շնորհիւ այն ճարտարներուն եռանդին, հաւատքին ու կամքին:

Շահէ Եպս. Փանոսեան պատահական չնկատեց այն, որ Այնճարէն հեռու ապրող մոսկա լեռցիները կը շարունակեն կապուած մնալ եւ ներդրում ունենալ իրենց գիւղին բարօրութեան, որովհետեւ անոնք իրենց հետ տարած են յիշատակներ, որոնք կրնան կերտուիլ միայն հայաբոյր միջավայրի մէջ, իսկ նման ներդրումով անոնք կը վերանորոգուին եւ կը վերանորոգեն: Ըստ անոր, աշխարհի տարբեր վայրերու մէջ ապրող այն ճարտարները հետամուտ են, որ գիւղին մէջ հայկական շունչը չնուազի: Իր խօսքին աւարտին, Առաջնորդը օրհնեց համալիրը եւ անոր յարկին տակ հասակ նետելու կոչուած սերունդները:

Աւարտին կատարուեցաւ համալիրի մուտքին գետեղուած ժապաւէնի հատում՝ պաշտօնապէս բացուած յայտարար-

րելով մարզահամալիրն ու մարզադաշտը:

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԸՆԹՐԻԲԸ**

Պաշտօնական հանդիսություններն ենթադրվում է, որ «Արեւ» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ ընթրիք, որուն ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղին կատարուեցան սրտաբուխ նուիրատուութիւններ: Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, հնչեցին աւանդական տաւուլ գուռնայի եղանակները:

Այս առիթով արտասանուեցան սրտի ու ողջոյնի խօսքեր: Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Սամուէլ Մկրտչեան Այնճարի մէջ նման համալիրի մը բացումը կարեւոր եւ խորհրդանշական նկատեց երեք պատճառով. առաջինը այն, որ Այնճար կը շարունակէ ապրիլ, պահպանել իր աւանդութիւնները եւ ունեցածին վրայ նոր նուաճումներ կ'աւելցնէ: Երկրորդ, Այնճարի մէջ կը կանգնի անհրաժեշտ բոլոր պայմաններով օժտուած կեդրոն մը, որ առիթ կու տայ մարզուելու, համախմբուելու հայկական միջավայրի մէջ, ուր մարմնին կողքին կը կոփուին միտքն ու ոգին: Երրորդ, իբրեւ հայ ցոյց կը տրուի հաւաքական ուժի առկայութիւնը, կը փաստուի, որ բարեբարներու ներդրումով կարելի է բազմաթիւ խնդիրներ լուծել: Իր խօսքին աւարտին, դեսպանը մաղթեց, որ գիւղը շարունակէ զարգանալ, բարգաւաճիլ, պահպանել ազգային աւանդութիւնները՝ միշտ քալելով դէպի լայն հորիզոններ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Րաֆֆի Կէփօղլանեան իր սրտի խօսքը փոխանցելով ըսաւ, որ այս կառուցին բացումը հպարտութիւն կը պարգեւէ ո՛չ միայն Այնճարին, այլ նաեւ 26 հազար անդամ հաշուող աշխարհատարած մեծ միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին, իբրեւ պանծալի օր դրոշմուկութիւն մեր նորագոյն պատմութեան էջերուն մէջ: Ան հայկական պարը, երգը, ուտելիքը եւ ազգային իւրաքանչիւր աւանդութիւն նկատեց ժայռեր, որոնք միասնաբար կու գան պարիսպի նման շրջապատելու մեր արժէքները՝ աւելցնելով, որ նորակերտ համալիրը եւս պարիսպ է Այնճարը պաշտպանող: Ան շնորհաւորեց բոլոր անոնք, որոնք



կամքն ու յամուռութիւնը, հաւատքն ու կորովը ունեցան երբեմն դժուար իրականանալի նկատուած այս երազին մարմին ու ոգի տալու՝ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի նախօրեակին այս կառուցը նկատելով մեծ նուէր մը՝ ներկայ ու ապագայ սերունդներուն:

Այնճարի քաղաքապետ Վարդգէս Խոշեան հաստատեց, որ նորաստեղծ համալիրը կը դրուի երիտասարդ վարչութիւններու տրամադրութեան տակ, իսկ կատարուած նուիրատուութիւններէն գոյացած գումարը ջահ է՝ անոնց տրուելիք, որպէսզի անոնք կարենան դիւրութեամբ շարունակել երթը: Անոր համաձայն, հաւաքական ջանքերով, աշխատանքով եւ հաւատքով կարելի եղած է կանգնեցնել համալիրը, որուն առաջին քարը դրուեցաւ այնպիսի ժամանակ, երբ լեռներու ետին ուռմբերը կ'որոտային, սակայն ոչ մէկ ընկրկում արձանագրուեցաւ, այլ՝ աշխատանքին ու երազին կառչածութիւնը առաջնորդեց պանծալի յաջողութեան:

Այս առիթով խօսք առաւ ազգային բարերար Հրայր Սողոմոնեան, որ հիանալի նկատեց կառուցը եւ շնորհաւորեց բոլորը՝ կատարուած բժախնդիր աշխատանքին ու միջազգային պայմաններուն համապատասխանող համալիրին ու դաշտին կառուցման համար: Ան դիտել տուաւ, որ մեր նախնիները՝ հաւատարիմ «Բարձրացիր-բարձրացուր» կարգախօսին, բարձրացուցին մեզ, իսկ այսօր մենք ալ նոյն աշխատանքին պէտք է լծուինք, որպէսզի բարձրացը



նենք զանոնք եւ ապագայ սերունդները: Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան դիտել տուաւ, որ այս կառուցին համար կատարուած ներդրումները ներդրում են ապագայ սերունդներուն հաշուոյն, մանաւանդ որ դժուար էր պատկերացնել նման շքեղ համալիրի մը առկայութիւնը Այնճարի մէջ: Ան յոյս յայտնեց, որ այս յարկին տակ սերունդներ հայօրէն մեծանան՝ հեռու մոլութիւններէ եւ մերօրեայ վտանգներէ, աւելի զօրանան իրենց ազգային արժէքներով՝ մաղթելով, որ այլ շրջաններու մէջ եւս նման կառուցներ կանգնին:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ «ՎԻԳԷՆ ԶԱՔԱՐԵԱՆ» ԵՐԻՑԱԿԱՆ ՓԱՂԱՆԳԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԻԳԷՆ ԶԱՔԱՐԵԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿՆԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ



## Թղթակից ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ

**Հ**ովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Պուրծ Համուտի մասնաճիւղի ըՄ-կառուտական Խորհուրդին եւ կազմակերպութեամբ մասնաճիւղի «Վիգէն Զաքարեան» երիցական փաղանգին, Կիրակի, 4 Յունիս 2017-ին տեղի ունեցաւ երիցական փաղանգին հիմնադրութեան եւ Վիգէն Զաքարեանի նահատակութեան 25-ամեակներուն առիթով յիշատակի օր մը, որ սկիզբ առաւ նախկին եւ ներկայ երէցներու սկառուտական հաւաքով, առաւօտեան ժամը 10-ին: Յաջորդեց յիշատակի ձեռնարկ մը՝ երեկոյեան ժամը 7-ին, Ազգային Լեւոն եւ Սոփիա Յակոբեան Գոյէճի շրջափակին մէջ: Հաւաքին

ընթացքին երէցները վերջիշեցին սկառուտական կեանքի իրենց անմոռանալի յիշատակները՝ փաղանգին կազմակերպած յատուկ յայտագիրով: Երեկոյեան, ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.Ի Պուրծ Համուտի մասնաճիւղի Ա. միաւորի խմբապետ եղբ. Ռուբէն Պապեան: Ողջունելէ ետք ներկաները, ան անդադարձաւ Վիգէն Զաքարեանի տիպարին եւ օրինակելի սկառուտի կերպարին: Պապեան ըսաւ. «Մենք այսօր ո՛չ միայն կը փառաբանենք ու կը յիշենք Վիգէն Զաքարեանը, այլեւ կ'ապրինք ու կը գործենք անոր տեսլականով»: Ապա, աւելցուց. «Եղբայր Վիգէն, ինչպէս որ դուն ազգային եւ սկառուտական դաստիարակութիւնդ ստացար Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքին մէջ, այսօր բոլորիս գիտակցութեան մէջ, Վարդան Բախչեաններու

կողքին, տիպար մարդու եւ ազգասէր սկառուտի օրինակ մը եւս դրոշմուած է Վիգէն Զաքարեան անուան տակ»: Բացման խօսքէն ետք բեմ բարձրացաւ մասնաճիւղի Սկառուտական Խորհուրդի ատենապետ եղբ. Նժդեհ Մկրտիչեան: Մկրտիչեան իր կարգին ողջունելէ ետք ներկաները վկայակոչեց Հ.Մ.Ը.Մ.Ի սկառուտութեան նպատակներուն առաջին կէտը, որ կը շեշտէ. «Պատրաստել ամուր նկարագրի եւ բարոյական բարձր արժանիքներու տէր, հաւատաւոր եւ անձնուէր հայեր՝ ծառայելու ազգին եւ հայրենիքին ու նուիրուելու հայ ժողովուրդի ձգտումներու իրագործման»: Նժդեհ Մկրտիչեան ըսաւ, որ այս կէտը ընթացիկ ու մակերեսային տող մը չէ եւ իր մէջ կ'ամփոփէ միութեան ամբողջ գաղափարախօսութիւնը, իտէալներն ու իղձերը: Ան աւելցուց, որ ձեռնարկին այս նախադասութիւնը յիշելը պատահականութիւն չէ, այլ՝ կը մարմնաւորէ Վիգէն Զաքարեանի անձը, որուն անունը կը կրէ մասնաճիւղին երիցական 25-ամեայ փաղանգը: Ան իր խօսքը աւարտեց ըսելով. «Հ.Մ.Ը.Մ.Ի սկառուտութիւնը միայն կանչեր արձակող եւ տողանցող հաւաքականութիւն մը չէ, Հ.Մ.Ը.Մ.Ի սկառուտութիւնը չի սահմանափակուիր խարուկահանդէսներու կամ ձեռնարկին աշխատանքներու սահմաններուն մէջ: Հոն կը պատրաստուին տիպար քաղաքացիներ, պատասխանատու, հայրենասէր եւ կարգապահ հայեր»: Եղբ. Մկրտիչեանի խօսքէն ետք գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր՝ պատրաստուած մասնաճիւղի

սկառուներուն կողմէ: Ապա ցուցադրուեցաւ տեսերիզ մը, որ կը ներկայացնէր Վիգէն Զաքարեանի սկառուտական կեանքը եւ փաղանգի հիմնադրութեան փուլերը:

Օրուան պատգամը փոխանցեց Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վաչէ Նաճարեան: Ան ողջունելէ ետք ներկաները ըսաւ, որ «25 տարի առաջ Վիգէնին եւ իր ընկերներուն գոհողութիւնը իր դրոշմը դրաւ հայոց պատմութեան վրայ, կազմաւորեց ներկայ Հայաստանի քաղաքական նկարագիրը եւ Շուշիի ազատագրումով անոնք վերականգնեցին հայութեան ազգային արժանապատուութիւնը:

«Վիգէն, իրեն նախորդող գաղափարակիրներուն նման, գիտակցական մասը ընտրեց՝ ընդունելով իր կեանքը նուիրել հայ ժողովուրդին եւ հայրենիքի ազատագրումին, համոզուած որ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»: Շարունակելով, եղբ. Նաճարեան աւելցուց. «Այսօր, Վիգէնին նահատակութեան 25-րդ տարելիցին առիթով կազմակերպուած այս ձեռնարկին տարողութիւնը, իմաստը կը տարածուի սկառուտական ընթացիկ արարողութիւններու սահմաններէն դուրս եւ առիթը կը շնորհէ մեզի, որ ո՛չ միայն բաւարարուինք յարգանքի մեր տուրքը մատուցելով, այլ նաեւ առիթը ունենանք վերարժեւորելու միութեանական մեր ընթացքը, թէ որքանո՞վ տակաւին հաւատարիմ ենք ու կը գործենք Վի-



գէնին առաջնորդած ուղիով»:

Եղբ. Նաճարեան յայտնեց, որ «Հ.Մ.-Ը.Մ.-ի գաղափարաբանութիւնը միայն մարզական չէ, սկառուտական չէ, այլ համապարփակ է, հայութեան ամբողջութիւնը, հայութեան խոչանքերը, հայութեան հետ կապուած բոլոր յոյսերը, մեր պայքարին լրիւ իմաստը: Սփիւռքի մէջ բոլոր այն պատանիներն ու երիտասարդները, որոնք ազգային յանձնառութիւններու տակ կը մտնեն, ձեզի նման, Հ.Մ.-Ը.Մ.-ի շարքերուն մէջ է, որ կը ստանան իրենց ազգային հիմնական դաստիարակութիւնը»:

Ապա, իր խօսքը սկառուներուն ուղղելով ան նշեց. «Դո՛ւք, Հ.Մ.-Ը.Մ.-ի

Պուրճ Համուտի մասնաճիւղէն ծնած եղբայր Վիգէն Զաքարեանին քոյրերն ու եղբայրները, այսօր, ձեր ակումբին ընդմէջէն նոյն շունչն է, որ տասնապատիկ անգամ պէտք է տարածէք: Այդ է Հ.Մ.-Ը.Մ.-ի կողմէ ձեզի տրուած դաստիարակութիւնը եւ այդ է Վիգէնին ձգած կտակը: Եթէ Վիգէն հոս ըլլար այսօր, պիտի ըսէ՝ իբրեւ կտակ կը պատգամեմ, որ դուք ալ ինծի նման գործէք աննահանջ եւ անդուլ: Երբեք եւ երբեք չունեաք դեղեւում, տարակոյս, յուսահատութիւն եւ նահանջ: Ձեզի վստահուած ջահը՝ զարդարուած Եռագոյն դրօշով, հպարտօրէն ցուցադրեցէ՛ք աշխարհին, որպէսզի իրականանայ մեր նահատակ հերոսներուն երազը, որպէսզի հասնինք Արարատի գագաթին՝ առաջնորդելով Հ.Մ.-Ը.Մ.-ի ուխտեալ սերունդները»:

Օրուան պատգամէն ետք, եղբ. Նաճարեան բեմ հրաւիրեց նախկին եւ ներկայ երէցները՝ վերանորոգելու համար երիցական իրենց երզումը:

Ապա խօսք առաւ Պետրոս Վրդ. Մանուէլեան, որ իր կարգին գնահատեց օրուան նախաձեռնութիւնը եւ նորանոր յաջողութիւններ մաղթեց Հ.Մ.-Ը.Մ.-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի աշխատանքներուն:

Ձեռնարկի աւարտին ելոյթ ունեցաւ հայրենի երգիչ Ներսիկ Իսպիրեան:

Յիշատակի օրը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:





# ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆԸ ԴԱՐՁԵԱԼ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԲԱԲԱԽՈՂ ՄԻՐՏԸ ՀԱՆԴԻՍԱՑԱԲ

**Թղթակից  
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ**

**Ա**րեւմտեան Մ. Նահանգներու Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 42-րդ մարզախաղերու փակման հանդիսութիւնը անգամ մը եւս վերածուեցաւ ամերիկահայութեան համար իսկական տօնախմբութեան մը՝ Սան Ֆեռնանտօ հովիտի Պիրմինկհամ վարժարանի շրջափակին մէջ: Արդարեւ, հազարաւոր մարզիկներ, սկաուտներ եւ ժողովրդային հոծ բազմութիւն մը մեծ խանդավառութեամբ հետեւեցան թէ՛ կայացող մարզախաղերուն, թէ՛ տողանցքին եւ թէ՛

անոր յաջորդած փակման փառատօնատօնախմբութեան՝ մինչեւ կէս գիշեր: Չորս օր անընդհատ, Շրջանային վարչութեան թէ՛ մասնաճիւղերու հարիւրաւոր կամաւորներ գործի լծուած էին կանոնաւորելու մարզասրահներու մուտքերը, կանգառները, ճաշ եւ ըմպելիքներ սպասարկող կրպակները, մարզախաղերու ամբողջ ընթացքը եւ երաժշտական յայտագիրները: Մէկ խօսքով, Հ.Մ.Ը.Մ.ի «կամաւորներու բանակը» իւրայատուկ մեղուանոցի վերածած էր Պիրմինկհամ վարժարանի ամբողջ տարածքը: Ոչ միայն այդ, այլեւ այդ չորս օրերուն ընթացքին, Նաւասարդեանը, նախորդ տարիներուն նման, վերածուած էր հայկական շունչ,

ոգի ու մթնոլորտ ճառագայթող վայրի մը: Այս բոլորին դադաթնակէտը հանդիսացան փակման տողանցք-հանդիսութիւնը եւ անոր յաջորդած փառատօնը: **ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ** Տողանցքէն առաջ, ներկաներուն հրամցուեցաւ գեղարուեստական կարճ յայտագիր մը, որուն ընթացքին ազգային-հայրենասիրական երգերու փունջով ելոյթ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Ջաւախք» մասնաճիւղի սկաուտական մանկապատանեկան երգչախումբը՝ ղեկավարութեամբ Շաքէ Ազիզեանի, երգեհոնի ընկերակցութեամբ՝ Րաֆֆի Նազարեանի:





Ապա, երիտասարդ Հ.Մ.Լ.Մ.ական եղբ. Վարանդ Աւաննէսեան ելոյթ ունեցաւ հայրենասիրական երգերու շարքով մը, որմէ ետք Քալիֆորնիոյ Հայ Երիտասարդաց Միութեան «Արենի» մանկապատանեկան պարախումբը (ղեկավարութեամբ Սարո Ասատուրեանի եւ Անահիտ Թաքլանեանի) ներկաներուն հրամցուց հայկական պարերու շարք մը:

**ԲԱՅՈՒՄԸ**

Գեղարուեստական յայտագիրէն ետք, օրուան հանդիսավարներ Սիւզի Օհանեան (հայերէն) եւ Արմանտ Քիլիճեան (անգլերէն) յայտարարեցին պաշտօնական պատուիրակութեան մարզադաշտ մուտքը. թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, 42-րդ Նաւասարդեանի պատուոյ նախագահ Վիգէն եւ Նոնո Աբէլեան, «Տիպար Հ.Մ.Լ.Մ.ական» եղբ. Շահէ Ենիգոմշեան եւ տիկինը Անին, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարտէլեան, ընկերակցութեամբ շրջանի մասնաճիւղերու խմբապետներուն:

Օրուան պաշտօնական հիւրերու



շարքին էին Հայաստանի հիւպատոս Վալերի Մկրտումեան, Քալիֆորնիոյ նահանգային ծերակուտական էնթրնի Փորթանթինօ, Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան, Հ.Մ.Լ.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետուհի քոյր Լիոնի Սարմազեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տարօն Տէր Խաչատուրեան, ինչպէս նաեւ Ազգային Կեդրոնական Վարչութեան, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան, Ազգային Վարչութեան, Արեւմտեան Մ. Նահանգներու Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչներ, նախորդ Նաւասարդեաններու պատուոյ նախագահներ եւ «Տիպար Հ.Մ.Լ.Մ.ական»ներ:

Օրուան հանդիսավարները, նախորդ տարուան ընթացքին մեզմէ յաւելտ բաժնուած վաստակաւոր Հ.Մ.Լ.Մ.ականներուն առ ի յարգանք՝ բազմութիւնը մէկ վայրկեան յոտնկայս լուծութեան հրաւիրեցին, ապա Շրջանային Սկաւտ Խմբապետուհի քոյր Շարլին Կիւզելեանս պաշտօնապէս տողանցքը սկսելու արտօնութիւն խնդրեց Շրջանային Վարչութեան ատենապետէն:

Դաշտ մուտք գործեց շրջանին մօտաւորապէս 50 հոգինոց շփորախումբը (ղեկավարութեամբ Օսկան եւ Ռազմիկ Արիսեաններուն), որուն յաջորդեց դրօշակի արարողութիւն: Յատկապէս պատրաստուած բեմին վրայ կատարուեցաւ դրօշակի արարողութիւն, որուն ընթացքին սկաւտական պատիւներով



բարձրացան Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Նաւասարդեանի դրօշները:

Շեփորախումբը նուազեց Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները:

**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ**

Առաջին խօսքը հայերէնով եւ անգլերէնով արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ պատիւ ու յարգանք մատուցեց այն բոլոր Հ.Մ.Ը.Մ-ականներուն, որոնք «ժրջան կ'աշխատին մեր

երիտասարդութեան հրամցնելու Հ.Մ.Ը.Մ-ականի վայել մաքուր մթնոլորտ, միշտ ի մտի ունենալով մեր նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»: Ապա, ան յիշեցուց, թէ անցեալ տարի այս ամպիոնէն յայտարարուած էր հիմնադրութիւնը Սաքրամենթոյի «Լոուի» մասնաճիւղին, իսկ այս տարի կը յայտարարենք կազմութիւնը Սանթա Բարիթայի «Կիլիկիա» միաւորին, որ այսօր պիտի մասնակցի տողանցքին: Առաւել, շարունակեց ան,- Շրջանային Վարչութիւնը Նորթ Հոլիվուտի «Ջաւախք» մասնաճիւղի յարկին տակ համախմբած է Իրաքի Պաղատտ եւ Քերքուք քաղաքներէն նոր հասած հայորդիներ, որոնք եւս կը մասնակցին այսօրուան տողանց-

քին: «100 տարի առաջ, Հ.Մ.Ը.Մ-ը հիմնուած էր ճիշդ այս պատճառով, որպէսզի համախմբէ Եղեռնէն ճողոպրած որբերը... Աշխարհի բոլոր անկիւնները, ուր որ հայութիւն կայ, Հ.Մ.Ը.Մ-ը կը համախմբէ մեր երիտասարդութիւնը՝ մարզական խաղերու, սկաուտութեան եւ երիտասարդական գործունէութեամբ», ըսաւ ան:

Ապա ան հպարտութեամբ ներկաներուն ծանօթացուց 42-րդ Նաւասարդեանի պատուոյ նախագահը եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»ը՝ յաջորդաբար Վիգէն եւ Նոնո Աբէլեան եւ եղբ. Շահէ Ենիգոմշեան, տալով Հ.Մ.Ը.Մ-ականի անոնց ամփոփ կենսագրութիւնները ու ընդգծելով անոնց զոհողութեան ոգին: Ան եզրափակեց ըսելով, որ Հ.Մ.Ը.Մ-ը «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանին ոգիով պիտի շարունակէ գործել նաեւ հետագայ տասնամեակներուն:

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ**

Յաջորդ խօսքը, հայերէնով եւ անգլերէնով արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան: Ան խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան մասին եւ ըսաւ. «Անգամ մը եւս կը նորոգենք մեր ուխտը երիտասարդութեան նկատմամբ ու կը տօնախմբենք կամաւոր աշխատանքի ոգին, մարզական առողջ մրցակցութիւնը, մարզական ոգին, ընտանեկան արժէքները եւ համայնքին նկատմամբ ծառայելու ոգին», ապա Կեդրոնական Վարչութեան անունով շնորհաւորեց Շրջանային Վարչութիւնը, ինչպէս նաեւ բոլոր ծնողները, համակիրներն ու գօրակցողները: Դաւթեան դիտել տրւաւ, որ պատուոյ նախագահը եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եղբայրները հանգիստացած են իր տարիներու գործակիցները այս շրջանէն ներս. «Երկար տարիների այս վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ-ականները ապացոյցն են մեր կազմակերպութեան վսեմ ոգիին եւ առաջնակարգ մտաւորական ու կամաւոր ուժին», դիտել տուաւ ան:

Ան աւելցուց, որ այս շրջանը քայլ առ քայլ կ'իրագործէ Հ.Մ.Ը.Մ-ի ընդհանուր ռազմավարական ծրագիրները,

ինչպէս՝ նոր միաւորներու կամ մասնա-  
ծիւղերու հիմնում, կամ սկսելով երի-  
տասարդական շարժում: Դիտել տարով,  
որ այժմ կը գտնուինք Հ.Մ.Ը.Մ.ի երկ-  
րորդ դարու կեանքի սեմին, ան կոչ ուղ-  
ղեց բոլորին՝ ըսելով. «Եկէ՛ք, միացէ՛ք  
մեզի 2018-ի Յուլիսի 19-28 հայրենի-  
քում, ուր մեծ շուքով եւ հպարտու-  
թեամբ պիտի տօնենք մեր 100-ամեակը  
համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումով,  
գիտաժողովով եւ հրապարակային շքեղ  
ձեռնարկներով, ապացուցելու, որ 1918-  
ին Պոլսում վառուած այս ջահը դեռեւս  
բոցավառուած է 100 տարի յետոյ եւ  
Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը ծածանուած է աշ-  
խարհի չորս անկիւններում»:

Եղբ. Դաւթեան ըսաւ նաեւ, որ մեր  
աշխարհատարած 30 հազար անդամ-  
ներն ու 109 մասնաձիւղերը, գրեթէ  
ամէնօրեայ կշռոյթով, դժուարին մար-  
տահրաւէրներ կը դիմագրաւեն, սա-  
կայն երբ Հ.Մ.Ը.Մ.ականները քով-քովի  
կու գան, օրինակելի նուիրումով կը  
յաղթահարեն այս բոլորը: Մենք,- շա-  
րունակեց ան,- հսկայական գումարներ  
չենք ծախսեր ինքնագովութեան հա-  
մար, «մենք համայնքին վրայ հիմնուած  
ու նոյն այդ համայնքին ծառայող կազ-  
մակերպութիւնն ենք. մենք համեստ մի-  
ջոցներով նուիրահաւաք կը կատարենք՝  
մեր իսկ անդամներու ճիւղերով», շա-  
րունակեց ան ու եզրափակեց. «Եկէ՛ք  
աշխուժօրէն առաջ մղենք մեր առաքե-  
լութիւնը եւ ծրագիրները, մեր հարե-  
ւաններուն պատմենք, թէ ի՞նչ կ'ընենք  
ամբողջ տարուան եւ ոչ թէ միայն Նա-  
ւասարդեանի ընթացքին, բազմացնենք  
մեր շարքերը, ծառայենք աւելի մեծ  
թիւով երիտասարդներու, դաստիարա-  
կենք աւելի՛ ուշիմ, աւելի ազնիւ եւ աւե-  
լի առողջ սերունդներ, բայց մանա-  
ւանդ՝ պատրաստենք աւելի՛ երիտա-  
սարդ ղեկավարներ ոչ միայն Հ.Մ.-  
Ը.Մ.ի, այլ մեր ժողովուրդին համար:  
Այնպէս որ, հպարտ, շատ հպարտ եղէ՛ք  
Հ.Մ.Ը.Մ.ով»:

**ԱՌԱՋՆՈՐԴ  
ՍՐԲԱԶԱՆԻՆ ՊԱՏԳԱՄԸ**

Պաշտօնական բաժինի վերջին խօսք  
առնողը եղաւ Առաջնորդ Սրբազանը,  
որ նշեց. «Անցեալ շաբաթավերջին մենք



մասնակից եղանք Հ.Մ.Ը.Մ.ի Յաղթա-  
նակի պարահանդէսին, իսկ այսօր վկան  
ենք յաղթականներու տողանցքին... Մեր  
առջեւ պիտի տողանցեն, ինչպէս ամէն  
տարի կը տողանցեն՝ միայն յաղթական  
մարզիկները... Մեզի համար Նաւա-  
սարդեան մարզախաղերուն իւրաքան-  
չիւր մասնակից յաղթական է եւ յաղ-  
թականի՛ հպարտութեամբ կը տողանցէ  
այսօր, որովհետեւ ինչպէս ողիմպիա-  
կան խաղերը, այնպէս ալ հայկական  
Նաւասարդեանները բոլորին՝ մասնակ-  
ցող մարզիկներուն թէ՛ հանդիսական-  
ներուն կը պատգամեն ազնիւ մրցակ-  
ցութիւն, կը պատգամեն տոգորուիլ  
ազգային արժէքներով, հարստանալ եւ  
աճիլ հոգիով ու մարմնով, դառնալ հա-

ւատարիմ ժառանգորդները մեր պապե-  
րուն, որոնք դարեր առաջ, մայր հայրե-  
նիքի հողին վրայ բարձրացուցած էին  
Նաւասարդեան խաղերու դրօշը: Եւ այդ  
դրօշը իբրեւ նուիրական աւանդ, դարե-  
րու խորքէն հասած է Հ.Մ.Ը.Մ.ին, որուն  
աննահանջ դրօշարշաւն է, որ կը մարմ-  
նաւորեն Նաւասարդեան խաղերը»:  
Սրբազանը ապա հպարտութեամբ  
ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական եւ  
Շրջանային վարչութիւնները, անոնց  
հովանիին տակ գործող բոլոր վարչու-  
թիւններն ու նուիրեալ կամաւոր ծա-  
ռայողները: Ան ողջունեց պատուոյ նա-  
խագահը եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ը,  
որոնք իրենց մանկութենէն ի վեր կը  
ծառայեն Հ.Մ.Ը.Մ.ին ու այդ ճամբով՛



մեր ժողովուրդին եւ համայն մարդկութեան: «Անոնք ազնիւ եւ օրինակելի տիպարներ են բոլորին համար, այնպէս՝ ինչպէս մարգական այս մեծ միութիւնը աճեցուցած եւ դաստիարակած է գիրենք: Օրհնեալ ըլլաք եւ ձեր վարձքը կատար», շարունակեց Առաջնորդը:

Ապա ան անդադարձաւ Հայաստանի Հանրապետութեան ծննդեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին, 2018 թուականին եւ դիտել տուաւ, որ պատահականութեան հետեւանք չէր Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդը: Հ.Մ.Ը.Մ.ի՝ Եղեռնէն միայն երեք տարի վերջ հիմնուած ըլլալու հանգամանքը փաստն էր մեր ժողովուրդի վերապրելու եւ վերածաղկելու հաւատքին ու կամքին: «Ահա թէ ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերդ կը սկսի «Յառաջ, նահատակ ցեղի անմահներ» բառերով, որոնք իրենց մէջ կը խտացնեն հսկայական խորհուրդ մը եւ անժամանցելի պատգամ մը, որ վստահաբար մեզի կը հասնի Հայկ Նահապետէն, Վարդան ու Վահան Մամիկոնեաններէն... հասնելու համար 1918-ի Հայաստանի անկախ

հանրապետութեան», ըսաւ սրբազանը:

Սրբազան հայրը յիշեցուց, որ Կիլիկեան աթոռի գահակալ Արամ Ա. Կաթողիկոս 2017 տարին հռչակած է վերանորոգումի տարի եւ Վեհափառը մեզ կը հրաւիրէ վերանորոգելու մեր անձնական թէ՛ հաւաքական կեանքերը, «նոր մղում տալու մասնաւորաբար նոր սերունդներու հայկերտումի նուիրական գործին»: Վեհափառին պատգամը, շարունակեց առաջնորդ սրբազանը, անժամանցելի է եւ հրաւէր է բոլորիս, որպէսզի քայլ պահենք օրուան հետ, տեւաբար վերանորոգենք մեր կառուցները՝ ապագայի տեսլականով, «որպէսզի այսօրուան պատանին դառնայ հայկական արժէքներու հաւատարիմ ժառանգորդ երիտասարդը, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին պէս այդ աւանդները փոխանցէ յաջորդ սերունդներուն... մինչեւ որ հայկական Եռագոյնը ծածանի Արարատի գագաթին»:

Սրբազանը ապա Աստուծոյ օրհնութիւնը հայցեց Հ.Մ.Ը.Մ.ին համար, որ-

պէսզի ան շարունակէ իր անխափան առաքելութիւնը:

### ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ

Շրջանային Խմբապետուհի Շարլին Կիլիկեանսի հրահանգով, տողանցքը սկսաւ առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին, որուն «Դարձեալ փայլեց» երգի կշռոյթներուն ընկերակցութեամբ, առաջին անգամ դաշտ մտաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն մասնակից պատուիրակութիւնը:

Ապա յաջորդեցին նորաստեղծ երիտասարդական բաժանմունքի անդամները, Սանթա Քլարիթայի քանի մը ամիս առաջ հիմնուած «Կիլիկիա» միակորի մարզիկներն ու սկաուտները, որոնց ետեւէն Սաքրամենթոյի երկու տարեկան «Լոռի» մասնաճիւղին մարզիկները:

Օրուան հանդիսավարներ Սիլվի Օհանեանի եւ Արմանտ Քիլիկեանի ազգայնաշունչ ու ոգեւորիչ խօսքերով հետզհետէ դաշտ մուտք գործեցին բոլոր՝ 19 մասնաճիւղերու մարզիկները, սկաուտական եւ վարչական կազմերը: Իւրաքանչիւր մասնաճիւղի մարզիկներու եւ սկաուտներու դաշտ մուտքին, հանդիսավարները կը ներկայացնէին տուեալ մասնաճիւղի հիմնադրութեան թուականը, մարզիկներու, սկաուտներու եւ անդամներու թիւը:

Այս բոլորին մէջ ոգեւորիչ էր տեսնել կակուղ թաթիկները, շատ յաճախ իրենց պատասխանատուներուն ձեռքը բռնած, կամ անոնց ուսերուն, իրենց տարազներով: Շատ մը մարզիկներ կը տողանցէին իրենց շահած մետալներով ու բաժակներով: Ոգեւորիչ ու յուզիչ էր յատկապէս «Ջաւախք» մասնաճիւղի այն պարմանի արեւոյշը, որ իր Ֆիզիքական անկարողութեան բերումով անուսասյակով կը մասնակցէր տողանցքին, դէմքին՝ Հ.Մ.Ը.Մ.ականի ակնյայտ հրճուանքն ու պատիւը:

Բոլոր մասնաճիւղերու սկաուտները, շեփորախումբի յեղափոխական երգերու կշռոյթով տողանցելով, իրենց յատուկ բարեւներով ողջունեցին պատուոյ հիւրերը, իսկ Օրէնձ Քաուսթիի «Սարդա-

րապատ», Սան Ֆրանսիսքոյի եւ Սանթա Բարբարայի «Անի» մասնաձեռնարկներու սկաուտները նաեւ ծաղկեփունջերով պատուեցին իրենց մասնաձեռնարկներու անդամ եղբայրներ Վիգէն Աբէլեանը եւ Շահէ Ենիգոմձեանը:

Երբ «Արարատ» մասնաձեռնարկի մարզիկներն ու սկաուտները դաշտ մտան, հանդիսավարները յայտարարեցին, թէ նոյն մասնաձեռնարկի մարզիկներէն ճորճ Աւագեան հրաւիրուած է մաս կազմելու Մ. Նահանգներու ուղիորդ-փոլոյի ազգային խումբին, ինչ որ արժանացաւ ժողովուրդի ծափողոյններուն:

Մասնաձեռնարկի հիմնադրութեան քառասնամեակը խորհրդանշող փուլիկներու փունջով մարզադաշտ մտան Փաստինայի «Ազատամարտ» մասնաձեռնարկի սկաուտները, մարզիկները, վարչականները եւ կամաւորները: Անոնք երբ պատուոյ հիւրերու շարքին մօտեցան, մասնաձեռնարկի տարեց հիմնադիր անդամներէն եղբ. Գալուստ Շիրազմեան իր ձեռքի բոցավառող ջահը փոխանցեց նոյն մասնաձեռնարկին մաս կազմող Հ.Մ.-Լ.Մ.ական իր թոռներուն, իբրեւ

խորհրդանշիչը սերնդափոխութեան եւ Հ.Մ.-Լ.Մ.ական գործի շարունակականութեան: Խանդավառութիւնը վարակիչ էր բոլորին համար:

Հանդիսավարները նաեւ յայտարարեցին, թէ յառաջիկայ տարի յիսնամեակն է Լոս Անճելըսի մասնաձեռնարկին, աւելցնելով, որ 2018-ի Նաւասարդեան 43-րդ մարզախաղերը պիտի նուիրուին Հ.Մ.-Լ.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակին:

Մասնաձեռնարկերու տողանցքէն ետք, Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, եղբայրներ Մանուէլ Մարսէլեան, Վիգէն եւ Նոնո Աբէլեան, տղթ. Շահէ Ենիգոմձեան եւ Շրջանային Վարչութեան մարզական պատասխանատու Արամ Թոմաս յաղթական խումբերու մարզական պատասխանատուներուն յանձնեցին բաժակներ, որմէ ետք, 42-րդ Նաւասարդեանի դրօշը սկաուտական պատիւներով յանձնուեցաւ պատուոյ նախագահին:

Աւարտին, յեղափոխական երգերու մեկնաբան Քրիստափոր Արապեան փունջ մը երգերով խանդավառեց ներկաները եւ ձեռնարկը իր լրումին հասաւ

նոյնքան տպաւորիչ հրավառութեամբ:

**ՓԱՌԱՏՅՈՒՆԸ**

Այնուհետեւ, բազմահազար ժողովուրդը ուղղուեցաւ Նաւասարդեան փառատօնի հրապարակը, ուր երեկոն շարունակուեցաւ երգիչներ Սահակ Սիւլեանի, Վարդան Թահմազեանի, Մեր Հովոյի, Անթուան Պէգճեանի եւ Տիգրան Ասատրեանի ստեղծած խանդավառ միջնորդութով:

42-րդ Նաւասարդեանը հասած էր իր պատուաբեր աւարտին: Թէեւ յոգնած ու երբեմն բառացիօրէն Ֆիզիքայէս սպառած էին բոլոր կամաւոր Հ.Մ.-Լ.Մ.ականները, բայց եւ այնպէս, առաւօտեան կանուխ ժամերուն, մտերմիկ միջավայրի մէջ, բոլորին խօսակցութեան նիւթը... յառաջիկայ տարուան աշխատանքներն էին: Շուտով կը սկսին թէ՛ 43-րդ Նաւասարդեանի եւ թէ՛ Հ.Մ.-Լ.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակի ծրագրերու նախապատրաստութիւնները:

Յառաջիկայ տարի 100-ամեակ է:  
(Լուսանկարները՝ Պերժ Ծամճեանի)

PINK  
*Kimberley*<sup>™</sup>  
 AUSTRALIA

PinkKimberley.com.au

Diamonds beyond rare

Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



# 42-ՐԴ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ ՊԱՐԱՀԱՆՌԵՍԸ «ԲԱՐՁՐԱՑԻՐ-ԲԱՐՁՐԱՑՈՒՐ» ՆՇԱՆԱԽՕՍՔԸ ՊԱՏՈՒԵԼՈՒ ԱՌԻԹ

Թղթակից  
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

**Շ**աբաթ, 24 Յունիս 2017-ի երեկոյեան, Պեվըրլի Հիլզի «Պեվըրլի Հիլթրն» պանդոկին մէջ կազմակերպուած Հ.Մ.-Ը.Մ.-ի 42-րդ Նաւասարդեան մարզախաղերու յաղթանակի պարահանդէսը իւրապատուկ առիթ մը հանդիսացաւ պատուելու եւ դրուատելու այս կազմակերպութեան գաղափարական ընկալումները: Այդ երեկոյ, թէ՛ պատուոյ նախագահին եւ թէ՛ «Տիպար Հ.Մ.-Ը.Մ.ական»ին մատուցուած յարգանքին ընդմէջէն ընդգծուեցան այս մեծ կազմակերպութեան մէջ ե՛ւ կամաւոր աշխատանքին վեհուածները, ե՛ւ երիտա-

սարդութեան առողջ դաստիարակութեան ի նպաստ տարուող ճիգերը:

Ձեռնարկին ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի հիւպատոս Արմէլա Շաքարեան, թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Կարո Իսբէնճեան, Նաւասարդեանի 2016-ի պատուոյ նախագահ՝ Խաչօ եւ Արաքսի Աջաճեաններ, 42-րդ Նաւասարդեանի պատուոյ նախագահ՝ Վիգէն եւ Նոնօ Աբէլեաններ, «Տիպար Հ.Մ.-Ը.Մ.ական 2017» հռչակուած տղթք. Շահէ եւ Անի Ենիգոմճեաններ, անցեալի պատուոյ նախագահներ եւ «Տիպար Հ.Մ.-Ը.Մ.ական»ներ, Հ.Մ.-Ը.Մ.-ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը, ու-

ղեկից միութիւններու ներկայացուցիչներ, նուիրատուներ, ինչպէս նաեւ Հ.Մ.-Ը.Մ.ականներու եւ համակիրներու հոծ բազմութիւն մը՝ շուրջ 550 հոգի:

Երեկոյին պաշտօնական բաժինը սկսաւ Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.-Ը.Մ.-ի քայլերգներով, կատարողութեամբ՝ Իվանա Գրիգորեանի: Ապա, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարտիկեան հրաւիրուեցաւ բեմ, ողջոյնի եւ բացման իր խօսքը փոխանցելու: Ան դիտել տուաւ, որ հաւաքուած ենք տօնախմբելու Հ.Մ.-Ը.Մ.-ի Նաւասարդեանի յաղթանակը. «42 տարիներու ընթացքին, մարզախաղերուն հսկայական ծաւալումը, մարզիկներու եւ մասնակցող խումբերու աճը, նոր մարզատեսակներու ընդգրկումը, ինչպէս նաեւ զօրաշարժի ենթարկուած մեր հազարաւոր անդամներն ու համակիր-



ները Նաևասարդեանը դարձուցած են Սփիւռքի մեծագոյն ձեռնարկը»:

Ան ուրախութեամբ յայտարարեց կազմութիւնը շրջանէն ներս «Կիլիկիա» անունով նոր միաւորին, ապա տեղեկացուց, թէ յատուկ ճիգ թափուած է Իրաքէն եկած եւ Մ. Նահանգներ հաստատուած Հ.Մ.Ը.Մ.ականները մեր կազմակերպութեան մէջ ընդգրկելու համար, որովհետեւ «այս եղած է Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը հարկը տարիէ ի վեր, ու այդպէս ալ պիտի մնայ: Հ.Մ.Ը.Մ.ը իրարու քով պիտի բերէ հայ երիտասարդները, անոնց տայով ազգային դաստիարակութիւն, հայկական եւ մարզական առողջ մթնոլորտ»:

Ապա, ան հպարտութեամբ ներկայացուց Նաևասարդեան 42-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Վիգէն եւ Նոնո Աբէլեան ամուրը, ինչպէս նաեւ՝ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի պատիւին արժանացած եղբ. Շահէ Ենիգոմշեանը:

Վիգէն Աբէլեանի մասին խօսելով, եղբ. Մարսէլեան ընդգծեց այն փաստը, որ ան փոքր տարիքէն (Աիբանան) անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ին՝ իբրեւ մարզիկ եւ սկաուտ, ապա իր գործունէութիւնը շարունակած է Օրէնձ Քաունթիի «Սարգարապատ» մասնաճիւղին մէջ, իբրեւ վարչական (ատենապետ, գանձապահ եւ մարզական պատասխանատու): Ընտրուած է Շրջանային Վարչութեան անդամ եւ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական թէ Շրջանային մակարդակի յանձնախումբերու: Վիգէն Աբէլ-

եան մասնակցած է Ներկայացուցչական եւ Պատգամաւորական բազմաթիւ ժողովներու, ինչպէս նաեւ այս ժողովներու որոշումները գործադրող զանազան յանձնախումբերու:

Ատենապետ եղբ. Մարսէլեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը, շրջանի 6300 անդամներուն անունով, Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի սեմին կ'ուխտէ շարունակել իրեն յանձնուած առաքելութիւնը, որ սկսած է դար մը առաջ եւ պիտի շարունակուի յաջորդ հարիւրամեակին եւս»:

Այնուհետեւ, ջերմ ծափահարութիւններու ընդմէջէն բեմ հրաւիրուեցան եղբ. Շահէ Ենիգոմշեան եւ Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Սադո Կարապետեան: Շրջանային Վարչութիւնը «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի յուշատախտակը յանձնեց եղբ. Ենիգոմշեանին: Եղբ. Կարապետեան սեղմ տողերով ներկայացուց «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսին արժանացած եղբայրը, Հ.Մ.Ը.Մ.ականի կեանքէն առնուած լուսանկարներու ընկերակցութեամբ:

Եղբ. Շահէ Ենիգոմշեան ծնած է Պէյրութ, աւարտած է Համազգայինի Նշան Փալանճեան Ճեմարանը, ապա շրջանաւարտ եղած է Պէյրութի Ամբրիկեան Համալսարանէն՝ իբրեւ բժիշկ: Բժշկական ուսումը շարունակած է Մ. Նահանգներու մէջ, իբրեւ փոխանցիկ հիւանդութիւններու մասնագէտ: Ան



վեց տարեկանին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ին՝ իբրեւ գայլիկ, ապա եղած է նաեւ մարզիկ: 1970-ականներու սկիզբները եղած է մասնաճիւղի սկաուտ խմբապետ ու այդ նոյն տարիներուն, երբ Հ.Մ.Ը.Մ.ը կ'օժտուէր համահայկական կառույցով, ան իր ներդրումը ունեցած է նոր կառույցի սկաուտական կանոնադրի մշակման մէջ: Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի տեղական ու համահայկական բազմաթիւ բանակումներու: Գործած է Կեդրոնական Վարչութեան յառաջացուցած բազմաթիւ յանձնախումբերու, ներառեալ՝ ռազմավարական ծրագրումի յանձնախումբին մէջ: Երկար ժամանակ գործած է Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանային կառույցէն ներս,



առաւելաբար՝ դաստիարակչական եւ ապագայի ծրագրումի մարզերուն մէջ: Մասնակցած է հինգ Պատգամաւորական ժողովներու եւ հեղինակ է Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակչական աշխատանքներուն առնչուող բազմաթիւ յօդուածներու:

Գնահատանքի ծափահարութիւններու ընկերակցութեամբ խօսք առաւ եղբ. Ենիգոմշեան. ան նախ շնորհակալութիւն յայտնեց իրեն ընծայուած պատիւին համար, ապա երախտագիրտութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ին, որ իր մէջ զարգացուցած է յանձնառու հայու կերպարը: Ան ինքզինք բախտաւոր նկատեց, որ 58 տարիներու ընթացքին պատեհութիւնը ունեցած է ծանօթանալու հարիւրաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու, «որոնցմէ շատերը դարձան իմ ամենամօտիկ եւ անկեղծ ընկերներս: Կրկնակիօրէն բախտաւոր եմ, որովհետեւ կը պատկանիմ այն սերունդին, որ առիթը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի լաւագոյն մշակներու շունչով դաստիարակուելու: Այսպիսով, ես ստացայ կեանքի այն ապրումը, զոր մենք կը կոչենք Հ.Մ.Ը.Մ.ական աւանդութիւն», ըսաւ ան:

Շարունակելով, եղբայրը հինգ կէտի մէջ ամփոփեց Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակչական առաքելութեան ընդհանուր ուղղութիւնները: Այսպէս, ան անհրաժեշտ գտաւ ժամանակի պահանջներուն համապատասխանող ճիշդ ծրագիրներու որդեգրումը՝ ճիշդ միջավայրէ ներս: Անդրադարձաւ միութեան նախապա-

տուութիւններուն, որոնք են՝ սկստուութիւնն ու մարզական կեանքը, ապա դիտել տուաւ, որ 6-18 տարեկան հայ երեխաներուն եւ պատանիներուն մեծ մասը հայկական դպրոց չի յաճախեր, հետեւաբար՝ մեր դաստիարակչական աշխատանքին հիմնական թիրախը պէտք է ըլլայ ա՛յդ սերունդը:

Իսկ 18-էն վեր տարիքի սերունդին համար, ան անհրաժեշտ գտաւ ուղիներ գտնելու հրամայականը, որպէսզի անոնք եւս շարունակեն ներդրում ունենալ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ: Գալով փոքր համայնքներուն, եղբօր պատկերացումով կարգ մը պարագաներու պէտք է ճիշդ եւ ճկուն տնտեսներ մեր մարդուժը, այն իմաստով, որ կամաւորներու մէկ խումբ պէտք է վարէ տուեալ համայնքի թէ՛ մարզական, թէ՛ մշակութային եւ թէ՛ ընկերային բնագաւառի գործերը, այսինքն՝ տանի Հ.Մ.Ը.Մ.ի, Համագգայինի եւ ՀՕՄ-ի աշխատանքները միաժամանակ:

Վերջապէս, եզրակացուց ան՝ ըսելով, թէ այս աշխատանքները յառաջ մղելու համար դաստիարակ ղեկավարներու կարիքը կայ, եւ ճիշդ հո՛ս է, որ Հ.Մ.Ը.Մ.ը աշխատանքի մեծ դաշտ մը ունի իր դիմաց, ի հարկին կատարելով մասնայատուկ նիւթական ներդրումներ՝ մասնայատուկ ծրագիրներու համար:

Եզրակացնելով, եղբ. Ենիգոմշեան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը տակաւին շատ բան ունի տալիք հայ ժողովուր-

դին, ու գնահատեց «մեր բոլոր վարչութիւններու, խորհուրդներու, յանձնախումբերու եւ կամաւորներու նուիրումը: Բարձր կը գնահատեմ մեր ներկայի եւ անցեալի պատուոյ նախագահները: Իսկապէ՛ս ուրախ եմ, որ այս յիշատակելի պահը կը բաժնեմ մօտիկ ընկերոջս՝ Վիգէն եւ Նոնօ Աբէլեաններուն հետ»: Ապա, ան շնորհակալութիւն յայտնեց կնոջը՝ Անիին ու երեք զաւակներուն՝ Սեւանին, Լոռիին ու Գարինին, որոնք իրեն հետ կը բաժնեկցին Հ.Մ.Ը.Մ.ի ոգին եւ կեանքը:

Ընթրիքի սպասարկումէն ետք շարունակուեցաւ յայտագիրին պաշտօնական բաժինը:

Այսպէս, նախ պատահուի վրայ ցուցադրուեցաւ պատուոյ նախագահ Վիգէն Աբէլեանի Հ.Մ.Ը.Մ.ական կեանքը ներկայացնող լուսանկարներու փունջ մը, ապա բեմ հրաւիրուեցան նախորդ եւ ներկայ Նաւասարդեանի պատուոյ նախագահները՝ յաջորդաբար Խաչօ եւ Արաքսի Աչաճեաններ ու Վիգէն եւ Նոնօ Աբէլեաններ, որպէսզի կատարուի պատուոյ նախագահի եռագոյն երիզի փոխանցումը:

Խանդավառ մթնոլորտի մէջ, Խաչօ Աչաճեան եռագոյն երիզը յուզումով փոխանցեց Վիգէն Աբէլեանին, իսկ Շրջանային Վարչութիւնը յուշանուէր-յուշատախտակ մը նուիրեց անոր:

Միշտ քայլ պահելով սրահի խանդավառութեան հետ, խօսք առաւ եղբ. Վիգէն Աբէլեան եւ շնորհակալութիւն յայտնեց Շրջանային Վարչութեան՝ իրեն եւ տիկնոջը ընծայուած պատիւին համար:

Պատուոյ նախագահը Հ.Մ.Ը.Մ.ի մեծագոյն գրաւչութիւնը նկատեց կամաւոր աշխատանքի գաղափարը եւ իւրաքանչեւ ձեռով մը գնահատեց զայն՝ տրուած ըլլալով, որ Հ.Մ.Ը.Մ.ը իւրաքանչեւ «կամաւորներու բանակ» մըն է: Այսպէս, ան նախ խնդրեց պարահանդէսի կազմակերպիչ յանձնախումբի անդամներէն, որ ոտքի կանգնին: Ապա, նոյնը խնդրեց մասնաճիւղերու, Շրջանային եւ Կեդրոնական Վարչութիւններու անդամներէն ու յայտարարեց. «Իբրեւ Օրէնճ Քառուցիի «Սարդարապատ» մասնաճիւղի անդամ՝ կ'ուզեմ շնորհա-



կալուծիլն յայտնել ձեր բոլորին, ձեր անձնուէր աշխատանքին համար»:

Բայց տակաւին կար կամաւորներու ուրիշ փաղանգ մը եւս: Վիզէն Աբէլեան ներկայ վարչականներէն խնդրեց յարգանք մատուցանել իրենց կիներուն եւ ամուսիններուն, որոնք համբերատարութեամբ կարելի կը դարձնեն Հ.Մ.Ը.Մ.էն ներս մեր կամաւոր աշխատանքը: Սակայն, շարունակեց ան, այս աշխատանքները չէին կրնար ամբողջութեամբ արդիւնաւորուիլ, եթէ չըլլար մեր գործին հաւատացող նուիրատուներուն գործնական աջակցութիւնը. այս ծիրէն ներս, ան յաջորդաբար յայտարարեց անունները այն պատուոյ նախագահներուն, որոնք ներկայ էին սրահէն ներս: Այսպէս, էնտի եւ Ալին Անտոնեան, Սարգիս եւ Թամարա Արեւեան, Հրաչ եւ Մարինէ Անտոնեան, Ալպէրթ եւ Սոնա Շահինեան, Չարլի եւ Ժիւլի Կալեան, Շանթ եւ Վերփին Հայթայեան, Վահագն եւ Պայծառ Թովմասեան, Զործ Ժամկոչեան, Սար-



գիս Նուրեան, Պետիկ եւ Մէլրի Ֆերմանեան ու Խաչօ եւ Արաքսի Աչաճեան ոտքի բարձրացան ու արժանացան սրահի ջերմ գնահատանքին:

Վերջապէս, պատուոյ նախագահը ընդգծեց Հ.Մ.Ը.Մ.ի դերը նաեւ ընկերային մարզէն ներս՝ իրեւ միջավայր, ուր իրարու կը ծանօթանան հայ երիտասարդներն ու երիտասարդուհիները, մինչեւ իսկ կազմելով հայկական ընտանիքներ. ան նաեւ տուաւ օրինակներ Հ.Մ.Ը.Մ.ական իր ընկերներէն, ինչպէս նաեւ՝ իր իսկ գաւակին, որ շուտով պի-

տի պսակուի Հ.Մ.Ը.Մ.ական քրոջ մը հետ: Ան խօսքը ուղղելով բոլոր զոյգերուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.էն ներս ծանօթացած են իրարու, խնդրեց, որ ոտքի կանգնին եւ իրենց բջիջային հեռաձայները լուսաւորեն: Արդէն իսկ աշխուժացած սրահը սկսաւ... բառացիօրէն շողշողալու:

Աւարտելով իր խօսքը, Աբէլեան կրկին անգամ շնորհակալութիւն յայտնեց բոլոր կամաւոր աշխատողներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ին զօրակցողներուն:


42-րդ Նաւասարդեանի պարահանդէսին պաշտօնական բաժինը հասաւ աւարտին, երբ մօտաւորապէս երկու ժամ դրուատիքը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» կարգախօսին, ու անոր թելադրած կամաւոր աշխատանքին:

Երեկոյն շարունակուեցաւ «Allen G» նուազախումբին երգերով ու ներկաներու պարերով:

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)


# Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF  
THE NEW AIRLINE COMPANY




Photos: © Yann Mathis-Berthiaud, Terre vue du Ciel, Licence 075 930031, Studio YACR, 2005 #005


- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days




11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com



48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com



67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr



32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 27-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԻՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

## Մ. Փուլչիկեան-Նալպանտեան ՊՈՍՈՐԸ

**Հ**.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Նաւասարդեան 27-րդ մարզախաղերը յիշատակելի օրեր պարգեւեցին Փրովիտընսի «Իստ Կրինիչ» երկրորդական վարժարանի մարզադաշտերը համախմբուած շրջանի հայուիթեան, որ Հ.Մ.Ը.Մ.ական խանդավառութեան բարձր մթնոլորտի մէջ, երեք օր շարունակ հետեւեցաւ Փուլչիկեանի, պասքեթպոլի, վոլիպոլի, լողի, վազքի եւ թենիսի հետաքրքրական խաղերու:





Այս մարզախաղերուն կը մասնակցէին շրջանի 11 մասնաճիւղերէն աւելի քան 450 մարզիկ-մարզիկուհիներ, որոնք կու գային Ալպընիէն, Պոսթընէն, Մերիմէք Վելիէն, Շիքակոյէն, Նիւ Եորքէն, Նիւ Ճըրզիէն, Ֆիլատելֆիայէն, Ֆլորիտայէն, Ուաշինկթընէն, Փրովիտընսէն եւ Տիթթոյթէն: Մարզիկները իջեւանեցան Փրովիտընսի «Պիլթմոր» պանդոկը եւ հիւրընկալուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Փրովիտընսի մասնաճիւղին կողմէ, որ այս առթիւ ճիգ չէր ինայած մարզական եւ ընկերային լաւագոյն մթնոլորտը ստեղծելու:

**ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ**

Մարզախաղերը տեղի ունեցան ծիւփոքը, կրտսեր, երէց եւ վեթերան մարզիկ-մարզիկուհիներու դասակարգերով: Մարզիկներու, ծնողներու եւ բարեկամներու խանդավառութիւնը դրժ-

բախտաբար տրտմութեան մթնոլորտի փոխուեցաւ, երբ պասքեթպոլի առաջին խաղին սկիզբը, Նիւ Ճըրջիի տղոց խումբին մարզիչը, սիրուած ու յարգուած եղբ. Մարք Ալաշայեան սրտի կաթնուածով մը հոգին աւանդեց, խոր սուգի մատնելով Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքը: Խաղերը շարունակուեցան եղբ. Մարքի յիշատակին եւ իւրաքանչիւր մարզիկ իր թելին վրայ կրեց սեւ ժապաւէն մը:

**ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԾԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՆԱՆԴԵՍԸ**

Մարզախաղերու յաղթանակի ճաշակերոյթ-պարահանդէսը տեղի ունեցաւ Ռոտ Այլընսի «Բընվէնչըն» կեդրոնի շքեղ սրահին մէջ, հովանաւորութեամբ

Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեանի, ներկայութեամբ բազմաթիւ հրաւիրեալներու եւ աւելի քան 780 հայորդիներու:

Յայտագիրին պաշտօնական բաժինով, հանդիսավար քոյր Մենար Դարբինեան երեկոն բացաւ բարի գալուստ մաղթելով ներկաներուն: Ապա, ան ներկայացուց օրուան պատուոյ հիւրերը՝ Օշական Արք. Չոլոյեան, Գաբրիէլ Քհնյ-Նազարեան՝ Փրովիտընսի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ, Պատուելի Յակոբ Մանճելիքեան, օրուան «Թագաւոր»՝ Արամ Կարապետեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ժանօ Աւետիսեան, Հ.Մ.Ը.Մ-ի



Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Հրաչ Մեսրոպեան, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաշեան, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Թալին Տաղլեան, Փրովիտորնսի մասնաճիւղի ատենապետուհի քոյր Սիրան Գրիգորեան, կարգադիր յանձնախումբի պատուոյ ատենապետ եղբ. Յակոբ Խաչատուրեան, կարգադիր յանձնախումբի ատենապետ եղբ. Կարօ Թաշեան, Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ եւ քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Ոսօք առաւ 27-րդ Նաւասարդեան խաղերու կարգադիր յանձնախումբի ատենապետ եղբ. Կարօ Թաշեան եւ

շնորհակալութիւն յայտնեց Փրովիտորնսի մասնաճիւղին, որ մարզախաղերու աշխատանքներուն պատասխանատուութիւնը վստահեցաւ նոր սերունդի անդամներուն:

Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաշեան: Ան առաջին հերթին ցաւակցութիւն յայտնեց եղբ. Մարգ Ալաշայեանի մահուան տխուր առիթով: Ապա, ան իր խորին շնորհակալութիւնները փոխանցեց Փրովիտորնսի մասնաճիւղին, այս տարուան մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբին եւ հիւրընկալ մարմնին, յիշեցնելով որ քանի մը ամիսէն Նիւ Ճրքիի

մէջ մեծ շուքով պիտի տօնակատարուի Արեւելեան Մ. Նահանգներու Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան հիմնադրութեան քառասնամեակը:

Իր խօսքէն ետք, եղբ. Թանաշեան յուշատախտակով մը պատուեց Փրովիտորնսի գաղութին հանրաձանօթ ազգային եւ Նաւասարդեան 27-րդ մարզախաղերու նախագահ՝ օրուան «Ժազաւոր» Արամ Կարապետեանը, գնահատելով անոր ջանքերը՝ Ռոտ Ալյընտի դպրոցներուն մէջ Հայկական Յեղապանութեան դասանիւթի որդեգրման մէջ:

Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ժանօ Աւետիսեան, իր կարգին, ցաւակցութիւններ յայտնեց Մարք Ալաշայեանի մահուան տխուր առիթով: Ապա, ան գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի 100 տարիներու անխոնջ աշխատանքը, աւելցնելով որ Հայ Դատը անցած է ճանաչման փուլէն պահանջատիրութիւն եւ հատուցում, եւ թէ՛ Հայ երիտասարդը հետեւողական ու աննահանջ ոգիով տէր պիտի կանգնի իր տուած երդումին՝ «Դէպի յաղթանակ» երթին:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Հրաչ Մեսրոպեան իր պատգամով գնահատեց Շրջանային Վարչութեան եւ Փրովիտորնսի կազմակերպիչ յանձնախումբին



տարած աշխատանքը: Ան նշեց, որ 2018-ին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան հարիւրամեակը ապացոյց է, որ անցնող 100 տարիներու դժուարութիւններն ու մարտահրաւէրները միշտ յաղթահարուած են միութեան հիմնադիրներուն եւ յաջորդական պատասխանատուներուն կամքով եւ նուիրումով: «Անուանական գոյութիւն չէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը, այլ՝ կամաւոր նուիրում է մեր համակիր ժողովուրդին, որ իր զաւակները վստահեցաւ մեր առաքելութեան եւ գաղափարախօսութեան, որպէսզի նոր սերունդը մեծնայ ազգային, բարոյական ու ընտանեկան կարգապահ մթնոլորտի մէջ» շեշտեց եղբ. Մեսրոպեան:

Վերջին խօսքը արտասանեց Արեւելեան Մ. Նահանգներու Առաջնորդ Օշական Արք. Չորոյեան: Ան իր խրատակալից պատգամով դրուատեց 100 տարեկան Հ.Մ.Ը.Մ.ը, շեշտելով որ ան սիրելի մօր մը պէս եղաւ մեր դաստիարակը՝ մեզ սնուցանելով Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարականով, ինքնութիւն տալով մեր սերունդին: Առաջնորդը աւելցուց, որ պատկանելիութեան զգացումը, ինքնութեան կողքին, շատ կարեւոր է, քանի ան կը պահանջէ զոհողութիւն, ծառայութիւն, անսակարկ նուիրում եւ դաստիարակելու պարտականութեան խոր զգացում, որպէսզի անտարբերութիւնը եւ անհո-

գութիւնը մեր շարքերէն ու տուներէն ներս չսպրդին: «Ճակատբազ ապրինք, ուժ ամբարենք, իբրեւ հաւաքականութիւն, կայտառ մնանք, որպէսզի հպարտօրէն ըսենք, որ թշնամին պարտուեցաւ ու մենք յաղթեցինք» աւելցուց ան: Յայտագիրի պաշտօնական բաժինի ակաւորին, ներկաները Մոնթրէալէն ժամանած երգիչ էլի Պէրլայէրեանի եւ իր նուագախումբին ու Պոսթընի Տի. Ճէյ. Ռէյմզի ճոխ երգերով, պարերով ու յեղափոխական երգերով խանդավառ պահեր ստեղծեցին մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր:

**ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ**  
Նաւասարդեան 27-րդ մարզախաղե-

րու փակման շքեղ հանդիսութիւնը տեղի ունեցաւ Մաունթ Փլէյքընթ երկրորդական վարժարանի շրջափակին մէջ, հովանաւորութեամբ Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չորոյեանի, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի բազմահարիւր համակիրներու: Իսկական վայելք մըն էր ականատես ըլլալ չորս հարիւրէ աւելի մարզիկներու, սկաւտներու, արեւոյշներու, գայլիկներու եւ կակուղ թաթիկներու տողանցքին: Տողանքը կ'առաջնորդէր Փրովիտընսի մասնաճիւղի սկաւտական չեփորախումբին կողմէ:

Փակման հանդիսութիւնը վարեցին քոյր Մարալ Խաչատուրեան եւ եղբ. Ռաֆֆի Ռշտունի, որոնք քոյր Մենար



Դարբինեանի հետ փոխն ի փոխ արտասանուած հայաշունչ խօսքերով ներկայացուցին հպարտ ու բարձրաճակատ տողանցող մեր ապագայ սերունդը: Սկսուածներու եւ մարզիկներու դաշտ մուտքէն ետք, Առաջնորդը իր բացման աղօթքէն անմիջապէս ետք արտասանեց «Հողուոց Հանգուցելոց» աղօթքը՝ նորոգ հանգուցեալ եղբ. Մարք Ալաշայեանի յիշատակին: Ապա, սկսուածներու կողմէ երգուեցան Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայերգները:

Քոյր Մարալ Խաչատուրեան տեղեկութիւններ տուաւ իւրաքանչիւր մասնաճիւղի մասին, մինչ նոյն մասնաճիւղի անդամները հպարտօրէն կը տողանցէին պատուոյ հարթակին առջեւէն: Տողան-

ցողներու խումբը ներկայացուց շրջանէն համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն մասնակից պատուիրակութիւնը: Ապա, քոյրը ներկայացուց օրուան պատուոյ հիւրերը:

Խօսք տրուեցաւ Փրովիտընսի մասնաճիւղի ատենապետուհիին, որ շնորհակալութիւն յայտնեց մարզախաղերուն նպաստած բոլոր յանձնախումբերու անդամներուն:

Այնուհետեւ խօսք առաւ եղբ. Վահէ Թանաշեան, որ փոխանցեց Շրջանային Վարչութեան շնորհակալութիւնները՝ մարզիկներուն եւ պատասխանատուներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.ականի վայել կեցածքով փայլուն էջ մը արձանագրեցին շրջանի մարզական պատմութեան մէջ:



Եղբ. Թանաշեան շեշտեց, որ սկսուածներն ու մարզիկները պիտի շարունակեն իրենց հպարտ երթը՝ միշտ բարձր պահելով Հ.Մ.Ը.Մ.ի անունը:

Կարօ Թաշեան Հ.Յ.Դ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ իր շնորհակալութիւնները յայտնեց մարզախաղերու մասնակից մասնաճիւղերու սկսուածներուն եւ մարզիկներուն՝ անոնց մաղթելով յաջողութիւն:

ՀՕՄ-ի ներկայացուցիչ Թալին Տաղլեան եւս փոխանցեց շնորհաւորական խօսքեր Փրովիտընսի հիւրընկալ եւ միւս բոլոր մասնաճիւղերուն՝ իրենց նուիրումին եւ յարատեւ աշխատանքին համար:

Այնուհետեւ, խօսք տրուեցաւ օրուան «Ժագաւոր»՝ Ռոտ Ալլընտ նահանգի նախկին ծերակուտական եւ Փրովիտընսի գաղութին հանրածանօթ ազգային Արամ Կարապետեանին, որ Ռոտ Ալլընտ նահանգի դպրոցներուն մէջ Հայ-





կական Ցեղասպանութեան ուսուցման բանաձեւը որդեգրել տուաւ եւ պաշտօնական օրէնք դարձուց նահանգի կրթական նախարարութեան մէջ: Կարապետեան, որ միշտ նեցուկ կանգնած է հայ երիտասարդական կազմակերպութիւններուն, իր շնորհաւորական ու քաջալերական խօսքերը ուղղեց բոլոր մարզիկներուն ու ներկաներուն, շեշտելով որ անոնք իրենց քաղաքներուն մէջ յարատեւութեամբ եւ վճռակամութեամբ շարունակեն Ցեղասպանութեան ճանաչման գործը:

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային մարզական յանձնախումբի անդամ եղբ. Յակոբ Սուլթանեան յուզուած եւ արտասուլթոր աչքե-

րով արտայայտուեցաւ վաղամեռիկ եղբ. Մարք Ալաշայեանի մասին, գնահատելով անոր երկարամեայ տքնաջան աշխատանքը:

Համաձայն Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան որոշումին, յառաջիկայ հինգ մարզախաղերու երէց տղոց պատգեթպոլի բաժակը պիտի կոչուի Մարք Ալաշայեանի անունով: Ապա տեղի ունեցաւ բաժակներու եւ մետալներու բաշխում:

Առաջին բաժակը՝ երէց տղոց պատգեթպոլի Մարք Ալաշայեանի բաժակը եւ մետալները շնորհուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Նիւ Շորքի մասնաճիւղին:

Ապա, Ժան Աւետիսեան Արեւելեան Մ. Նահանգներու Հ.Յ.Գ. Կեդրոնական Կոմիտէին կողմէ գնահատական խօսք ուղղեց Հ.Մ.Ը.Մ-ի պատասխանատուներուն, որոնց ճիգը, ուժը, կորովն ու հետեւողականութիւնը անպայման արդիւնաբեր պիտի դառնայ, ըսաւ ան:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ եղբ. Հրաչ Մեսրոպեան յայտնեց իր ցաւակցութիւնները եւ շնորհաւորեց Փրովիտընսի եւ մնացեալ մասնաճիւղերու պատասխանատուներն ու մարզիկները, որոնք Հ.Մ.Ը.Մ-ականավայել կեցուածքով մարզախաղերը յաջողութեամբ պսակեցին: Ան քաջալերեց, որպէսզի նոր վճռականութեամբ դիմագրաւենք նոր մարտահրաւէրներ եւ պատրաստ ըլլանք ջահը փոխանցելու յաջորդ սերունդին: Եղբ. Հրաչի խօսքին աւարտին, ան յայտարարեց, որ 27-րդ

Նաւասարդեան մարզախաղերու առաջին դիրքը գրաւող եւ բաժակը շահող Հ.Մ.Ը.Մ-ի Պոսթընի մասնաճիւղը իր բաժակը սիրով պիտի փոխանցէ Նիւ Ճըրզիի մասնաճիւղին, ի յիշատակ հանգուցեալ եղբ. Մարք Ալաշայեանի:

Վերջին խօսք առնողը եղաւ Առաջնորդը, որ իր խրախուսիչ պատգամով օրուան խանդավառութիւնը հասցուց գագաթնակէտին: Ան իր դէմքը երիտասարդ մարզիկներուն դարձնելով դարձեալ յիշեցուց, որ անոնք հայ ըլլալու պարտաւորութիւնը ունին, որովհետեւ հայ ժողովուրդին կը պատկանին:

«Խոստացէ՛ք, յանուն հայութեան եւ յանուն Հ.Մ.Ը.Մ-ի, որ յաջորդ սերունդը նոյն ճամբայէն պիտի քայլէ», շեշտեց Առաջնորդը: Ան խրախուսեց համահայրական մարզախաղերու մասնակից մարզիկները եւ աղօթքով փակեց իր խօսքը:

Սրբազան Հօր խօսքէն ետք, ներկայ մարզիկները, սկստուտներն ու համակիրները բաժնուեցան՝ Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով վերանորոգուած, մաղթելով որ յառաջիկայ տարի մեծ շուքով եւ նոյն աշխուժութեամբ կը մասնակցին Նաւասարդեան 28-րդ մարզախաղերուն Ուաշինկթընի մէջ եւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան հարիւրամեակը կը տօնակատարեն՝ շարունակելով իրենց վսեմ առաքելութիւնը եւ նուաճելով նորանոր յաջողութիւններ՝ ի նպաստ հայ ազգի յաւերժացման:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ 30-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Թղթակից  
ՈՒՄՇԻՆԿԹԸՆ

**Հ**.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Մ. Նահանգներու սկաուտական շրջանային 30-րդ ընդհանուր բանակումը տեղի ունեցաւ Մերիլենտի «Camp Round Meadow» բանակավայրին մէջ, 18-23 Օգոստոս 2017-ին, նախաձեռնութեամբ Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ Շրջանային Սկաուտական Խորհուրդին եւ հիւրընկալութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Ուաշինկթընի մասնաճիւղին:

Բանակումին ներկայ էին Շրջանային Վարչութեան անդամ քոյր էլիզապէթ Դրամկոչեան, Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամներէն եղբ. Սմբատ Դրամկոչեան եւ Շողիկ Աբգարեան, Շրջանային Խմբակային ղեկավար Թամար Սամուէլեան: Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաչեան յաճախակի ձեռնով այցելեց բանակավայր:

Բանակումին իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.Ի Նիւ Ճրրզիի, Նիւ Եորքի, Շիքակոյի, Պոսթընի, Տիթթըրոյթի, Ուաշինկթընի, Փրովիտընսի, Ֆիլատելֆոյ մասնաճիւղերէն եւ Շարլոթի միաւորէն 148 սկաուտներ՝ 13

արծուիկներ, 9 գայլիկներ, 47 արենոյշներ, 57 արիներ եւ պատասխանատուներ:

Շրջանային Սկաուտական Խորհուրդի եւ բանակումի խմբակային կազմի հսկողութեան տակ, բանակումին յայտագիրը ընթացաւ սկաուտական հաճելի մթնոլորտով: Ուաշինկթընի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի եւ ծնողական յանձնախումբի նախապատրաստական աշխատանքներուն եւ չորս օրուան սրտբաց հիւրընկալութեան շնորհիւ, սկաուտները վայելեցին համեղ ճաշեր:

Բանակավայրին ընդհանուր դասաւորումները կատարելէ ետք, բանակումին պաշտօնական բացումը կատարեցաւ մեծ խանդավառութեամբ եւ դրօշակի հանդիսաւոր արարողութեամբ: Շրջանային Սկաուտական Խորհուրդի ատենապետ եղբ. Սմբատ Դրամկոչեան բարի գալուստ մաղթեց բոլորին եւ բանակումի խմբակային պաշտօնը յանձնեց Շրջանային Խմբակային ղեկավար Թամար Սամուէլեանին:

Բանակումին խմբակային կազմը բաղկացաւ 25 աստիճանաւորներէ, որոնք ստանձնեցին հետեւեալ պարտականութիւնները:-

Բանակումի Ընդհանուր Խմբակային քոյր Թամար Սամուէլեան, Ընդհանուր Փոխ Խմբակային ղեկավար Մարի Աբ-



գարեան, Ընդհանուր Փոխ Խմբակային եղբ. Սարգիս Դրամկոչեան, Ընդհանուր Հերթապահներ՝ եղբ. Արա Մարկոսեան քոյր եւ Լենա Մինասեան:

Արիներու խմբակային կազմին մաս կազմեցին Խմբակային եղբ. Կարօ Ճարեան, Փոխ Խմբակային՝ եղբ. Գէորգ Աբգարեան, Վարիչ-Առաջնորդներ՝ եղբայրներ Մասիս Մարտիրոսեան եւ Սամուէլ Սամուէլեան:

Արենոյշներու խմբակային կազմին մաս կազմեցին Խմբակային ղեկավար Այտա Պարսումեան, Փոխ Խմբակային ղեկավար Յոլիմէ Գարաբէջեան, Վարիչ-Առաջնորդներ՝ քոյրեր Անահիտ Քէշիշեան եւ Մարի Պազարպաշեան:

Գայլիկներու խմբակային կազմը բաղկացաւ հետեւեալներէ՝ Աքելլա եղբ. Ճորճ Տօնոյեան, Պալու՝ եղբ. Փիլիբեր Պաղտատեան, Պաղիրա՝ եղբ. Փօլ Մինասեան:

Արծուիկներու խմբակային կազմը բաղկացաւ հետեւեալներէ՝ Աքելլա քոյր Անոյշ Մինասեան, Պալու՝ քոյր Նայիրի Գաբրիէլեան, Պաղիրա՝ քոյր Թային Տօնոյեան:

Բանակումին գործադիր մարմինին





մաս կազմեցին պահակապետներ քոյր Նինա Ոսպիկեան եւ եղբ. Սեւակ Սիւմպիւլեան, խարուկահանդէսի պատասխանատուներ՝ քոյրեր Մեղրի Տէր Վարդանեան եւ Սոֆիա Զաքարեան, գոյքապահներ՝ քոյրեր Արին Քալանթարի եւ Քրիսթին Արապեան: Բանակումի հիւանդապահուհին էր քոյր Սեւան Մարկոսեան, ձեռագլին աշխատանքներու պատասխանատուն՝ քոյր Մարալ Քէշիշեան:

Սկսածները չորս օրուան ընթացքին վայելեցին բնութիւնը, ծառաստանով շրջապատուած բանակավայրը: Բանակումի ճոխ յայտագիրին մաս կազմեց քայլարշաւ մը դէպի մօտակայ բանակավայրը, ուր սկսածները լսեցին «Park Police»-ի կողմէ պատրաստուած հակիրճ գեկոյց մը՝ արեւու խաւարումի մասին: Յատուկ սարքերով անոնք դիտեցին մայր բնութեան հագուադէպ այս երեւոյթը: Հետաքրքրական էր նաեւ լսել բնիկ ամերիկացիներու պատմութիւնը՝ արեւու խաւարումի մասին:

Բանակավայրը օժտուած էր գբաղումի եւ օգտակար ժամանցի զանազան

միջոցներով, զորս սկսածները գործածեցին համաձայն յայտագիրին: Անշուշտ, բանակումին ամէնօրեայ յայտագիրին մաս կազմեցին դրօշակի արարողութիւն, մարզանք, երգ, ձեռագլին աշխատանք, ընդհանուր զարգացման մրցում, սկսածական զանազան խաղեր, բանակավայրի մաքրութիւն եւ խարուկահանդէս: Այս աշխատանքներու կողքին, տեղի ունեցան դաստիարակչական հետեւեալ դասախօսութիւնները.-

● Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական կառուցը- դասախօս՝ Գէորգ Թաթարեան: Ան խօսեցաւ միութեան կազմակերպական կառուցի ժողովներուն, մարմիններուն եւ անոնց միջեւ գոյութիւն ունեցող կանոնադրային յարաբերութիւններուն մասին:

● Հայ Դատը- դասախօս՝ Մ. Նահանգներու Հայ Դատի յանձնախումբի հարդրակցութեան վարիչ՝ Էլիզապէթ Զուլճեան: Ան խօսեցաւ Մ. Նահանգներու Հայ Դատի յանձնախումբի զանազան նախաձեռնութիւններուն մասին եւ բացատրեց, թէ ինչպէ՞ս սկսածները կրնան մասնակից դառնալ ազգանուէր

այս աշխատանքին: Զուլճեան քաջալերեց սկսածները, որպէսզի անոնք հայութեան դասախօսները դառնան ոչ-հայ զանգուածներուն մօտ, անոնց տեղեկացնելով եւ ուսուցանելով հայ ժողովուրդի պատմութիւնը, մշակոյթը եւ արդար դատը:

● Արցախի պատմութիւն եւ ներկայ իրավիճակ- դասախօս՝ Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի անդամ Յովսէփ Աւագեան: Անոր ընկերացաւ Մ. Նահանգներու մօտ Արցախի Հանրապետութեան մնայուն ներկայացուցիչ Ռոպէրթ Աւետիսեան: Աւետիսեանի ներկայութիւնը հաճելի անակնկալ մը եղաւ բանակողներուն համար:

Աւագեան խօսեցաւ Արցախի պատմութեան կարեւոր հանգրուաններուն եւ քաղաքական, տնտեսական եւ ընկերային ներկայ իրավիճակին մասին: Ան անդրադարձաւ հայրենիք հաստատուելու կարեւորութեան եւ ըսաւ. «Հայաստանը եւ Արցախը ձեր հայրենիքն են, դուք միշտ պիտի ունենաք հայրենիք, ուր կրնաք հաստատուիլ»: Աւետիսեան, իր կարգին, խօսեցաւ Արցախեան տագ-



նապին մասին եւ ընդգծեց, որ «առանց Արցախի չկայ Հայաստան, առանց Հայաստանի չկայ Սփիւռք»:

● Կրօնական դաստիարակութիւն-դասախօս՝ Ուաշինկթընի Ս. Խաչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Սարգիս Քհնյ-Ազթաւուզեան: Քահանայ հայրը խօսեցաւ քրիստոնէական կրօնքի հիմերուն մասին եւ շեշտեց քրիստոնէական դաստիարակութեան դերը՝ մեր ազգային դիմագիծի պահպանման մէջ:

● Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաշեան փառըր փոյնթի միջոցով ներկայացուց հետեւեալները:-

Ա) Հ.Մ.Ը.Մ.ի Պատմութիւն եւ հիմնադիրներ:

Բ) Հ.Մ.Ը.Մ.ը Սփիւռքի եւ Արեւելեան Մ. Նահանգներու մէջ:

Գ) Հ.Մ.Ը.Մ.ի վերընձիւղումը Հայաստանի մէջ, 1989-ին:

Դ) Հ.Մ.Ը.Մ.ի անդամներու, շրջաններու եւ մասնաճիւղերու ներկայ պատկերը:

Ե) Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութիւնը:

Ձ) Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակ:

Ի) Սկաուտական կանոնագրային կէտեր:

Լ) Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ ընդհանուր բանակումի մասին տեղեկութիւններ եւ մասնակցութեան պայմաններ:

Բանակումին ընթացքին, խմբապետական կազմին կողմէ ներկայացուցան սկաուտական մասնագիտական կարգ մը դասախօսութիւններ, ինչպէս՝ դրօշակի արարողութիւն, պահակութիւն, սկաուտական կապեր, խարուկահանդէս, գիշերային յարձակումներ, նախնական դարմանումներ եւ այլն:

Բանակումին փակումէն երկու օր առաջ, բանակավայրը բաց հուշակուցեալ ծնողներու դիմաց: 60 ծնողներ փութացին ներկայ գտնուելու փակման խարուկահանդէսին: Այս առիթով տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն: Սկաուտական շարքերը, ամբողջական տարագով շարուած, բանակումի խմբապետական կազմին, Քահանայ Հօր, Շրջանային Սկաուտական Խորհուրդի, Շրջանային Վարչութեան եւ Ուաշինկթընի վարչութեան ներկայացուցիչներուն առջեւ կատարեցին դրօշակի արարողութիւն:

Այնուհետեւ, խօսքեր արտասանեցին բանակումի Ընդհանուր Խմբապետուհի քոյր Թամար Սամուէլեան, Շրջանային Սկաուտական Խորհուրդի ատենապետ եղբ. Սմբատ Դրամկոչեան, Ուաշինկթընի վարչութեան ներկայացուցիչ եղբ. Յովիկ Աբգարեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաշեան եւ Ուաշինկթընի Ս. Խաչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Սարգիս Քհնյ-Ազթաւուզեան:

Խօսք առնողները բարձր գնահատեցին հիւրընկալ Ուաշինկթընի մասնաճիւղին եւ բանակումի խմբապետական կազմին աշխատանքները՝ բանակումին յաջողութեան համար, ապա անոնք խօսք ուղղեցին ծնողներուն, որպէսզի թիկունք կանգնին Հ.Մ.Ը.Մ.ին, անդամակցին եւ բարի օրինակներ դառնան ծառայելու Հ.Մ.Ը.Մ.ին, որովհետեւ այս ձեւով անոնք ծառայած պիտի ըլլան ազգին: Անոնք նաեւ յիշեցին Հ.Մ.Ը.Մ.ի մօտաւորաւ 100-ամեակը եւ սկաուտներէն պահանջեցին ըլլալ հպարտ, քանի անդամ են այս մեծ կազմակերպութեան: Անոնք շեշտեցին, որ սկաուտները պէտք է ըլլան իրենց պարտականութեան դիտակից՝ 100-ամեայ այս միութեան երթը շարունակելու եւ յաղթանակներու ջահը վառ պահելու համար:





Հ.Մ.Ը.Մ-ի Ուաշինկթրն մասնաճյուղի ծնողական յանձնախումբին կողմէ պատրաստուած համադամ եւ առատ ճաշերու սպասարկումէն ետք, չափազանց խանդավառ մթնոլորտի մէջ ներկայացուեցաւ խարուկահանդէսին յայտագիրը: Գայլիկներ, արծուիկներ, արիններ եւ արենոյճներ յաջորդաբար ներկայացուցին մշակութային ճոխ յայտագիր մը: Յատկանշական էր խարուկահանդէսին բացումը, երբ կարգ մը արի-արենոյճներ, իրենց ձեռքին կտրօններ, մօտեցան հանդիսատեսներուն եւ կարդացին հայ ազգին համար իրենց կեանքը նուիրաբերած 12 Ֆետայիներու եւ Արցախեան ազատամարտիկներու կենսագրութիւններ, ապա անոնք կըտ-

րօնները մէկ առ մէկ գետեղեցին բեմի պատին վրայ, կազմելով Հայաստանի եւ Արցախի քարտէսը: Ազգաշունչ այս կենդանի պատկերը փակուեցաւ «Քոչարի» պարով: Բանակումը իր եզրափակումին հասաւ բարձր գնահատականով: Վերջին օրը սկսուեցին խանդավառուեցան զանազան խաղերով, գուարճալի մրցումներով եւ ջրային փուչիկներով: Գիշերը, բոլորը հաւաքուեցան մեծ խարոյկին շուրջ, կատարելով սկսուտական կանչեր, կատակներ, ազգագրական եւ յեղափոխական երգեր: Նախքան բանակումին փակումը տեղի ունեցաւ երդման արարողութիւն, որուն ընթացքին շրջանի նորաստեղծ

Շարլոթ միաւորէն 5 սկսուտներ ստացան իրենց փողկապները: Արարողութեան աւարտին, 21 սկսուտներ, համապատասխան քննութիւնները անցընելէ ետք, ստացան Ա. Կարգի վկայագիր: Սկսուտական 30-րդ Շրջանային ընդհանուր բանակումին պաշտօնական փակումը տեղի ունեցաւ 23 Օգոստոսի առաւօտեան: Դրօշակի արարողութենէն ետք, բանակումին ամբողջ կազմը, ձեռք-ձեռքի բռնած, շրջանակ մը կազմեց ու երգեց հրափեշի երգը: Բանակողները բանակավայրէն մեկնեցան չափազանց գոհունակ տրամադրութիւններով, յաջորդ շրջանային սկսուտական բանակումին դարձեալ հանդիպելու ակնկալութեամբ:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԾՐՁԱՆԻ 41-ՐԳ ԾՐՁԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

## Թղթակից ՆԻՒ ԵԼՐԶԻ

**Հ**ՄԸՄ-ի Արեւելեան Մ. նահանգներու 41-րդ Ծրջանային Ներկայացուցչական Ժողովը տեղի ունեցաւ 3-5 Նոյեմբերին, հիւրընկալութեամբ՝ ՀՄԸՄ-ի Նիւ ձըրզի մասնաճիւղին: Ժողովին մասնակցեցան շրջանի տասը մասնաճիւղերէն (Ալպընի, Նիւ Եորք, Նիւ ձըրզի, Շիքսօ, Տիթրոյթ, Ուաշինկթըն, Պոսթըն, Փրովիտընս, Ֆիլատելֆիա, Ֆլորիտա) եւ երկու միաւորներէն (Շարլոթ, Մերիմէք Հովիտ) լիազօր ներկայացուցիչներ: Ներկայ գտնուեցան նաեւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբ. Հրաչ Մեսրոպեան եւ Արեւելեան Մ. նահանգներու Ծրջանային Վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբ. Վահէ Թանաշեան: Խորհրդակ-

ցական ձայնով մասնակցողներու շարքին ներկայ էին ՀՄԸՄ-ի Արեւելեան Մ. նահանգներու Ծրջանային Վարչութեան մնացեալ անդամները, Ծրջանային մարզական յանձնախումբի եւ ըՄԿառուտական Խորհուրդի ներկայացուցիչները, ինչպէս նաեւ Ծրջանային Վարչութեան կողմէ խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ՝ եղբայրներ Օհան Օհանեան եւ Վարդգէս Վարդանեան: Ժողովին հիւրաբար մասնակցեցան ՀՄԸՄ. Գանատայի Ծրջանային Վարչութեան ատենապետուհի քոյր Լիոնի Սարմազեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի, ՀՕՄ-ի եւ Հ.Ե.Դ-ի Ծրջանային Վարչութիւններու ներկայացուցիչները:

**ԲԱՑՈՒՄԸ**  
Ծրջանային Ներկայացուցչական Ժողովին բացումը կատարուեցաւ Սառայ Նիւ ձըրզիի «Շերիթոն» պան-

դոկին մէջ, 3 Նոյեմբերի երեկոյեան: «Յառաջ նահատակ» քայլերգի կատարումէն եւ Ծրջանային Վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբ. Վահէ Թանաշեանի բարի գալուստի խօսքէն ետք, Նիւ ձըրզիի Սրբոց Վարդանանց Եկեղեցոյ հովիւ Յովնան Քհնյ. Պողոսեան աղօթքով օրհնեց ժողովը եւ իր պատգամը փոխանցեց: Ապա, խօսքեր արտասանեցին ընթացաւարտ Ծրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաշեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ժանօ Աւետիսեան, ՀՄԸՄ-ի Գանատայի Ծրջանային Վարչութեան ատենապետուհի քոյր Լիոնի Սարմազեան, ՀՕՄ-ի Ծրջանային Վարչութեան ներկայացուցիչ Մէրի էն Պանճոքիեան եւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Հրաչ Մեսրոպեան: Խօսք արտասանողները բարձր գնահատեցին ՀՄԸՄ-ի կարեւոր դերը հայ մատղաշ սերունդե-

րու դաստիարակութեան մէջ եւ շեշտեցին համագործակցութեան կարեւորութիւնը, լաւապէս ծառայելու ազգային մեր վսեմ նպատակներուն:

**ԴԻԻԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ**

Ժողովը առաջին հերթին ընտրեց իր առժամեայ ղեկանը եւ լիազօրագիրներու ստուգման յանձնախումբը: Այնուհետեւ, ժողովի օրինականութիւնը ստուգելէ եւ հաստատելէ ետք ընտրուեցաւ մնայուն ղեկան, որ բաղկացաւ հետեւեալներէն՝ ատենապետներ եղբայրներ Յակոբ Խաչատուրեան եւ Պետիկ Տէր Վարդանեան, ատենադպիրներ քոյրեր Մարալ Խաչատուրեան, Մանուշակ Գրիգորեան եւ եղբ. Շանթ Ժամկոչեան: Ժողովը ընտրեց նաեւ բանաձեւի, արխիւային, պիւտճէի եւ քուէախոյզ յանձնախումբերը:

Ժողովին յաջորդ օրակարգն էր լսել տասը մասնաճիւղերու եւ երկու միաւորներու միացեալ եւ ամփոփ տեղեկագիրները: Կատարուեցան լուսաբանական հարցումներ, որոնց պատասխանեցին վարչութիւններու ներկայացուցիչները:



**ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ**

Երկրորդ օրը ժողովը շարունակեց իր աշխատանքները՝ լսելով ընթացաւարտ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը: Լուսաբանական հարցումներուն յաջորդեցին ժողովականներուն ըստ հովանի արտայայտութիւնները:

Տեղեկագիրներէն պարզուեցաւ, որ անցնող երկամեակին շրջանը ունեցած է

բեղուն գործունէութիւն: Ներկայիս Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանը ունի 1000-է աւելի անդամներ, մօտ 400 սկաուտներ եւ 500 մարզիկներ, 75-է աւելի մարզական երկսեռ խումբեր՝ Ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի, լողի եւ ակրիթի, ծիւ, փոքր, կրտսեր, երէց եւ վեթերան դասակարգերով:

Անցնող երկամեակին, շրջանը կազմակերպած է հետեւեալները:-

- Մասնաճիւղերու վարչական կազմերու երկու խորհրդաժողովներ, Մարտ 2016- ին «Google Hangout»-ի միջոցով, եւ Մարտ 2017-ին՝ Փրովիտէնսի մէջ:
- Նաւասարդեան 26-րդ խաղեր, Յուլիս 2016-ին, Շիքակոյի մէջ: Խաղերուն մասնակցած են 250 մարզիկներ-մարզիկուհիներ:
- Նաւասարդեան 27-րդ խաղեր, Յուլիս 2017-ին, Փրովիտէնսի մէջ: Խաղերուն մասնակցած են 450 մարզիկներ-մարզիկուհիներ:
- 10-14 Օգոստոս 2016-ին, Շրջանային սկաուտական 29-րդ բանակում Պոսթընի մէջ: Բանակումին մասնակցեցան 100 ըսկաուտներ:
- 18-23 Օգոստոս 2017-ին, Շրջանային սկաուտական 30-րդ





## **Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ՄԻԱԻՈՐ՝ ՄԵԾՆ ՄԵՐԻՄԱՔ ՀՈՎԻՏԻ ՄԷՋ**

**Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը կը քննարկեցանէ, որ Մեծն Մերիմաքի մէջ հիմնուած է Հ.Մ.Ը.Մ.ի միաւոր մը, որուն աշխատակիցներուն ղեկավարումը վարահուած է եռանդամ պատասխանատու մարմինի մը, բաղկացած հետեւեալ եղբայրներէ՝ Կրեկորի Միւնսեան, Սիլվիոյ Գասապեան եւ Մարիո Փիթրոյ:**

**Միաւորին հանդիսատար հիմնադրութիւնը կարարուած է 6 Մայիս 2017-ին, Նորթ Էնգլիսի Ս. Գրիգոր եկեղեցոյ սրահին մէջ, ուր Շրջանային Վարչութեան կողմէ միաւորի պատասխանատու մարմինին յանձնուած է Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը, Ծրագիր-Կանոնագիրը, հիմնադրութեան եւ պատասխանատու մարմինի նշանակման նամակը:**

բանակում Ուաշինկթընի մէջ: Բանակումին մասնակցեցան 145 սկաուտներ:

● Յատկանշական էր Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ միաւորի ստեղծման երեւոյթը: Շրջանային Վարչութիւնը 17 Ապրիլ 2017 թուակիր իր թիւ 79 նամակով հիմնեց Մեծն Մերիմաք Հովիտի միաւորը Կիրակի, 7 Մայիս 2017-ին, Նորթ Էնգլիսի Ս. Գրիգոր եկեղեցոյ սրահին մէջ, ուր տեղի ունեցաւ նորաստեղծ միաւորին հանդիսատար հիմնադրութիւնը, յանձնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը, Ծրագիր-Կանոնագիրը, հիմնադրութեան եւ վարիչ մարմին նշանակման նամակը:

● 20-29 Յունիս 2017-ին շրջանը մասնակցեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն, Երեւանի մէջ: Պատւիրակութիւնը բաղկացաւ 77 մարզիկներէ, մարզիչներէ եւ պատասխանատուներէ:

● Արհեստագիտական միջոցները լա-

ւապէս օգտագործուած էին դիւրացներու շրջանին աշխատանքները: Իբրեւ օրինակ կարելի է նշել «Google»-ը եւ Նաւասարդեան խաղերուն մասնակցելու, համացանցի միջոցով մարզիկներու դիմումները ներկայացնելու արձանագրութիւնը:

Տեղեկագիրներու ներկայացումէն ետք, ժողովը շարունակեց իր աշխատանքները, մշակելով յառաջիկայ շրջանի մարզական եւ սկաուտական գործունէութեան ծրագիրները: Ճշդուեցաւ, որ 2018-ի Նաւասարդեան խաղերը տեղի պիտի ունենան Ուաշինկթընի մէջ: 2018-ին Շրջանային բանակում տեղի պիտի չունենայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումին պատճառով: Առաջարկներ եւ թելադրանքներ կատարուեցան բարելաւելու համար վերոնշեալ գործունէութիւնները եւ ընդառաջելու համար նոր սերունդի պահանջներուն:

Շրջանային ներկայացուցչական ժողովի ուշադրութեան արժանացան նաեւ 2018-ի ամրան Հայաստանի մէջ տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումը, Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը եւ միութեան ռազմավարական ծրագիրը:

Նկատելի եւ ուրախ երեւոյթ էր ժողովի մասնակիցներու շարքին մեծ թիւով երիտասարդ եւ երկար տարիներու վաստակ ունեցող Հ.Մ.Ը.Մ.ականներու ներկայութիւնը: Հազիւ քսան տարիքը բոլորած անդամներու կողքին կային 55 երկար տարիներ ծառայած Հ.Մ.Ը.Մ.ականներ: Այս երեւոյթը յաւելեալ յոյս կը ներշնչէր միութեան յարատեւման ու հզօրացման եւ լաւապէս կ'արտայայտէր միութեան նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր»:

### **ՆՈՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ**

41-րդ Շրջանային ներկայացուցչական ժողովի աւարտին ընտրուեցաւ նոր Շրջանային Վարչութիւն մը, բաղկացած հետեւեալ անդամներէն.- Արամ Գայէրեան (Պոսթըն), Յարութ Խաչատուրեան (Նիւ Եորք), Շանթ Ժամկոչեան (Տիթրոյթ), Սիմոն Պարտիզպանեան (Նիւ Եորք), Փօլ Քուրթուզեան (Շիքագո), Վիլիամ Խաչատուրեան (Պոսթըն) եւ Կարօ Թաշեան (Փրովիտընս):

Ժողովի փակման, դիւանը շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկայացուցիչներուն, հիւրերուն եւ յանձնախումբերուն, հիւրընկալ Հ.Մ.Ը.Մ.ի Նիւ Ճրքի մասնաճիւղին, ընթացաւարտ եւ նորընտիր Շրջանային Վարչութիւններուն: Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետուհի քոյր Լիոնի Սարմազեան ներկայացուց յուշանուէր մը նորընտիր Շրջանային Վարչութեան: Ապա, Հ.Յ.Գ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ժանօ Աւետիսեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեանի խօսքերով ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերով:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԻ 40-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Թղթակից  
ՆԻԻ ԸԸՐՁԻ

Շաբաթ, 5 Նոյեմբերի երեկոյան, 41-րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովի աւարտէն ժամեր ետք, Մառաշ Նիւ Ճըրզիի «Շերիթոն» պանդոկին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի հիմնադրութեան 40-ամեակի ճաշկերոյթ-պարահանդէսը՝ հովանաւորութեամբ Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Զորոյեանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան, պատուոյ նախագահութեամբ Օհան եւ Ռիթա Օհանեաններու, ներկայութեամբ բազմաթիւ հրաւիրեալներու եւ աւելի քան 900 հայորդիներու:

Օրուան յայտագիրին պաշտօնական բաժինով, հանդիսավար քոյր Թամար Սամուէլեան (Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային սկաուտական խմբապետուհի) երեկոն բացաւ բարի գալուստ մաղթելով բոլոր ներկաներուն: Նիւ Ճըրզիի սկաուտական կազմը դրօշակներով բացաւ օրուան յայտագիրը: Մեղրի Տէր Վարդանեան մեներգեց Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգները: Ապա, խօսք արտասանեցին օրուան նախագահ Օհան Օհանեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաշեան, Հ.Յ.Գ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ժանօ Աւետիսեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան եւ Օշական Արք. Զորոյեան, գնահատելով Հ.Մ.Ը.Մ.Ի առաքելութիւնը եւ շնորհակտութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի հիմնադրութեան 40-ամեակը: Անոնք իրենց խօսքերուն մէջ շեշտեցին, որ մեր բոլորին պարտականութիւնն է պայքարիլ անտարբերութեան դէմ, տէր կանգնիլ մեր ազգային իրաւունքներուն, Հ.Մ.Ը.Մ.Ի-ին օժանդակել ամէն ձեւով, մանաւանդ պահելով մեր զաւակները անոր շարքերուն մէջ, որպէսզի անոնք դառնան արժանաւոր պաշտպաններ մեր կրօնքին, մշակոյթին ու հայրենիքին:

Այս առթիւ Շրջանային Վարչութիւնը «Մառաշութեան»



- շքանշանով պատուեց հետեւեալ գործօն քոյր-եղբայրները-Քոյր Ռիթա Օհանեան, Ալպընիի մասնաճիւղ:
- Եղբ. Սարգիս Կիւլէսէրեան, Ալպընիի մասնաճիւղ:
- Եղբ. Ռազմիկ Փանոսեան, Պոսթընի մասնաճիւղ:
- Եղբ. Լեւոն Շամբեան, Նիւ Եորքի մասնաճիւղ:
- Եղբ. Կարօ Անաստասեան, Նիւ Եորքի մասնաճիւղ:
- Եղբ. Յովհաննէս Մաշֆէճեան, Նիւ Եորքի մասնաճիւղ:
- Եղբ. Վահրամ Մինասեան, Նիւ Եորքի մասնաճիւղ:
- Եղբ. Կարպիս Մուրատեան, Ուաշինկթընի մասնաճիւղ:
- Եղբ. Ծան Ծերիքեան, Ուաշինկթընի մասնաճիւղ:

Յետ մահու «Մառաշութեան» շքանշան ստացան եղբայրներ Ժիրայր Յովակիմեան Ֆիլատելֆիոյ մասնաճիւղէն, Կարօ Դարբինեան Փրովիտընսի մասնաճիւղէն եւ Մարք Ալաշայեան Նիւ Ճըրջիի մասնաճիւղէն:

Յայտագիրի պաշտօնական բաժինի աւարտին, ներկաները վայելեցին երգիչ Արմէշիկը, որուն հետ խանդավառ պահեր ապրեցան մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր: Ներկաները սրահէն մեկնեցան ուրախ տրամադրութեամբ, Հ.Մ.Ը.Մ.Ի վսեմ նշանաբանին ոգիով տոգորուած, անսպառ եռանդով ու կորովով շարունակելու համար Հ.Մ.Ը.Մ.Ի յաղթական եւ պանծալի երթը:



# ՀԱՒԴԻ ՄԷՋ ՄԵԿՆԱՐԿԸ ԿԱՏԱՐՈՒԹԵՑԱԲ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒՄ



## Ժիրայր Կարապետեան ՀԱՒԴԻ

**Հ**ովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի Սուրբոյ կեդրոնական յանձնախումբին, Շաբաթ, 25 Նոյեմբեր 2017-ի երեկոյեան ժամը 7-ին, «Արամ

Մանուկեան Ժողովրդային Տան» «Լ.Շանթ» սրահին մէջ կազմակերպուած հանդիսութեամբ մը մեկնարկը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի Սուրբոյ ձեռնարկներուն:

Ձեռնարկին ներկայ եղան Սուրբոյ խորհրդարանի անդամ Ժիրայր Ռէխեան, Ազգ. Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան անդամներ, հայկազայ միութիւններու ներկայացուցիչներ, երէց եւ երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Օրուան բեմավար եղբ. Խաթակ Տիլպէրեան իր բացման խօսքով ըսաւ. «Հայ

ժողովուրդի կոտտանքին, տառապանքին եւ աւերակներուն ընդմէջէն ծնունդ առաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը: Դար մը ամբողջ ան կռանց մեր անխորտակելի կամքը, կերտեց մարմինն ու դնդերը մեր անխոցելի, կամրջեց իր զաւակները ցանուցիր, ովկիաններէն ալ անդին, ու սերունդներ միացան իր շարքերուն»:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.Ի շեփորախումբին ընկերակցութեամբ, 100-ամեակի դրօշը բարձրացուցած՝ սրահ մուտք գործեցին Հ.Մ.Ը.Մ.Ի Հայկալի մասնաճիւղի խմբապետն ու խմբապետուհին: Մաշտոց Քհնյ. Արապաթեան օրհնեց դրօշը, որմէ ետք ձեռնարկը սկսաւ Սուրբոյ եւ Հայաստանի քայլերգներով:

Առաջին խօսքը արտասանեց 100-ամեակի Սուրբոյ յանձնախումբի ատենապետ եղբ. Կարպիս Թովմասեան: Ան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ը մտաւ հայ օճախներէն ներս եւ հայութեան համար եղաւ ակումբ, դպրոց, եկեղեցի եւ հայրենիք: Նաւասարդեան իր խաղերով ան հպարտութեամբ լեցուց հայ ժողովուրդին սիրտը: Հ.Մ.Ը.Մ.ը յաղթեց եւ իր յաղթանակը նուիրեց հայ ժողովուրդին: Հայ ժողովուրդը վստահեցաւ Հ.Մ.Ը.Մ.ին եւ իր զաւակները անդամագրեց անոր: Հ.Մ.Ը.Մ.ը իր «Բարձրացի՛ր»





բարձրացուր» նշանաբանով երբեք չզլացաւ ծառայել հայ ժողովուրդին: Ան դարձաւ բոլորին սիրելին, ծնունդ առաւ Պոլիսէն ու մոտաք գործեց մայր հայրենիք: Ծլաւ ու ծաղկեցաւ Սփիւռքի մէջ ու դարձաւ հաստաբետ կաղնի: Այսօր կը տեսնենք մեր շքանշանակիր քոյրերն ու եղբայրները, որոնք երկար տարիներ ծառայած են այս միութեան եւ եկած են միութեան դրօշը փոխանցելու նոր սերունդին»:

Գեղարուեստական յայտագիրի առաջին մասով, եղբ. Արամ Խաչատուրեան երգեց Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին նուիրուած քայլերգը, որ առաջին անգամ ըլլալով հնչեց Սուրբոյ մէջ:

100-ամեակի քայլերգէն ետք ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի պատմութիւնն ու ներկան ներկայացնող պատմավաւերագրական տեսերիզ մը, զոր պատրաստած էր մամուլի յանձնախումբը:

Քոյր Վեհան Պարսումեան տպաւո-

րիչ առողանութեամբ ասմունքեց «Շքանշան Հ.Մ.Ը.Մ-ի» քերթուածը: Ապա, շքանշանակիր երէց եղբայրներ՝ Յակոբ Էլէյճեան եւ Յարութ Պարսամեան Հ.Մ.Ը.Մ-ի գոյգ դրօշները փոխանցեցին նոր սերունդի սկաւառներուն եւ մարզիկներուն: Նոր սերունդի ներկայացուցիչները խոստացան բարձր պահել միութեան դրօշը:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շքանային Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան: Ան ըսաւ. «Մեր սերունդին բախտ վիճակուեցաւ ստանձնել այս պատասխանատու եւ պատմական պահուն խորութիւնը եւ զայն արժեւորելու յանձնառութիւնը: Հ.Մ.Ը.Մ-ի պատմակերտ հիմնադիրները իրենց հաստատ հաւատքով եւ հայավայել վճռակամութեամբ հիմը դրին հայ պատանիին ու երիտասարդին հոգին, միտքը եւ մարմինը կերտող մեծ դպրոցին եւ յղացան մեր նշա-

նաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր»ը, որ կը մարմնաւորէ Հ.Մ.Ը.Մ-ականին ամբողջական հաւատարմութիւնը: Հ.Մ.Ը.Մ-ի «Հ»-ն հայրենիքին ու հայութեան ցուցանիչն է՝ հայրենի հողին վրայ կամ Սփիւռքի տարածքին, 108 մասնաճիւղերով, աշխարհով մէկ տարածուած հայութեան խորհրդանիշն է ան: «Մ»-ն շէտն է, որ մարզական ոգիով եւ առողջ մարմինով կերտուած սերունդն է երաշխաւորը Հ.Մ.Ը.Մ-ի նպատակներու իրականացման: «Ը»-ը Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ կազմակերպութիւն մը ըլլալու լաւագոյն փաստն ու ցուցանիչն է: Հ.Մ.Ը.Մ-ը երկրագունդի հինգ ցամաքամասերուն վրայ սփռուած իր 25 հազար անդամներով յիշաւի համահայկական հսկայ կազմակերպութիւն մըն է: Իսկ «Մ»-ը արգէն իր գոյատեւման շարունակականութիւնն է եւ դէպի ապագայ խոյանալու լաւագոյն երաշխիքը: 100-ամեակի սեմին, եկէ՛ք միասին



խոստանանք, որ պիտի բարձրանանք եւ բարձրացնենք ՚նոր սերունդները՝ միասնաբար, համախումբ աշխուժութեամբ հասնելու համար մեր մարդկային ու համագգային տեսլականներուն եւ նպատակներուն ամբողջական իրականացման»:

Ապա, Մաշտոց Քհնյ. Արապաթիեան հանդէս եկաւ օրհնութեան խօսքով եւ ըսաւ. «Եթէ Հ.Մ.Ը.Մ.էն վերցնենք մարգական խաղերը, կը տեսնենք որ հոն կայ ժողովուրդի մը պատմութիւնը: Եթէ վերցնենք գիտելիքները, կը տեսնենք որ հոն կայ ոգին: Մեր պապերը գաղթականութենէն ետք հաւատք եւ ազգային ոգի ներարկեցին իրերայաջորդ սերունդներու արեան եւ ժամա-





նակի ընթացքին այդ ներարկումն էր որ մարմին առաւ:

«Հ.Մ.Լ.Մ.ականը օժտուած է մաքուր, ազնիւ նկարագիրով, թող յաւէտ օրհնեալ ըլլայ Հ.Մ.Լ.Մ.ի գործունէութիւնը: Բարի երթ դէպի նոր 100-ամեակ»:

Աւարտին, պատտուի վրայ ներկայացուեցան վաստակաւոր Հ.Մ.Լ.Մ.ականներ՝ եղբայրներ Մանուկ Իսկէնտէրեանի (Հայաստան) եւ Պօղոս Պալէոզեանի բարեմաղթութիւնները: Այնուհետեւ հատուեցաւ 100-ամեակի կարկանդակը:

**ՄՏԵՐՄԻԿ ԸՆԹՐԻՔԸ**

100-ամեակի մեկնարկը նշող ձեռնարկէն ետք, Հ.Մ.Լ.Մ.ի Հալէպի մեծ ընտանիքը մտերմիկ ընթրիք մը ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի ընտանեկան պարտէզին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկսուտ. Խորհուրդին, Հալէպի վարչութեան, Սկսուտ. Խորհուրդին եւ երէց ու երիտասարդ Հ.Մ.Լ.Մ.ականներու եւ համակիրներու: Քոյր Ծովիկ Թէփիրճեան բացման խօսքով բարի գալուստ մաղթեց ներկաներուն, այնուհետեւ եղբ. Գէորգ Մալեան փոխանցեց Հալէպի մասնաճիւղի վարչութեան խօսքը:

Երեկոն ջերմացաւ եղբ. Ճորճ Գալաճեանի, Լիւսի Յովհաննէսեանի եւ Խաչիկ Աշճեանի հայկական եւ յեղափոխական երգերու կատարումով:

**ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒ ՊԱՏԳԱՄ ՓՈԽԱՆՅՈՂ ՕՐԱՅՈՅՅ ՄԸ**

Միշտ չէ, որ օրացոյցները կրնան անցնիլ իրենց սովորական դերէն անդին, դառնալու համար օրերը ցոյց փուռող հրապարակութենէ մը աւելիին ծառայող ներկայութիւն մեր փուներուն եւ գրասենեակներուն մէջ:

Սակաւաքիւ եւ այն օրացոյցները, որոնք կը հանդիսանան յուշարարը անցեալի փառաշուք նուաճումներուն, ներկայի պայծառ գործունէութեան, բայց մանաւանդ՝ ուղեցոյցը նպատակասլաց ապագային:

Ճաշակով, բծախնդրութեամբ եւ խոր հաւաքով պատրաստուած այս օրացոյցները, արուեստի հասկացողութեան մը վիճակ ըլլալով հանդերձ, պերճախօս արքայապարտիւնն են այն ոգիին, որ կարմիր թելի մը նման կ'երկարի օրացոյցին մէկ էջէն միւսը, թերթ առ թերթ:

Ոգիի մը, փեսիլքի մը եւ սրբազան զաղափարի մը ծառայող կազմակերպութիւններն ու միութիւններն են միայն, որոնք կ'ունենան խորհուրդ ու պարզամ փոխանցող օրացոյցներ, նոյնիսկ եթէ երբեմն նուազ գեղարեսիլ ըլլան անոնք՝ բաղդարած առեւտրական մեծ ընկերութիւններու գեղեցիկ, բայց անբովանդակ օրացոյցներուն:

Գաղափարապաշտ կազմակերպութիւններու եւ միութիւններու օրացոյցները միշտ ալ ունեցած են փարբեր շունչ եւ նկարագիր: Այդպէս եղած են անոնք: Բայց իրենց առանձնայարկութիւնը շեշտուած է, սրացած է յարուկ նշանակութիւն, երբ անոնց հրապարակումը զուգադիպած է յարուկ թուականի:

Տարբեր չի կրնար ըլլալ Հ.Մ.Լ.Մ.ի 100-ամեակին առիթով Սուրիոյ Շրջանային Վարչութեան գորգուրանքով եւ պատրաստուած 2018-ի օրացոյցը, որ իրաւամբ կը հանդիսանայ Սուրիոյ մեր ակումբներուն, փուներուն, գրասենեակներուն եւ գործափեղիներուն այս փարուան գեղեցիկ զարդը:





# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ՄԱՀԱՑԱԾ ՈՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

## ՍՈՒՐԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 20 ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

Ստորև անունները 20 նահատակ Հ.Մ.Ը.Մ.ականներու, որոնք իրենց ժողովուրդի պաշտպանութեան պատմէշին վրայ ինկան՝ Սուրիոյ պատերազմին ընթացքին:

- Եղբ. Բաֆֆի Տաղեան
- Եղբ. Յարութ Պալապանեան
- Եղբ. Սարգիս Գրքմայեան
- Եղբ. Յովիկ Քոթմուսեան
- Եղբ. Մասիս Խաչապուրեան
- Եղբ. Մազո Մանուկեան
- Եղբ. Վրէժ Քէշիշեան
- Եղբ. Գրիգոր Աշնագլեան
- Եղբ. Վարդան Անպրեան
- Եղբ. Անդրանիկ Քահքէճեան
- Եղբ. Կարո Ասապուրեան
- Եղբ. Յովսէփ Պչարճեան
- Եղբ. Գօգօ Գպճեան
- Եղբ. Յարութիւն Կենպրիմեան
- Եղբ. Վիզէն Ոսկերիշեան
- Եղբ. Վազգէն Ճապաղջուրեան
- Եղբ. Բաֆֆի Պչարճեան
- Եղբ. Արման Հինպոյեան
- Եղբ. Գասպար Շաթոյեան
- Եղբ. Վրէժ Ճապաղջուրեան

### Թղթակից ՀԱԼԷՊ

**Հ**.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, Կիրակի, 19 Նոյեմբեր 2017-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ միութեան հին ու նոր ննջեցեալներուն եւ Սուրիոյ պատերազմին նահատակուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն հոգիներուն համար, ներկայութեամբ տարազաւոր սկաուտներու, երէց ու երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ականներու:

Պատարագէն ետք, ներկաները համախմբուեցան Հ.Մ.Ը.Մ.ի ընտանեկան պարտէզը, ուր Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց քոյր Գարօլին Քիւրքլեան-Արոյեան: Ան նշեց, որ Նոյեմբեր ամիսը

հպարտանքի ամիս է, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան ամիսն է, հետեւաբար ան խիղճի պարտք նկատեց յարգանքի տուրք ընծայել միութեան հիմնադիրներուն եւ հին ու նոր ննջեցեալներուն հոգիներուն յիշատակին: Ապա, ան հրաւիրեց ներկաները «Բարձրացիր՝ բարձրացուր» նշանաբանով ընթանալու դէպի 100-ամեակ:

Այս առիթով, Շրջանային Վարչութեան անդամներէն եղբ. Արմէն Քէօշկէրեան յիշեց Սուրիոյ պատերազմին նահատակուած 20 Հ.Մ.Ը.Մ.ականներուն անունները (տեսնել առանձին):

Երէց եղբայր Յակոբ Էլէյճեան իր սրտի խօսքը փոխանցեց ներկաներուն՝ դէպի 100-ամեակ բարեյաջող երթ մաղթելով միութեան:

Աւարտին, Մաշտոց Քհնյ. Արապաթեան փոխանցեց իր սրտի խօսքը նշելով, որ Հ.Մ.Ը.Մ.ը լոկ մարզական խաղերու միութիւն մը չէ, այլ՝ սերունդներ կերտող, Սփիւռքի մէջ անոնց գոյութիւնը պահող եւ միութենական ծառայութիւն սորվեցնող պանծալի կազմակերպութիւն մը: Ծառայութիւն մը, որուն ականատես եղանք պատերազմի օրերուն, երբ Հ.Մ.Ը.Մ.ականներ պատնէշի վրայ գտնուելով օգնութեան ձեռք երկարեցին բոլորին:



# «ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶ» ԲԱՆԱԿՈՒՄԸ ՀԱԼԷՊԻ ՄԷՉ



Հ.Մ.Ը.Մ.ի Հայլէպի Մասնաճիւղի  
Սկաուտ. Խորհուրդ  
ՀԱԼԷՊ

**Ս**ուրբական պատերազմի առաջին քանի մը տարին բանակում կազմակերպելը անկարելի դարձաւ: Վերջին երկու տարիներուն, սակայն, դժուարութիւնները յաղթահարուեցան:

Այս տարի, Հ.Մ.Ը.Մ.ի Հայլէպի մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ. Խորհուրդին ճիգերը արդիւնաւորուեցան եւ մասնաճիւղին սկաուտական կազմը եւ գայլիկ-արծուիկ միաւորի կարմիր վոհմակ-երամը, 140 քոյր-եղբայրներով, հաւաքուեցաւ հայաշունչ եւ հրաշագեղ Քեսապի գիրկը, ուր յիշատակելի օրեր ապրեցան հողին, ջուրին, ծառին, բոսայիտին, քեսապցիին եւ իրարու հետ շփուելով: Անոնք ստեղծեցին ընկերային ջերմ մթնոլորտ եւ հարստացուցին իրենց գիտելիքները: Բանակումը կոչուեցաւ «Վահան Չերազ» եւ իւրաքանչիւր օր ունեցաւ իր թեման: Խմբակները կրեցին 20-րդ դարու սկիզբը, Պոլսոյ մէջ հիմնուած Ֆուլթպոլի խումբերու անուններ, ինչպէս՝ «Տորք», «Արաքս», «Պէրպէրեան», «Վահագն», «Շաւարշեան», «Հայ Որսորդաց», «Սանթրալ» եւ «Աթլաս»:

Բանակող քոյրերն ու եղբայրները Հայլէպի մէջ պատրաստուած դաստիարակչական իրենց ծրագիրը կեանքի կոչեցին ամենայն բժախնդրութեամբ: Անոնք մասնակցեցան սկաուտական մարզանքներու, հետախուզական արշաւներու, երգի ուսուցումներու, ունկնդրեցին ազգային, գիտական եւ սկաուտական նիւթերով դասախօսութիւններ, կազմակերպեցին հարց-պատասխանի մրցումներ, ձեռնարկին աշխատանքներ, գիշերային գործունէութիւն, ինչպէս նաեւ դաշտային եւ նստակեաց խաղեր:

Բանակումին մասնակիցները թէեւ ութ օրերու ընթացքին հեռու մնացին իրենց տնային մթնոլորտէն եւ անձնական հանդիպումներէն, սակայն հաւաքական աշխատանքով անոնք ի գործ դրին իրենց լաւագոյնը: Անոնք բարձրաձայն կանչելով ու երգելով խանդավառեցին Քեսապն ու քեսապահայտները:

Ութօրեայ բանակումին աւարտին տեղի ունեցաւ խարուկահանդէս, որուն ներկայ գտնուեցան Նարեկ Քհնյ. Ջերէնցեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ի

Հայլէպի մասնաճիւղի վարչութիւնը եւ մեծ թիւով ծնողներ ու համակիրներ: Զոյգ քայլերգներէն ետք, ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին Սուրբոյ նահատակներուն յիշատակը:

Խարուկահանդէսին հայերէն բացման խօսքով հանդէս եկաւ Հայլէպի մասնաճիւղի խմբապետ եղբ. Յովիկ Փամբալեան, իսկ արաբերէնով՝ քոյր Մարիա Սալէլ: Անոնք անդրադարձան Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ նորահաս սերունդի դաստիարակութեան մէջ ունեցած դերին: Անոնք ամփոփ կերպով ներկայացուցին նաեւ բանակումին աշխատանքները եւ հետապնդած նպատակները:

Բանակող քոյրերն ու եղբայրները ներկայացուցին գաւազանով եւ գլանով բերգածեւ մարզանքներ, արաբական եւ հայկական պարեր: Ապա, տեղի ունեցաւ Առաջնորդի, Վարիչ Առաջնորդի եւ Ա. կարգի աստիճաններու տուչութիւն: Աւարտին, Նարեկ Քհնյ. Ջերէնցեան գնահատեց մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդին եւ խմբապետական կազմին կատարած աշխատանքը եւ բարձրօրէն գնահատեց խարուկահանդէսը:

Աւանդական խարուկահանդէսը իր լրումին հասաւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգով:

## ՄԿԱՌՏԱԿԱՆ ՎԿԱՅԵԱԼ ԿԱՐԳԻ ԴԱՍԵՆԹԱՅՔ՝ ՀԱԼԷՊԻ ՄԷՉ

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային ըՄ. կաուտ. Խորհուրդն ու Խմբապետութիւնը Յունիս 2016-էն սկսեալ շեշնարիկեցին Վկայեալ Կարգի դասընթացքի, որուն Հայլէպի մասնաճիւղէն իրենց մասնակցութիւնը բերին հինգ փոխ խմբապետներ՝ քոյրեր Սեւան Ուրիշիկեան, Մարիա Սալէլ, Նարայի Թարսուեան, Թամար Կիւրոյեան եւ եղբ. Կիրո Գարամանեան: Շուրջ մէկ տարիէ ի վեր շարունակուող դասընթացքին տեսական բաժինը այժմ հասած է իր աւարտին: Ներկայիս տեղի կ'ունենայ գործնական բաժինը:



# «ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԻՆԴԼԵԱՆ» ԲԱՆԱԿՆՈՒՄ ԼԱԹԱՔԻՈՅ ՄԷՋ

## Թղթակից ԼԱԹԱՔԻԱ

**Հ**.Մ.Ը.Մ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի «Յովհաննէս Հինդլեան» բանակումը տեղի ունեցաւ Քեսապի «ՔՁԱԿ» բանակավայրին մէջ, մասնակցութեամբ 86 քոյրերու եւ եղբայրներու:



ճանաւորական կազմի կատարողութեամբ):

Խարուկահանդէսին ջերմութիւնը արտացոլաց բանակավայրի կայմին կողքը բոցավառող խարոյկէն, որուն ճարձատիւնէն խանդավառուած՝ սկառտները ներկայացուցին իրենց կանչերն ու երգերը:

Աւարտին խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի

Սկառտները մարզական, դաստիարակչական եւ սկառտական գիտելիքներով օժտուած՝ չարքաչ կեանքի փորձառութիւն ձեռք ձգեցին Քեսապի բնութեան մէջ:

Բանակումին բացումը կատարուեցաւ Սուրբիոյ եւ Հայաստանի քայլերգներով:

Բացման խօսքէն ետք ներկայացուեցաւ թատերական պատկեր մը՝ միջազգային սկառտութեան 110-ամեակին եւ Հայ սկառտութեան 105-ամեակին նուիրուած: Այնուհետեւ տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, ապա աստիճանատուչութիւն՝ գայլ-արծուիկ միաւորի միաստղ եւ երկաստղ վկայականներու, նաեւ սկառտ միաւորի Փոխ Առաջնորդ, Առաջնորդ եւ Վարիչ Առաջնորդ աստիճաններու:

Յայտագիրը ընդգրկեց չափական մարզանք, ասմունք, մարզական խաղեր, պար (գայլիկներու կատարողութեամբ), գաւազանով մարզանք, չափական մարզանք եւ պար (աստի-

խմբապետ, բանակումի պատասխանատու եղբ. Սարգիս Քէչէճեան՝ ներկայացնելով բանակումին նպատակը եւ անոր անհրաժեշտութիւնը սկառտներու կազմաւորման մէջ:

Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան, որ մեծապէս գնահատեց խմբապետական եւ աստիճանաւորական կազմերը իրենց տարած հոգատար աշխատանքին համար: Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի սեմին, ան մաղթեց, որ սկառտական բանակումները իրականանան Հայաստանի դաշտերուն վրայ:

Քեսապի հոգեւոր հովիւ Նարեկ Քհնյ. Ջերէնցեան իր սրտի խօսքը արտասանեց՝ գնահատելով բանակումին մասնակցող բոլոր սկառտները:

Խարուկահանդէսը փակուեցաւ «Պահպանիչ»ով:

## ԵՂԲ. ՄԱԳՕ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԹ ԲԱՆԱԿՆՈՒՄ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ



## Մարի Մելքոն ԳԱՄԻՇԼԻ



**Վ**եց տարուան ընդհատումէ ետք, հակառակ քաղաքին մէջ տիրող լարուած վիճակին եւ երթեւեկի դժուարութեան, Հ.Մ.Ը.Մ-ի Գամիշլիի մասնաճիւղի վարչութեան եւ Սկառտական Խորհուրդին կազմակերպութեամբ տեղի ունեցաւ եռօրեայ բանակում մը, որ նուիրուե-

ցաւ եղբ. Սագօ Մանուկեանի յիշատակին:

Բանակումը տեղի ունեցաւ Գամիշլիէն 10 քմ. հարաւ գտնուող ասորի կաթողիկէներու ուխտավայրին մէջ, մասնակցութեամբ 80 քոյր-եղբայրներու եւ 17 աստիճանաւորներու: Բանակումին ընդհ. պատասխանատուն էր քոյր Եւա Մանուկեան-Սելիմեան, օգնականը՝ քոյր Նանար Սարգիսեան:

Բանակումի ընթացքին բանակավայր այցելեց ԵՈՒՆԻՍԷՖ-ի յատուկ

յանձնախումբը, որ խաղերու սերտը-  
լած ծրագիր մը գործադրեց՝ խանդա-  
վառելով քոյր-եղբայրները: Ապա,  
յանձնախումբի անդամները դպրոցա-  
կան տետրակներ բաշխեցին բոլորին:

Բանակումին յայտագիրը ընդգր-  
կեց՝ մարզանք, նախաճաշ, դասախո-  
սութիւն, գրոյց, ճաշ, պատի թերթի  
պատրաստութիւն, ռատիոժամ, խա-  
ղեր, մրցումներ, ընթերցեալ եւ խարոյկի  
չուրջ գիշերային խրախճանք:

Այս կարճ ժամանակամիջոցին, բա-  
նակող քոյր-եղբայրներուն միջեւ ըս-

տեղծուեցաւ ընկերային մտերմիկ ու  
ջերմ կապ:

Բանակումի աւարտին տեղի ունե-  
ցաւ խարուկահանդէս, հովանաւորու-  
թեամբ ձեզիրէի Առաջնորդական Փո-  
խանորդ Ռուբէն Աբղ. Նալպանտեանի,  
ներկայութեամբ ծնողներու հոծ բազ-  
մութեան մը: Բանակումին ընթացքին  
սկսուածները ներկայացուցին գեղար-  
ուեստական յայտագիր, բուրգեր եւ  
մարզական խաղեր:

«Սագօ Մանուկեան»ի յիշատակին  
նուիրուած բանակումը իր յաջող աւար-



տին հասաւ «Յտեսութիւն» երգով,  
«Յառաջ նահատակ» քայլերգով եւ  
«Պահպանիչ»ով:

# Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԲԱԾ ՖՈՒԹՊՈՒԻ ՄՐՅԱՇԱՐՔ՝ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ

## Սարի Սելբոն ԳԱՄԻՇԼԻ

**Լ**արուած պայմաններու մէջ ապրող հա-  
մայնք մը կրնա՞յ բնականոն կեանք ապ-  
րիլ...: Այո՛, կրնայ, եթէ Գամիշլիի հայութեան  
կամքն ու եռանդը ունենայ:

Հ.Մ.Ը.Մ.Ի Գամիշլիի մասնաճիւղն ալ այդ կենսունակութեան մարմնաւորումն  
է: Արդարեւ, մասնաճիւղին վարչութեան եւ մարզական յանձնախումբին կազմա-  
կերպութեամբ, վերջերս տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակին նուիրուած  
Փութբոլի մրցաշարք մը, մասնակցութեամբ վեց խումբերու, որոնք բաժնուեցան  
երկու խմբակի: Առաջին խմբակին մաս կազմեցին Մասիս (Ա.), Մար Եագուպ, Ալ  
Մահապպէ, երկրորդ խմբակին՝ Մասիս (Բ.), Մար Քրիիաքըս խումբերը եւ սրիա-  
նի սկսուածները:

Մրցումները ընթացան երթ ու դարձի դրութեամբ:  
Աւարտական խաղը իրարու դէմ հանեց Մասիս (Ա.) եւ Մար Եագուպ խումբե-  
րը: Մրցումին ներկայ գտնուեցան շրջանի պատասխանատու մարմինի անդամներ,  
Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ Գամիշլիի մասնաճիւղի վարչու-  
թեան ներկայացուցիչներ եւ մարզասէր հոծ բազմութիւն մը, որուն կանչերն ու  
ծափողջոյնները խաղադաշտը թնդացուց ամբողջ մրցումին տեւողութեան, մինչեւ  
իրաւարարին վերջին սուլիչը, երբ ան 5-3 արդիւնքով ախոյեան հռչակեց Մասիս  
(Ա.) խումբը:

Յայտնենք որ ԵՌԻՆԵՍԻՅ-ի Սատա յանձնախումբը իր մասնակցութիւնը բե-  
րաւ մրցաշարքին՝ օժանդակելով անոր կազմա-  
կերպման աշխատանքին: Այս առիթով, յանձ-  
նախումբն ու վարչութիւնը երկու բաժակ նուիր-  
րեցին Մասիսի երէց վարչականներէն եղբ. Մով-  
սէս Աղամեանին եւ երէց խաղացող Նուպար  
Ղազարեանին: Տեղի ունեցաւ բաժակներու փո-  
խանակում՝ Հ.Մ.Ը.Մ.Ի վարչութեան եւ Սատա-  
յի տնօրէնութեան միջեւ:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՄԻՇԼԻԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՊՏՈՅՏԸ՝ ԹԱՐԹԱՊ ԳԻՒՂ

**Հ.**Մ.Ը.Մ.Ի Գամիշլիի  
մասնաճիւղի ըս-  
կաույր, Խորհուրդին  
կազմակերպութեամբ, Շա-  
բաթ, 21 Հոկտեմբեր 2017-ին  
փրէնկ ունեցաւ պրոյնք մը՝ դէ-  
պի Թարթապ գիւղը: Կէսօր-  
ուան ժամը 2.30-ին գայլիկնե-  
րը, սկսուածներն ու ասփիճա-  
նաւորական կազմը մեծ  
խանդավառութեամբ մեկնե-  
ցան պրոյնքին վայրը: Օր-  
ուան պատասխանատուներ  
էին քոյր Նանար Սարգիս-  
եան եւ եղբ. Բաֆֆի Օհան-  
եան:

Յայրագիրը ընդգրկեց  
դաշտային խաղեր եւ Հ.Մ.  
Ը.Մ.Ի 100-ամեակի քայլերգի  
ուսուցում: Ապա, սկսուածնե-  
րը ճաշակեցին նախընթացի  
մը պատրաստած Սկսույր.  
Խորհուրդին կողմէ: Երեկոյ-  
եան ժամը 7-ին յայրագիրը  
հասաւ իր աւարտին. ըս-  
կաույրները իրենց բարձր  
տրամադրութեամբ ճոխա-  
ցուցին մթնոլորտը կայարե-  
լով սկսուածական կանչեր եւ  
ազգային երգեր:



# ՄԿԱՌՈՒՏԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

## Թղթակից ՀԱԼԷՊ

**Ն**երկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ Սկաուտ- Խորհուրդին, Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ-Խորհուրդին, Կիրակի, 5 Նոյեմբեր 2017-ին տեղի ունեցաւ սկաուտական 2017-2018 տարեշրջանի փոխանցման արարողութիւն՝ Միխիթարեան վարժարանին մէջ:

Արարողութեան ներկայ էին «Յովհաննէս Հինդլեան» երէց-պարման միաւորէն, «Շաւարշ Քրիսեան» արի-արեւոյժ միաւորէն եւ «Գրիգոր Յակոբեան» գայլիկ-արծուիկ միաւորի Կարմիր, Կապոյտ եւ Նարնջագոյն վոհմակ երամներէն 203 քոյր-եղբայրներ:

Նախքան փոխանցման արարողութիւնը, Հալէպի մասնաճիւղի շեփորախումբին մասնակցութեամբ տեղի ունեցաւ սկաուտական տողանցք, որմէ ետք Հալէպի մասնաճիւղին կողմէ տրամադրուած Փութպոլի գնդակներ յանձնուեցան օրուան առաջին, երկրորդ եւ երրորդ Հանդիսացող միաւորներուն:

Այնուհետեւ, 32 քոյր-եղբայրներ Կար-



միր վոհմակ-երամէն փոխանցուեցան արիական շարքեր, 19 քոյր-եղբայրներ արիական շարքերէն փոխանցուեցան երէց-պարման միաւոր: Տեղի ունեցաւ Փոխ Առաջնորդի եւ Առաջնորդի աստիճաններու տուչութիւն: Ապա, Կարմիր վոհմակ-երամի նորեկ քոյր-եղբայրները արժանացան Նորագիրի վկայականի եւ ստացան փողկապներ: Երէցական շրջանը աւարտած 13 քոյր-եղբայրներ, իբրեւ աստիճանաւոր թեկնածուներ, փոխանցուեցան «Շաւարշ Քրիսեան» եւ «Գրիգոր Յակոբեան» միաւորներ:

Աւարտին, Հալէպի մասնաճիւղի Սկաուտ- Խորհուրդին անունով շնորհաւորական խօսք արտասանեց քոյր Հուրինա Պէրպէրեան-Վերտանեան: Ապա, մասնաճիւղի խմբապետ եղբ. Յովիկ Փամփալեան հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեանը, որ ողջունեց սկաուտները իրենց փոխանցման առթիւ: Ան շնորհաւորեց բոլոր Հ.Մ.Ը.Մ-ականները միութեան 99-ամեակին առիթով, անոնց մաղթելով բարի երթ՝ դէպի 100-ամեակ:



# Հ.Մ.Ը.Մ-Ի ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՇԵՓՈՐԱԽՈՒՄԲԸ ՄԱՐՔԱՄԻ ՄԷՋ

## Խաժակ ԹՈՐՈՆԹՈ

**Գ**անատայի Համադաշնակցութեան 150-ամեակին առիթով, Մարքամի քաղաքապետութիւնը ձեռնարկեց ամիսներու վրայ երկարող բազմաթիւ նախաձեռնութիւններու, որոնց շարքին՝ տողանցքի մը, մասնակցութեամբ զանազան Համայնքներու կազմակերպութիւններու, տեղացի մարզիկներու եւ Մարքամի ականաւոր դէմքերու:

Տողանցքը տեղի ունեցաւ 10 Սեպտեմբերին: Տողանցքին իր Հանդիսաւոր մասնակցութիւնը բերաւ Հ.Մ.Ը.Մ-ի Թորոնթոյի մասնաճիւղին շեփորախումբը, որ արժանացաւ ներկանե-



րու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներու բարձր գնահատանքին:

Այս առիթով, Մարքամի քաղաքապետ Ֆրանք Աքարփիթի անձամբ տեսակցեցաւ շեփորախումբի անդամներուն հետ: Ան դրուատիքով եւ երախտագիտական զգացումներով անդադարձաւ թորոնթոնէն:

Թոնհայ գաղութի աշխատանքներուն եւ Մարքամի զանազան ձեռնարկներուն Հայութեան շարունակական մասնակցութեան համար: Աքարփիթի իր հպարտութիւնը եւ ուրախութիւնը յայտնեց՝ ի տես պատանեկան շեփորախումբի գերազանց կատարումին եւ կարգապահութեան:



# ԳԱՀԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՏ»Ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

## Թղթակից ԳԱՀԻՐԷ

**Գ**ահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի սկառուտութեան խմբապետական կազմը եւ Սկառուտ. Խորհուրդը իրենց տարեկան բանակումը կազմակերպեցին Գահիրէի Էլ-Օպուր քաղաքի արուարձաններէն մէկուն մէջ:



Լիկ, արի-արենոյչ եւ խմբապետական կազմի ու Սկառուտ. Խորհուրդի անդամներ:

Բացման եւ փակման արարողութեան արարողութեան ներկայ գտնուեցան մեծ թիւով ծնողներ:

Բանակումի աւարտին, մասնակիցները իրենց տունները վերադարձան գոհունակ տրամադրութիւններով:

Բանակումի մասնակիցներու թիւն էր 41 գայլիկ-արծը:

## ՀԱՅԵՐԷՆԸ ԱՄԷՆ ԲԱՆԷ ՎԵՐ...

(ՏԻՐԱՆ Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ Ա. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ)

## Ազգային մը ՊՈՒՐՑ ՅԱՍՈՒՏ

**Շ**ուրջ տարի մը առաջ, Լիբանանի հայութիւնը կորսնցուց իր ընտիր գաւազններէն Տիրան Մ. Աղազարեանը:

Շատեր գինք ճանչցան իբրեւ «Խաչբառ Տիրանը»:

Ուրիշներ՝ իբրեւ «Ինչուրէնս Տիրանը»:  
Քիչեր միայն գիտցան հայոց պատմութեան ուսուցիչ պարոն Տիրանը:

Շատ աւելի քիչեր ճանչցան գինք իբրեւ հայերէնի ջերմ պահապան, մասնաւորաբար՝ արեւմտահայերէնի ջերմ պաշտպան եւ սրբազրիչ «խենթ Տիրան»:

Հայոց լեզուի հանդէպ սէրը պաշտամունքի հասցուցած Տիրանը ներկայ էր հայ մամուլին մէջ իբրեւ խաչբառի հեղինակ, բայց ան աւելին էր: Ներկայ էր «Մարգիկ» ամսաթերթի, «Արարատ», «Ազգակ» օրաթերթերու եւ Ազգ. Մերանոցի «Տեղեկատու»ի խմբագրական խոհանոցին մէջ, մերթ իբրեւ սրբազրիչ, բայց միշտ իբրեւ բողոքող՝ վրիպումներու եւ սխալներու դէմ:

Հայ մամուլը իրաւունք չունի լեզուական սխալներ արտօնելու, կ'ըսէր ան, որովհետեւ հայ գիրքէն աւելի ան ներկայ է հայ ժողովուրդի աւօրեային մէջ: Իսկ երբ հայ ուսուցիչի մը կամ եկեղեցականի մը կողմէ կատարուած սխալի մը ականատեսը ըլլար, կարելի էր գսպել պարոն Տիրանին բարկութիւնը:

Երբեմն կը բարկանար՝ իր բարեկամներն ու պաշտօնա-



կիցները վրդովեցնելու աստիճան... Բայց արդեօք կրկնուող սխալները կը սրբազրուէն, բարեմիտ նկատողութիւններով, կ'ըսէր ան:

Արեւմտահայերէնը ամէն բանէ առաջ եւ վեր կարգախօսին ջահը բռնած Տիրանը կը փորձէր հայոց լեզուն ազատագրել նորամուտ «հայագէտներէն»: Կը վրդովէր ու կը բարկանար՝ առողջութիւնը վնասելու աստիճան:

Հայերէնը ամէն բանէ վեր...

Տիրանը «նետող-բռնող» մարդոցմէ չէր, ինչպէս այս օրերուն շատերը, պիտի ըսէր ան: Իւրաքանչիւր սխալի համար ան հատորներ

կ'ուսումնասիրէր եւ ծանօթներու կը հարցնէր...

Կը սիրէր ստուգել...

Խաչբառը դպրոց էր իրեն համար: Խաչբառը հայ լեզուի դպրոց էր եւ յաճախ ինք կը լուծէր իր իսկ պատրաստած խաչբառը:

Կրնա՞յ ըլլալ որ սխալ մը սպրդած է...

Խաչբառէն եւ սրբազրուութիւններէն անդին, Մարդ էր Տիրանը: Թերեւս բարկացկոտ, բայց ազնիւ հոգիով եւ ծառայասէր տրամադրութեամբ լեցուն մարդ:

Ճանչցողները կը յարգէին գինք իր ծառայասիրութեան համար:

Իսկ մօտիկները կը սիրէին գինք իր բծախնդրութեան համար:

Բայց, աւա՛ղ, Տիրանը անսպասելիօրէն հեռացաւ այս կեանքէն՝ առանց բծախնդրութեան ջահը փոխանցելու իր ընկերներուն...

Հողը թեթեւ գայ վրադ, սիրելի՛ Տիրան:

# ԵՂԲ. ՄԱՐՏԻԿ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կարպիս Գապասագալեան  
ՊԵՅՐՈՒԹ



**Ա**միսներ առաջ հողին յանձնեցինք եղբ. Մարտիկ Պերպէրեանը, որ աւելի քան քառասուն տարիներ Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով իր անսակարկ ծառայութիւնները մատուցեց հայութեան:

Եղբ. Մարտիկ գիտակցօրէն եւ ծառայելու համոզումով միացած էր Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, որովհետեւ ան իր ընտանեկան յարկէն ներս թրծուած էր հայադրոշմ անշեղ հատկութեամբ եւ անսակարկ նուիրուելու կամքով:

Եղբ. Մարտիկին մօտէն ճանչցողները պիտի միանան ինծի վկայելու, թէ ան՝

- Ընդհանրապէս սակաւախօս էր:
- Կ'ատէր կեղծիքն ու շողոքորթութիւնը:
- Ամէնէն դժուարին պայմաններուն մէջ իսկ դէմքին ժպիտը անպակաս էր:
- Անդու կը հետապնէր իրեն վստահուած պարտականութիւնները եւ լաւագոյնս կը յաջողցնէր զանոնք:
- Երջանիկ կը զգար իր նմանները ուրախացնելով:

Եղբ. Մարտիկին բարեմասնութիւններուն շարքը կարելի է երկարել, բայց պիտի ուզենք ընդգծել անոր ծառայութեան եւ նուիրումի ոգին:

Եղբ. Մարտիկին մտերիմները զինք մկրտած էին «Ֆանֆար Մարտիկ» անունով: Պատահական անուն մը էր «Ֆանֆար»ը, որ միաձուլուած էր իր անունին: Ֆանֆարը եղբ. Մարտիկին ամբողջ էութիւնն էր:

Ֆանֆարի պատասխանատուութիւնը եղբ. Մարտիկին վստահուեցաւ լիբանանեան պատերազմի դժնդակ օրերուն: Դժուար հանգրուան էր, բայց օրուան պատասխանատու մարմինները լաւ գիտէին, որ եղբ. Մարտիկը Ֆանֆարի հիմնական սիւնն էր, եւ այդպէս ալ ան երկար տարիներ իրեն վստահուած ծանր լուծը հաճոյքով շալկեց իր ուսերուն վրայ, նուազախումբի տղոց հետ գործեց համերաշխութեամբ եւ անոնց համար եղաւ մեծ եղբայր, գերադասներուն նկատմամբ՝ միշտ յարգալիր:

Մէկ խօսքով, եղբ. Մարտիկը ծառայեց ու նուիրուեցաւ առանց փողի ու թմբուկի:

Եղբ. Մարտիկին սրտի զարկերը կանգ առին կանխահաս կերպով, բայց Ֆանֆարի թմբուկները կը շարունակէն ու պիտի շարունակէն հնչել շնորհիւ եղբ. Մարտիկի վստակին ու Մարտիկներու գոհողութեան:

Հողը թեթեւ գայ վրադ, սիրելի՛ Մարտիկ:

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի, 16 Նոյեմբեր 2017-ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 99-րդ տարեդարձին օրը, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ միութեան 100-ամեակի կեդրոնական մարմինին խառն նիստը, որ ամիսներու քննարկումներէ ետք վերջնականացուց 2018 տարուան ընթացքին տեղի ունենալիք յոբելեանական կեդրոնական ձեռնարկներուն շարքը:

Նիստին ընթացքին որոշուեցաւ, որ 19-29 Յուլիս 2018 երկարող օրերը հռչակուին Հ.Մ.Ը.Մ.ի շաբաթ եւ այս առիթով Հայաստանի մէջ իրագործուին հետեւեալ ձեռնարկները.- համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ ընդհանուր բանակումի բացման հանդիսատար տողանցք Երեւանի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր երրորդութեան բարձրաբանդակներու զետեղում Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Երեւանի կեդրոնի մուտքին, նահատակ Հ.Մ.Ը.Մ.ականներու յարգանքի տուրք Եռաբլուրի մէջ եւ նահացած Հ.Մ.Ը.Մ.ականներու հոգեհանգստեան պաշտօն, Վահան Չերազի արձանի կառուցում եւ զետեղում Գիւմրիի մէջ, պաշտօնական հանդիսութիւն Օփերայի սրահին մէջ, ցուցահանդէս-գիտաժողով, 100-ամեակի նամականիշներու շնորհահանդէս եւ 100-ամեակի ճաշկերոյթ-պարահանդէս:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ միութեան 100-ամեակի կեդրոնական մարմինին խառն նիստը քննեց նաեւ այս առիթով յառաջացուած հինգ յանձնախումբերու (քարոզչական, տնտեսական, ընկերային, գիտաժողովի, գործադիր) աշխատանքի ընդհանուր ուղղութիւնները եւ համապատասխան թելադրանքներ կատարեց յանձնախումբերու մօտ իր ներկայացուցիչներուն, որպէսզի 100-ամեակի տարւան առաջին օրէն անոնք աշխատանքի լծուին յոբելեանական տարին համահայկական շուրջով եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական տարողութեամբ նշելու համար:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ՄԱՀԱՉԳ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան նախկին անդամ, «Արժանեաց» շքանշանակիր՝

**ԵՂԲ. ՅԱԿՈԲ ՅԱՄԱՄՃԵԱՆԻ**

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 7 Նոյեմբեր 2017-ին, Սոնթրալ, Գանատա:

Հ.Մ.Ը.Մ.Ի  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Գ. ԼԻԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ...

Շարունակուած Բ. կողքէն

Լիազումարը քննարկեց ու արծարծեց համա-Հ.Մ.-Ը.Մ.ական 11-րդ բանակումի մանրամասնութիւնները: Բանակումը տեղի պիտի ունենայ 19-28 Յուլիս 2018-ին, Բիւրականի մէջ, Հայաստան: Բանակումը նուիրուած է միութեան եւ Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակներուն ու կը նախատեսուի 1000 եւ ատելի տարագաւորներու մասնակցութիւն: Կեդրոնական Վարչութիւնը քննարկեց նաեւ Բիւրականի բանակավայրին մէջ իրագործելի շինարարութիւններու պարագան՝ աննախընթաց մեծ թիով մասնակիցներու հիւրընկալութեան համար:

Լիազումարը անդրադարձաւ նաեւ միութեան շրջաններուն առնչուող մանրամասնութիւններուն եւ անհրաժեշտ որոշումներ կայացուց այդ ուղղութեամբ: Ուրախութեամբ անդրադարձաւ նոր մասնաճիւղեր ու միատորմեր հիմնադրելու կարելիութիւններուն, որոնք պիտի իրագործուին 2018 տարուան ընթացքին:

Լիազումարը մանրամասնօրէն քննարկեց միութեան 100-ամեակին նուիրուած՝ Յուլիս 2017-ին կայացած համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերը, որոնց մասնակցեցան 1250 մարզիկներ ու պատասխանատուներ: Կեդրոնական Վարչութիւնը հաստատեց, որ հայկական իրականութեան ու պատմութեան մէջ ոսկեայ տառերով արձանագրելի է կատարուած իրագործումը՝ թէ՛ կազմակերպական եւ թէ՛ մասնակցութեան իմաստով: Քննարկուեցաւ մարզական պատասխանատուներու յատուկ համագումարի կայացման առաջարկը, որ իբրեւ անհրաժեշտութիւն, պիտի փոխանցուի յառաջիկայ Կեդրոնական Վարչութեան:

Լիազումարը քննարկեց եւ վաւերացուց միութեան պատմութեան մէջ առաջին անգամը ըլլալով գումարուելիք «Երիտասարդական համագումար»ը, որ ծրագրուած է կայացնել Մարտ 2019-ին: Սոյն համագումարը կը միտի լսել միութեան շարքերուն մէջ գործած ու գործող երիտասարդները, քննարկել սպազայի նոր ծրագիրներ եւ առիթ տալ, որ ո՛չ տարագաւոր ու ո՛չ մարզիկ երիտասարդները իրենց ներդրումը ունենան միութեան ծրագիրներուն եւ աշխատանքներուն մէջ:



Լիազումարը ծանրացաւ անձեռնմխելի հիմնադրամ մը ըստեղծելու կարելիութիւններուն վրայ: Առաջարկը խորապէս քննել է անոր զանազան կարելիութիւնները ստուգելէ ետք, որոշուեցաւ միութեան 100-ամեակին առիթով ստեղծել Հ.Մ.Ը.Մ.ի անձեռնմխելի հիմնադրամը (Endowment fund), Միացեալ Նահանգներու մէջ:

Լիազումարը ուրախութեամբ անդրադարձաւ միութեան նոր կայքին ([www.homenetmen.org](http://www.homenetmen.org)) աշխատանքներուն, ինչպէս նաեւ անոր թարգմանական բաժիններուն: Արհեստագիտական տեղեկատուութեանց նորութիւններուն հետ քայլ պահելու առաջարկներ ու ծրագիրներ վաւերացնելով, Կեդրոնական Վարչութիւնը նոր թափ պիտի տայ խիստ անհրաժեշտ յառաջխաղացքներուն: Շեշտը դրուեցաւ ընկերային ցանցերու միջոցով Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը ծանօթացնելու աշխատանքի արդիւնատուութեան եւ գայն շարունակելու կարելիութեան վրայ:

Կեդրոնական Վարչութիւնը գնահատանքով անդրադարձաւ «Մարզիկ» պաշտօնաթերթի աշխատանքներուն, ինչպէս նաեւ անոր առցանց տեղադրած լուրերուն ստեղծած հետաքրքրութեան: Քննարկուեցան պաշտօնաթերթին դիմագրուած դժուարութիւնները, ինչպէս նաեւ արդիականացման կարելիութիւնները:

Լիազումարը քննարկեց մօտիկ սպազային իրագործելի Հ.Մ.Ը.Մ.ական իրերու առցանց վաճառքի (online shop) մանրամասնութիւնները եւ վաւերացուց զանոնք:

Իր լիազումարին ժամանակ, Կեդրոնական Վարչութիւնը ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան 300 նորագիրներու երդման արարողութեան, որ կու գայ ատելի եւս հարստացնելու եւ ամրապնդելու Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքները Հայաստանի մէջ:

Մարտին, Կեդրոնական Վարչութիւնը որոշեց կոչ ուղղել միութեան շարքերուն ու համակիրներուն, որպէսզի խիստ շարքերով 19-29 Յուլիս 2018-ին ներկայ գտնուին Հայաստան, արժանավայել կերպով տօնակատարելու մէկ դարեայ միութեան 100-ամեակը:

«ՊԱՏՈՒՄԲԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ՝ ՅԱՂԾԱԿԱՆ ԱՊԱԳԱՅ»:



Հ.Ս.Ը.Ս. 1918-2018  
ՄԱՍԻՆԻՆ ԱՆՅԵԱԼԵՆ ՅԱԹՈՒՆՆԵՐ ԱՄԱՐՅԱՆ

100  
HOMENETMEN  
2018  
ՍՈՒՐԻՎ

Օգոստոս 08

Տ	Կ	Պ	Յ	Շ	Ո
1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30
31					

Սեպտեմբեր 09

Տ	Կ	Պ	Յ	Շ	Ո
1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30
31					

Քոկտեմբեր 10

Տ	Կ	Պ	Յ	Շ	Ո
1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30
31					

Մարտ 03

Տ	Կ	Պ	Յ	Շ	Ո
1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30
31					

Փետրվար 01

Տ	Կ	Պ	Յ	Շ	Ո
1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30
31					

Մայիս 05

Տ	Կ	Պ	Յ	Շ	Ո
1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30
31					

Մայիս 04

Տ	Կ	Պ	Յ	Շ	Ո
1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30
31					